



ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԸ ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

Լ. Մ.

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԸ ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

(Հոդվածների ժողովածու՝ նվիրված Ղևոնդ Ալիշանի
ծննդյան 200-ամյա հոբելյանին)

Երևան
Լուսակն
2020

ՀՏԴ
ԳՄԴ

**Տպագրվում է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական
ֆակուլտետի խորհրդի երաշխավորությամբ:**

Խմբագիր՝ Բանասիրական գիտությունների թեկնածու
Մայա Գրիգորյան

Ղևոնդ Ալիշան: Հոդվածների ժողովածու՝ նվիրված
Ղևոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյա հոբելյանին.- Եր.:
Լուսակն, 2020.- 148 էջ:

*Ժողովածուն ընդգրկում է Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական
ֆակուլտետի և Արցախի պետական համալսարանի մի խումբ դասախոս-
ների հոդվածները՝ նվիրված Վենետիկի Մխիթարյան միաբանության ան-
մահ անուններից մեկի՝ Ղևոնդ Ալիշանի ստեղծագործական ժառանգու-
թյան մի շարք խնդիրներին:*

*Ժողովածուն օգտակար է հայ գրականության և հայոց լեզվի ուսուցիչ-
ներին, բանասիրական ֆակուլտետների ուսանողներին, Ղևոնդ Ալիշանի
ստեղծագործությամբ հետաքրքրվողներին:*

ՀՏԴ
ԳՄԴ

ISBN 9789939882697

© Լուսակն, 2020

Միբով

նվիրվում է Ղևոնդ Ալիշանի
ծննդյան 200-ամյա հոբելյանին

ՆԱԽԱԲԱՆ

Ղևոնդ Ալիշանը (1820-1901) Մխիթար Սեբաստացու աստվածապարզն լուսավորչական առաքելության հանճարեղ շարունակողն էր: Նա պատմաբան-հայագետ էր, բանաստեղծ, թարգմանիչ, բանասեր, բանագետ-աստվածաբան, աշխարհագրագետ: 1849-ից մինչև 1851-ը Մխիթարյան միաբանության կարևորագույն պարբերականի՝ «Բազմավեպ»-ի գլխավոր խմբագիրն էր: Իր կենդանության օրոք բազմաթիվ կոթողային աշխատությունների համար արժանացել էր միջազգային ճանաչման: Ֆրանսիայի ակադեմիայի Պատվո լեգեոնի դափնեկիր էր, Իտալիայի, Մոսկվայի, Ս.Պետերբուրգի Հնագիտական ընկերությունների, Վենետիկի ու Ենայի փիլիսոփայական ակադեմիաների անդամ: Տիրապետում էր դասական ու եվրոպական հիմնական լեզուներին: Հայկական ձեռագրերի գանձերի հարստությունը նրա ջանքերի շնորհիվ հարստացրել են հայագիտությունը և համընդհանուր գիտությունը:

Պարզապես անհնար է, որ որևէ մեկն ըստ ամենայնի հետազոտի ու ներկայացնի Ալիշանի թողած ողջ մատենագրական ժառանգությունը, որի համառոտ մատենագիտությունը առանձին գրքով կոլ տպագրել են Մխիթարյանները՝ իրավացիորեն այն խորագրելով որպես «Ալիշանեան մատենադարան»:

Ալիշանը բազմագիտակ էր բառի ճշգրիտ նշանակությամբ: Նա խորքով ծանոթ էր համաշխարհային պատմությանն ու գրականությանը, մարդկության դարավոր ընթացքին: Թեպետ երբեք չի եղել Հայաստանում, սակայն իր երկերում ամենատես աչքով ներկայացնում է Մեծ Հայքի գլխավոր նահանգները, ինչպես նաև Գիլիկյան Հայաստանը: Ապշեցուցիչ են պատմական բնակավայրերի նրա ճշգրիտ նկարագրերը: Մեծ հայրենասերն ու մարդասերը, դեռ շատ երիտասարդ, ուներ իմաստուն ծերի գիտելիքներ ու որպես հավերժ ուսուցիչ հիշեցնում է եկող հայ սերունդներին, որ նրանք սերում են Նոյից, քաջ Վարդանից ու պետք է միշտ հիշեն, որ շառավիղներն են Տիգրան Մեծի ու Տրդատ Մեծի՝ արքաներ, որոնց ժամանակ Հայաստանն ապրում էր

բարեկեցիկ կյանքով ու հզոր էր: Նա նաև առանձին ուսումնասիրություն ունի՝ նվիրված Արցախին:

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, մասնավորապես հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը Արցախի պետական համալսարանի հետ կազմակերպում են միացյալ գիտաժողով, որը տեղի է ունենալու Ալիշանի համար այնքան սիրելի Գանձասարի վանքի մատենադարանում:

Այս ժողովածուն ներառում է երկու բուհերի դասախոսների հոդվածները, որոնք ներկայացնում են Ալիշանի ծով ժառանգության փոքրիկ, սակայն կարևոր կաթիլները:

Ժողովածուն երախտագիտության համեստ արտահայտություն է՝ ուղղված հանճարեղ Ալիշանին և նրա ծննդյան 200-ամյա հոբելյանին:

Կարծում եմ՝ Ալիշանի օրհնանքը և Գանձասարի՝ հերոսական գործեր տեսած վանքը օրհնություն կբերեն Հայաստանի և Արցախի գիտական կյանքը մշտապես ծաղկուն տեսնելու սրբազան առաքելությանը:

Պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյան

ПРЕДИСЛОВИЕ

Гевонд Алишан (1820-1901 гг.) был гениальным продолжателем данной Богом просветительской миссии Мхитара Себасти. Он был историком-арменоведом, поэтом, переводчиком, филологом, фольклористом-богословом и географом. С 1849 по 1851 год он был главным редактором важнейшего периодического издания «Базмавеп» Мхитаристской Конгрегации. Еще при жизни он удостоился международного признания за многочисленные монументальные труды. Он был кавалером Почетного Легиона Французской Академии, членом Итальянского, Московского, Санкт-Петербургского археологических обществ, Венецианской и Иенской философских Академий. Алишан владел основными классическими и европейскими языками. Благодаря его усилиям сокровища армянских рукописей обогатили арменоведение и всеобщую науку.

Просто невозможно, чтобы кто-то смог полностью исследовать и представить всё литературоведческое наследие, оставленное Алишаном, краткая библиография которого была опубликована отдельной брошюрой Мхитаристами, по праву озаглавив её «Алишанским матенадараном».

Алишан был энциклопедистом в полном смысле этого слова. Он был прекрасно знаком с мировой историей и литературой, с многовековым путём, пройденным человечеством. Хотя он никогда не бывал в Армении, в своих трудах он всевидящим оком представляет основные провинции Великой Армении и Киликийскую Армению. Поразительны его точные описания исторических памятников.

Великий патриот и гуманист, будучи еще очень молодым, Алишан обладал знаниями мудрого старца и, как вечный учитель, напоминал грядущим поколениям армян, что они из поколения Ноя и Храброго Вардана, и должны всегда помнить, что они потомки Тиграна Великого и Трдата Великого – царей, во времена которых Армения

жила процветающей жизнью и была могущественной. У него есть также отдельное исследование, посвященное Арцаху.

Филологический факультет Армянского Государственного Педагогического Университета им. Х. Абовяна, в частности Кафедра древней и средневековой армянской литературы и методики ее преподавания, совместно с Арцахским Государственным Университетом проводят объединенную конференцию в Матенадаране Гандзасарского монастыря, столь любимого Алишаном.

В этом сборнике представлены статьи преподавателей двух университетов, в которых представлены небольшие, но важные капли необъятного моря наследия Алишана.

Сборник представляет собой скромное выражение признательности гению Алишана к его 200-летию юбилею.

Я верю, что благословения Алишана и видевшего героические деяния Гандзасарского монастыря принесут доброе напутствие священной миссии процветания научной жизни Армении и Арцаха.

Профессор Аэлига Долуханян

FOREWORD

Ghevond Alishan (1820-1901) was a brilliant follower of the God-given enlightenment mission of Mkhitar Sebastatsi. He was an historian-armenologist, poet, translator, philologist, folklorist, theologian and geographer. From 1849 to 1851 he was the chief editor of the most important periodical *Bazmavep* of the Mkhitarist Congregation. During his lifetime, he won international recognition for numerous monumental works. He was a chevalier of the Legion of Honor of the French Academy, a member of the Italian, Moscow and St. Petersburg archaeological societies, the Venetian and Iena Philosophical Academies. Alishan knew the main classical and European languages. Thanks to his efforts, the treasures of Armenian manuscripts enriched armenology and general science.

It is simply impossible for anyone to fully explore and present the entire literary heritage left by Alishan, a brief bibliography of which was published in a separate booklet by the Mkhitarists, rightfully entitled as *Alishan's Matenadaran*. Alishan was an encyclopedist in the full sense of the word. He was well acquainted with world history and literature, with the centuries-old path covered by mankind. Although he has never been to Armenia, in his writings he represents with all-seeing eye the main provinces of Greater Armenia and Cilician Armenia. His accurate descriptions of historical monuments are striking.

Being a great patriot and humanist, still very young, Alishan possessed the knowledge of a wise old man and, like an eternal teacher, reminded future generations of Armenians that they were from the generation of Noah and the Brave Vardan, and they should always remember that they are the descendants of Tigran the Great and Tiridat the Great, kings, during whose reign Armenia lived a prosperous life and was powerful. He also has a separate study devoted to Artsakh.

The Faculty of Philology of Armenian State Pedagogical University after K. Abovian, in particular, the Department of Ancient and Medieval Armenian Literature and its teaching methods, jointly with Artsakh State

University hold a conference in the Matenadaran of the Gandzasar Monastery, so beloved by Alishan.

This collection contains articles by professors from both universities that present small but important drops of the immense sea of Alishan's heritage

The collection is a modest expression of gratitude to the genius of Alishan on the occasion of his 200th anniversary of birth.

I believe that the blessings of Alishan and the Gandzasar Monastery, which has a history of heroic deeds, will bring benediction to the holy mission of the flourishing of the scientific life of Armenia and Artsakh.

Professor Aelita Dolukhanyan



ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
հայ հին և միջնադարյան
գրականության և նրա դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի վարիչ,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր*

ԶԱՓԱԾՈՂ ՊԱՏՄԱԿԱՆ ՔԵՐԹՎԱԾՆԵՐԸ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ «ՀԱՅԱՊԱՏՈՒՄ» ՀԱՏՈՐՈՒՄ

Ալիշանի «Հայապատում» ստվարածավալ ու մեծադիր աշխատությունը լույս է տեսել 1901-ին Վենետիկում: Այն հեղինակի վերջին գիրքն է, որը սակայն ստեղծվել է ողջ գիտական կյանքի ընթացքում: «Հայապատում»-ը հայ ժողովրդի պատմությունն է՝ սկսած անհիշելի ժամանակներից մինչև XVII դարը, մինչև հայ հոգևոր կյանքի վերանորոգումն ու վերածնունդը Սյունյաց Մեծ անապատում:

«Հայապատում»-ը բաղկացած է երկու մասից: Առաջին մասում հայ պատմիչները խոսում են Հայաստանի մասին, նրանց զուգակից՝ Հայաստանի մասին վկայում են նաև օտարալեզու պատմիչները: Երկրորդ մասում, հայ պատմիչների հաղորդած փաստերին զուգահեռ, գիտնականը ներկայացնում է նաև չափածո գրված պատմական տեղեկություններ պարունակող քերթվածներ, որոնք պատկանում են շատ հայտնի հայ բանաստեղծներին՝ ինչպես Ներսես Շնորհալի, Սմբատ Գունդստարբ, Խաչատուր Կեչառեցի, Հովհաննես Թլկուրանցի, Ներսես Մոկացի, այնպես էլ ոչ այնքան հայտնի: Գիրքը պատկերազարդ է, նրանում կան անտիպ վիմագիր արձանագրություններ, պատմական մեծ արժեք ներկայացնող հիշատակարաններ: Գրքի բացառիկ արժեքներից են նաև փաստահարուստ ծանոթագրությունները, որոնց հաղորդած

մեծաքանակ փաստերն առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ:

«Հայապատում»-ի չափածո հատվածները սկսվում են X դարից ու հասնում մինչև XVII դար:

Տասներորդ դարից է գալիս ռամկորեն ասված մի տաղ, որը հոգևոր բովանդակություն ունի, սակայն հետաքրքիր պատում է և ունի ճանաչողական արժեք: Այն կոչվում է «Տաղ գեցիկ եւ նազելի ի վերայ Սասնցի տանտիրոջն, որ ընդ բանիւ եղել ի քահանայէն իւրմէ և յետո ի Հռոմ արձակեցաւ»: Սա անեծքի ու հրաշագործության մասին է: Մի տանուտեր, որն անհավատ էր, հալածում է իր աղքատ ու անօգնական քահանային: Վերջինս անիծում է տանուտերին և, վերցրած իր ընտանիքը, հեռանում օտար երկիր, ուր վախճանվում է ու թաղվում օտար գերեզմանում: Իսկ քահանայի անեծքն ու նզովքը կաչում են տանուտերին, ով գնում է Հռոմ, այցելում Հիսուսի առաքյալներ Պետրոսի ու Պողոսի գերեզմաններին, հանդիպում Հռոմի պապին, խնդրում ազատել իրեն քահանայի անեծքից: Պապը հրահանգում է, որ տանուտերին եկեղեցում շղթայեն, ու եթե նա անկեղծ է մեղա գալիս, ապա շղթաները կփշրվեն, ու անեծքը կվերանա: Այդպես էլ լինում է: Նա գիշերը, որպես տեսիլ, հանդիպում է քահանային ու Հիսուսին և ստանում մեղքերի թողություն:¹

Միջնադարում խիստ տարածված էին այսպիսի հրաշապատում չափածո տաղերն ու զրույցները:

XII դարը ներկայացնող նյութերի մեջ է Ներսես Շնորհալու 1145-ին գրված «Ողբ Եղեսիոյ» պատմական ծավալուն քերթվածը: Սա մեր օրերում շատ հանրահայտ գործ է և ակնհայտ է, թե որքան մեծ ազդեցություն է թողել հետագա պատմական ողբերի վրա: Կարևորը «Հայապատում»-ում Շնորհալու «Ողբին» կցված ծանոթագրություններն են, որոնցում կան բացառիկ փաստեր: Ալիշանը Շնորհալու «Ողբ»-ն անվանում է ողբախառն պատմություն՝ կարևորելով բանաստեղծական վսեմ էպիկականություն ունեցող երկի պատմական արժեքը: Նա

¹ Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 300:

նան հիշեցնում է, որ նման փորձության ենթարկվել է «մեր աշխարհահռչակ Անի քաղաքն»:² Նշում է, թե այդ «Ողբ»-ն արդեն թարգմանվել է ֆրանսերեն՝ չասելով, թե թարգմանիչը նշանավոր հայագետ Էդուարդ Դյուլոբիեն է:³ Թեպետ Ալիշանը չի եղել Եդեսիայում, սակայն նրան հայտնի է, որ հին քաղաքակրթության այդ բնօրրաններից մեկն ունեցել է ապրելու համար բոլոր անհրաժեշտ պայմանները՝ մեղմ կլիմա, առատ բուսականություն, քաղաքում հոսող ջրեր, որոնք պիտանի էին և՛ խմելու, և՛ ոռոգելու համար: Քաղաքը բնակեցված էր քրիստոնյաներով՝ հայեր, լատինացիներ, հույներ ու ասորիներ, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր եպիսկոպոսական թեմը:⁴ «Ողբ Եդեսիոյ» քերթվածի պատվիրատուն Ն. Շնորհալու եղբորորդի Ապիրատն էր.

Ջոր պահանջեաց տարփմամբ սիրոյ

Եղբորորդին իմ ըստ մարմնոյ,

Մանուկ տըղայ գոլով տիոյ

Եւ կատարեալ յիմաստ հոգւոյ:⁵

Այս հատվածի ծանոթագրությունը հույժ հետաքրքիր է: Ալիշանն ասում է, թե Շնորհալու եղբայրը Շահնշահն էր, որի որդին՝ Ապիրատը, հմուտ էր զինվորական գործում ու Եդեսիայի գրավման ժամանակ 22 տարեկան էր, հետո այդ զինվորականը դառնում է Հայոց Գրիգոր Զ կաթողիկոսը:⁶ Գրիգոր Զ Ապիրատը (1122-1203) 1198 թ. հունվարի 6-ին հայկական ծեսով թագադրել է Կիլիկյան Հայաստանի Լևոն Երկրորդ Մեծագործ թագավորին:⁷

XII դարում է գրված մի ողբ, որի հեղինակն է Խաչատուր անունով հոգևորականը, որն իր ուսուցչի՝ Տարսունի եպիսկոպոսապետ Ներսեսին ձոնել է սրտառուչ դամբանական. այն կոչվում է «Ողբք ի

² Նույն տեղում, էջ 363:

³ Ed. Dulaurier, Recueil des Historiens des croisades, documents arméniennes, t. 1, Paris, 1969.

⁴ Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 366-367:

⁵ Նույն տեղում, էջ 368:

⁶ Նույն տեղում:

⁷ Ամենայն հայոց կաթողիկոսներ, Խմբ.՝ Պետրոս Հովհաննիսյանի, Երևան, 2001, էջ 138:

տէր Ներսէս արհիմն⁸ Տաքսոնի, Ասացեալ Խաչատուր պաշտօնէի նորուն աշակերտի»։ Ողբն ունի շատ կրկնակներ ու որոշակի է Գրիգոր Նարեկացու «Մատենանոց երգութեան» ազդեցութիւնը.

Ոչ այլ պայծառ Քարոզն ասուի,
Ոչ այլ նըման քեզ տէր գըտանի,
Ոչ ի քո բանք այլ ոք տոչորի,
Ոչ այլ հսկող թելք քո տարածի,
Ոչ այն անքուն ակըն բոլորի...⁹

Կարևոր են այն համեմատությունները, որոնցով բնորոշվում է Ներսէս եպիսկոպոսապետը։ Նա վարքով անբիծ է, ինչպես Մովսէս մարգարեն, սրտով ողորմած, ինչպես Պողոս առաքյալը և աղքատասեր է, ինչպես Հիսուսը.

Վարուքն անբիծ նըման Մովսէսի,
Սրտին ողորմ նըման Պողոսի,
Աղքատասէր նըման Յիսուսի։¹⁰

Սմբատ Գունդստաբլը (1208-1276) հայ գրականության և պատմության մեջ նշանավոր անուն է։ Նա Կիլիկիայի Հէթում Առաջին արքայի հարազատ եղբայրն էր, որը բացի իր տարեգրությունից, դատաստանագրքից, կատարել է թարգմանություններ ֆրանսերենից։ Դրանցից նշանավորը Անտիոքի օրենսգիրքն է, որի ֆրանսերեն բնագիրը կորած էր, և 1876-ին այն հայերենից վերստին ֆրանսերեն է թարգմանել Ղևոնդ Ալիշանը։ Իր գրած երկերի վերջում Սմբատ Գունդստաբլը միշտ թողնում էր չափածո հիշատակարաններ։ Ալիշանի համար Սմբատ սպարապետը սիրելի պատմական անձնավորությունն է։ «Հայապատում» գրքում նա գետեղել է մի հիշատակագիր, որը վերնագրված է «Արշաւանք եգիպտացոց ի Կիլիկիա և մահ Սմբատայ Գունդստաբլի» ու դրա վերջում գետեղել է Սմբատ Գունդստաբլի ինքնագիր հիշատակարաններից մեկը։ Ծանոթագրությունից իմանում

⁸ արհ- նշանակում է եպիսկոպոսապետ։ Տե՛ս Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հտ. I. Ա-Կ, Վենետիկ, 1836, էջ 364:

⁹ Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 435:

¹⁰ Նույն տեղում:

ենք, որ Սմբատ սպարապետը XIII դարի հայ իրականության ամենից նշանավոր դեմքերից էր և աչքի է ընկել իր քաջությամբ: Տպագրված հիշատակարանը դրվել է Արիստոտելի գրվածքի վերջում: Հիշատակարանում Սմբատն իրեն անվանում է արի՝ արիական ազգից:

Որպես յԱրի՝ ազգէն Արիս,

Կամ ի միոյ նոյն իսկ զարմիս:¹¹

Հիշատակարանում նա խոսում է Ալեքսանդր Մակեդոնացու՝ իր ուսուցչի՝ Արիստոտելի հետ ունեցած նամակագրական կապի մասին: Նշվում է նաև, որ ինքը Պապեռոնի տերն է, Հեթում թագավորի եղբայրը, Հայոց Բանակի սպարապետն է ու իր անառիկ դոյակի անունը դրել է Սմբատակալ:

Ես մեղաւորս և ողբալիս

Տեր և պարոն Պապեռոնիս,

Եղբայր Հեթմոյ թագաւորիս

Եւ սպայապետ Հայոց գնդիս,

Նոյն և շինող ի բնէ նորոյ

Զանառ դըղեակն անմարտելիս,

Որ ըստ իմոյ անուանս եղի

Սմբատակալ քաջ ամբոցիս:¹²

Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմություն»-ից է քաղված մի ուշագրավ հատված, որը բացահայտում է Լևոն Երկրորդի հեռակա ձևով Տաթևի վանքի անդամ դառնալը և այդ վանքին նվիրատվություններ ուղարկելը: «Հայապատում»-ի այս հատվածը հավաստում է, թե որքան կրթված են եղել Գիլիկիայի հայ արքաները և արքունիքն ընդհանրապես:

Հարգված ու պատվական Սյունիքի եպիսկոպոսը ուխտագնացություն է կատարում Երուսաղեմի սրբատեղիներին: Վերադարձին այցելում է Գիլիկիայի արքա Լևոն Երկրորդին, որը շատ է խանդավառվում այդ հանդիպումից ու Տաթևի սուրբ եկեղեցու համար ուղարկում է բեմի հանդերձանք բյուզանդական ընտիր մետաքսից՝ աննման զարդերով,

¹¹ Նույն տեղում, էջ 481:

¹² Նույն տեղում:

ոսկյա խաչ՝ զարդարված թանկարժեք քարերով, մաքուր արծաթից սկիհներ և այլ նվերներ ու իր ձեռքով գրում է հետևյալ հիշատակարանը.

Մարդիկ, որ հոգու աչքով անվախճան կյանքի նայեցին,
Քանի դեռ մարմնով էին, հոգու փրկության ձգտեցին:
Ուստի և ես՝ Լևոնս, թագավորս ազգի հայության,
Հետևողս ուղիղ հավատքին սուրբ երրորդության,
Ուզեցի այս աստվածընկալ ուխտին լինել միաբան,
Որ նրանով հաղորդ լինեմ այստեղի ամեն բարության...

Լևոն Երկրորդը չափածո խորիմաստ տողերով հիշում է իր նախնիներին, ինչպես նաև իրենից հետո եկող որդիներին ու զարմիկներին. «Երկար կյանքով, բարի օրով այս աշխարհում թող մնան».¹³ Մա հիշատակարան-օրհնություն է, որը ներկայացնում է հայրենասեր հայ արքայի երազանքը իր պաշտելի ազգի ապագա սերունդների համար:

Պատմական եզակի փաստեր կան Հայոց կաթողիկոս Կոստանդին Բ Կատուկեցու (1286-1289) վերաբերյալ՝ «Կոստանդին Բ կաթողիկոսի պահարան նշխարաց սրբոց ի վանս Սկեւոյ» տաղում: Ծանոթագրությունից իմանում ենք, որ Կոստանդին Բ-ն հրաժարվել է կաթողիկոսի պաշտոնից, սակայն 17 տարի հետո նրան նորից են հրավիրել այդ պաշտոնին, և նա վերստին կաթողիկոս է եղել 1307-ից մինչև մահը՝ 1323 թ.:¹⁴ Հետաքրքիր ողիսական է ունեցել նաև կաթողիկոսի նշխարների տուփը (պահարան), որը ցարդ գոյություն ունի: Սկզբում այն տարվել է Բուայիա, հետո ընկել է Դոմինիկյան կրոնավորների ձեռքը: 1880-ին մի ռուս հարուստ հնասեր գնել է այն և ուրիշ թանկարժեք իրերի հետ վաճառել ռուսական ցարին՝ թանգարանի մեջ պահելու համար:¹⁵ Ըստ երևույթին Կոստանդին Բ կաթողիկոսի նշխարներ պահելու տուփին վերագրվել է հրաշագործ հատկություն, եթե մարդը ձեռքով հպվեր նրան.

Որք տեսանեք գայս Պահարան
Հըպիք ի Սուրբս, որ աստ եղան,

¹³ Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 484: Ստ. Օրբելյան, Մյունիքի պատմություն, թարգմ., ներածութ. և ծանոթագր.՝ Ա.Ա.Աբրահամյանի, Երևան, 1986, էջ 345:

¹⁴ Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 498:

¹⁵ Նույն տեղում:

Զի հայցուածովք ձեր մաղթական,
Խնդրուածաւքն աղերսական...¹⁶

Երկու ողբեր նվիրած են եգիպտացիների կողմից Անտիոքը գրավելուն: 1288-ին նրանք գրավում են Տրիպոլին, 1294-ին՝ Աքքան: Քրիստոնյաների ձեռքին մնում են միայն Կիպրոսը և Ռուբինյան հայ թագավորությունը:¹⁷

Կիլիկյան Հայաստանը շարունակում է հույսեր կապել խաչակիրների հետ: Դրա մասին է պատմում «Վասն Առմանն Երուսաղեմի և գալստեան խաչակրաց» հիշատակարանը: Նրանում խոսվում է խաչակիրներին առաջնորդող Ֆրեդերիկ Շիկամորուսի, Ֆիլիպ Գեղեցիկի՝ Ֆրանսիայից, Անգլիայից՝ Էդուարդ Ա թագավորի մասին: Միևիթար անունով գրիչը, ով Գլաձորի վանքում է արտագրել ձեռագիրը, հիշում է հռչակավոր Եսայի վարդապետին, Սյունիքի տեր Տարասայիձ իշխանին, միաժամանակ նշում, թե ձեռագիրն արտագրել է ծանր պայմաններում. եղել է ցուրտ, տաք ուտելիք չի ունեցել, պակասել են թուղթն ու թանաքը:¹⁸

Ալիշանը, պատմական արժեքի առումով, ուշագրավ է համարել XIV դարի բանաստեղծ, հոգևոր նշանավոր գործիչ Խաչատուր Կեչառեցու «Ողբ վասն աւերման տանս Արեւելեան» քերթվածը, որը գաղափարական հագեցվածությամբ հայ միջնադարյան հայրենասիրական քնարերգության լավագույն նմուշներից է: Գրողը ծանոթ է հայ գրականության մեջ եղած ողբերի ավանդական հոգեբանությանը, որ արդյունք էր օտարներից նվաճված հայ ժողովրդի անմխիթար վիճակի: Նա անդրադառնում է իր ժամանակի հրատապ հարցերին, քննում է հայ ժողովրդի համար բախտորոշ իրադարձություններ, դեպքեր, ողբում, որ հայերը զրկվել են իշխանական դասից ու նրա սերունդներից.

Մեռան իշխանք մեր ցանկալի,
Ի'իւրեանց որդիքն ի տղայ հասակի...¹⁹:

¹⁶ Նույն տեղում, էջ 499:

¹⁷ Նույն տեղում, էջ 500:

¹⁸ Նույն տեղում, էջ 526:

¹⁹ Նույն տեղում, էջ 528:

«Հայապատում»-ի չափածո հատվածներից է նաև Հովհաննես Թլկուրանցու «Տաղ ի Լիպարիտն քաջ» քերթվածը: Ծանոթագրության մեջ Ալիշանը Թլկուրանցուն համարում է ռամկաբան բանաստեղծ, որը վիպասաններից լավագույնն ու հնագույնն է, ապրել է XV դարում, Միջագետքի Թլկուրան կամ Թուլկուրան վայրում:²⁰ Տաղի բնագիրը ծանոթագրված է մանրամասնորեն: Այդ ծանոթագրություններից օգտվել է բանասեր Էմ. Պիվազյանը, երբ հրատարակել է վիպական տաղի քննական բնագիրը:²¹

Ալիշանը նկատում է, որ Լիպարիտ անունը հատուկ է Սյունիքի տեղ օրբեյաններին, և թե ինչպես է այդ անունը Սյունիքից եկել Կիլիկիայի կողմերը, իրեն հայտնի չէ: Սակայն Լիպարիտ սպարապետը ծնվել է Կիլիկիայում, որովհետև նրա հայր Թորոսը, հորեղբայր Օշի-նը, նրա մեծ եղբայր Վասիլը Կիլիկիայի պատմիչների մոտ հիշատակվում են որպես տեղացիներ, և բոլորն էլ գորապետեր էին:²² Ալիշանը բացատրում է վիպական տաղի մի շարք տողեր, որն, անշուշտ, օգնություն է հետագա ուսումնասիրողներին: Բերենք երկու օրինակ՝

ա) Որ Մանչակի գոված տղուն առիր:

Բացատրություն՝ Երևի թե Լիպարիտը գերի է վերցրել Մանչակի որդուն:

բ) Ջիհանուն շատ թախտան (արիր):

Բացատրություն՝ Ինչպես երևում է Լիպարիտը ձիերի մեծ ջարդ է կատարել:²³

Նա բացատրում է, թե Ջիհան գետը Կիլիկիայի մասին պատմող մատենագրական գործերում շատ հաճախ հիշատակվող այդ տարածքի ամենամեծ գետն է:

Կիլիկիայի սպարապետ Լիպարիտի մասին խոսող վիպական տաղի մեկ այլ տարբերակ տպագրել է Կարապետ Կոստանյանցը իր «Յով-

²⁰ Նույն տեղում, էջ 539:

²¹ Հովհաննես Թլկուրանցի, Տաղեր, Աշխատասիրութ.՝ Էմ. Պիվազյանի, Երևան, 1960, էջ 197-204, 265-271:

²² Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 540:

²³ Նույն տեղում:

հաննես Թլկուրանցին և իւր տաղերը» գրքույկում:²⁴ Նա ծանոթ է Ալիշանի «Միստւան» գրքում տպագրված նույն վիպական տաղի տարբերակին և իր բացատրություններում օգտվում է դրանցից:²⁵ Կոստանյանցը տպագրում է նաև վիպական տաղի մեկ այլ համառոտ տարբերակ:²⁶

Կարապետ Կոստանյանցը Լիպարիտի մասին տեղեկացնում է հետևյալը. «Հովհաննես Թլկուրանցու երգերի մեջ մի նշանավոր տեղ է բռնում նորա տաղը քաջ Լիպարիտի վերա: Կիլիկիայի հայոց թագավորության վերջին գորավարներից մեկն է քաջ Լիպարիտը, որ ավագ մարաջախտ Թորոսի որդին էր և կրտսեր մարաջախտ Վասիլի եղբայրը: Կոստանդին թագավորի ժամանակ Ռուբինյան հարստության վերջին շունչն արդեն մոտեցել էր: Տարսոնի Մանչակ ամիրան 60 հազար թուրքերով 1368 թվին հարձակվեցավ Միս մայրաքաղաքի վերա. Կոստանդին Գ նորա դեմն ուղարկեց քաջ Լիպարիտ գորավարին, որ հաղթեց և հալածեց թշնամուն և գերի բռնեց Մանչակի «Գոված տղան»:²⁷

«Հայապատում»-ի մեծարժեք չափածո էջերից է Գրիգոր վարդապետ Խլաթեցու, Ծերենցի մի հիշատակարանը, որն ունի բացառիկ պատմական արժեք, քանզի սեղմ ձևով ներկայացնում է Լենկ Թեմուրի արյունալի արշավանքը Հայաստան, Վրաստան, Պարսկաստան, Ղրիմի թաթարների վրա և այլն: Այդ մատենագրական եզակի նմուշը մեզ ավանդել է Գրիգոր Խլաթեցին (1349-1425), որը 1410 թվականից Մեծփա վանքի ռաբունապետն էր: Նա եղել է հայրենասեր ու եռանդուն հոգևորական: Մ. Աբեղյանը Թովմա Մեծփեցու «Պատմութիւն»-ից մեջբերում է Գրիգոր Խլաթեցուն բնութագրող հետևյալ հատվածը. «Տիւ և գիշեր գիրս գրէր և զամենայն աղքատս կերակրէր... և զամենայն վարդապետս և կարգաւորս ի նոյն յորդորէր... Եւ 50 ամ գիրս գրեաց տիւ և գիշեր անհանգիստ տքնութեամբ»:²⁸ Գրիգոր Խլաթեցու քերթվածի խորագիրն է «Յիշատակարան աղետից ի

²⁴ Կ. Կոստանյանց, Յովհաննես Թլկուրանցին եւ իւր տաղերը, Թիֆլիս, 1892, էջ 52-56:

²⁵ Նույն տեղում, էջ 56:

²⁶ Նույն տեղում, էջ 57-58:

²⁷ Նույն տեղում, էջ 20:

²⁸ Մ. Աբեղյան, Երկեր, հտ. Դ, Երևան, 1970, էջ 408-409:

ժամանակի մերում գոր ասացեալ է Գրիգոր վարդապետի, որ մականուն Ծերենց կոչի Խլաթեցի»։ Քերթվածի հեղինակը դնում է նաև Լենկ Թեմուրի արշավանքի տարին՝ 1387, և նրան բնութագրում է որպէս՝ «էր Լանկթամուր չարեաց գնդին»։ Նա նկարագրում է կոտորածների ու ավերների այն մեծ շառավիղը, որն իր մեջ էր առել Սամարղանդում նստող Լենկ Թեմուրը՝ Երևան, Արարատյան նահանգ, Թիֆլիս, (վրաց արքայի հավատափոխություն), Մուղանի դաշտ, Թավրիզ քաղաքն իր շրջակայքով, Ղրիմի թաթարներ, որոնք քերթվածի մեջ կոչվում են հոներ։ Առնվում է Սյունիքի Որոտան դղյակը, գրավում են Կարս քաղաքը։ Գրված տարածքների բնակիչներին անխնա մորթում էին, ումանց ոչխարների նման տիկ հանում։ Դրա համար Խլաթեցին ասում է.

Դռղան ոսկերքս և սասանին,
Լոյս իմ քաղի, սիրտըս ճըմլին,

Քանզի աչօք իմ տեսանին

Ողորմագին հարուած սոցին։²⁹

«Հայապատում» հատորում կան երկու տաղեր՝ նվիրված Կաֆա քաղաքին։ Կաֆան ներկայիս Թեոդոսիան է՝ աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու ծննդավայրը (1817-1900)։ Հայտնի է, որ Ղրիմում ապրել են կես միլիոն հայեր։ Նրանք մեծ դեր են կատարել այդ թերակղզու տնտեսական ու մշակութային զարգացման գործում։ Այդ մասին պատմում է ֆրանսիացի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Մակլերն իր «Հայաստանը և Ղրիմը» գրքում։³⁰ Մակլերը մեջբերում է կատարում հնագույն «Յասամաուրք»-ից (1830), որում Ղրիմի հայերի շինարար ու ծաղկուն կյանքի մասին կա հետևյալ վկայությունը. «Յայնժամ զօրացաք մեք և՛ բազմացաք, և՛ շինեցաք զգիւղս, և՛ զգաւառս, շինեցաք տունք հարիւր հազար և զեկեղեցիս հազար, և ի ահէ հոնականաց (թաթարների-Ա.Դ.) պարսպեցին ի քաղաքն Ֆեօդոսիա»։³¹

Առաջին տաղի հեղինակն է ոմն Մարտիրոս, որի տաղն իսկական ներբողյան է՝ նվիրված ծաղկուն Կաֆային.

²⁹ Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 564:

³⁰ Sté u F. Macler, Arménie et Crimée, Note de histore, notice de manuscrits, Paris, 1930.

³¹ Նույն տեղում, էջ 351:

Աստուած թող շէն պահէ զԿաֆայ,
Բոլոր պարիսպն որ ի նմա կայ...
Եկեղեցիքն գերակայ,
Զանկակներուն ձայնը կու գայ...
Ժամատեղաց նըման չըկայ.
Իւր քահանայքն փիլիսոփայ,
Լուսամարքուր շատ սուրբ արեղայ...
Չար թըշնամին թող վերանայ,
Պատիւ Հայոցըս մեծանայ...³²

Երկրորդ տաղում, որ կոչվում է «Այլ տաղ ի Կաֆայ», քաղաքը համեմատվում է դրախտի ու աշխարհի նշանավոր քաղաքների հետ՝ Հռոմ, Ստամբուլ: Տաղի հեղինակն է հոգևորական Ստեփանոսը, որն իր տաղը հորինել է Կաֆայի նշանավոր Սուրբ Լուսավորիչ վանքում.

Զգովք ասացի Կաֆայ քաղաքի
Առ ոտըն Սուրբ Լուսաւորչի,
Բազմաչարչար նահատակի,
Գլուխ և պարծանք Հայոց ազգի:³³

«Նուիրակք Էջմիածնի նահատակեալ յԱմասիա» տաղը ներկայացնում է Էջմիածնի մի քանի նվիրակների նահատակումը Թուրքիայում: Նրանք գալիս են Թուրքիայի հայկական վանքերն, ու ժողովուրդը նրանց ընդունում է ցնծությամբ, սակայն թուրք փաշաները նրանց դատապարտում են մահվան, որովհետև վերջիններս իրենց այցելությամբ հայերի մեջ ամրապնդում էին ազգային ինքնագիտակցությունը.

Գլխատեցին զամենեսեան,
Լոյս կիրակի օր յարութեան:³⁴

Այս դեպքը տեղի է ունեցել 1507 թ.:

«Վասն շարժման Կարմիր գլխոյն, որ եկեալ երեց և աւերեց զՀայոց աշխարհս Արեւելից» քերթվածը ներկայացնում է XVI դարում պարսից տիրակալ Իսմայիլի հարձակումը Հայաստանի վրա: Վերջի-

³² Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 583:

³³ Նույն տեղում, էջ 583:

³⁴ Նույն տեղում, էջ 589:

նիս հարձակումը, ավերն ու կոտորածները համեմատվում են Աստվածաշնչի Հին Կտակարանում պատկերված աշխարհավեր հարձակումների հետ. Իսրայելի հրեաները կոտորվեցին փարավոնից կամ բաբելացիներն ավերեցին Սողոմոնի տաճարը Երուսաղեմում: Ահա, թե ինչ արեցին մահմեդականները Հայաստանում.

Ջերկիրն Հայոց ազգին՝ Թաթարի ազգն աներեցին,
Վանայ մինչեւ յԵրզնկան շինութիւն բընաւ չթողին,
Շատ վանք և եկեղեցիք ի հիմանց խախտեալ զայն
ամենն առեալ գերեցին:
Բազում գիրք ու Աստուածաշունչ՝ զայն ամենն
առեալ գերեցին...³⁵

Այս ավերներն ու կորուստները համեմատվում են Լենկ Թեմուրի գործերի հետ. դրանք տեղի են ունեցել 1564-ին:

Հայ ազգի տարաբախտ ճակատագրի մասին է պատմում Ստեփանոս Թոխաթցու «Ողբ եւ ոտանաւոր տաղ ի վերա Եդոկիա մեծի քաղաքին» քերթվածը:³⁶ Այս ողբը կրում է Շնորհալու «Ողբ Եդեսիոյ»-ի ակնհայտ ազդեցությունը, ու դեպքերը կատարվել են 1602-ին: Եվդոկիա քաղաքի անկման մասին գրել է նաև Հակոբ Բաթուկենցը, որի գրվածքը, ըստ Ալիշանի, պակաս գեղարվեստական է, սակայն առավել փաստահարուստ է:³⁷ Հակոբ Բաթուկենցն էլ հետևորդն է Շնորհալու: Ինչպես Շնորհալին, նա էլ ներկայացնում է Եվդոկիայի հայերի ծաղկուն ու լիառատ կյանքը.

Արք և կանայք միանգամայն
Ի բարութիւն քո զուարճանան,
Քո տոլվաթվորքն և խօճանքն
Փարթամ և անուանիք էին:³⁸

Պատմական արժեքավոր տեղեկություններ է պարունակում «Ողբ ի Ջուղա» քերթվածը, որի հեղինակն է Դավիթ Գեղամեցին: Ողբը

³⁵ Նույն տեղում, էջ 595:

³⁶ Նույն տեղում, էջ 605-608:

³⁷ Նույն տեղում, էջ 608:

³⁸ Նույն տեղում, էջ 609:

սկսվում է Արարատյան նահանգի և Ջուղա վաճառաշահ քաղաքի բռնի տեղահանման պատկերով: Ալիշանը 1604-ի փոխարեն դնում է 1606 թ.:

«Հայապատում» հատորն ավարտվում է լավատեսական տրամադրությամբ. այն կապվում է Սյունյաց Մեծ անապատի հիմնադրման հետ, որը հիմնում են Սարգիս Ամբերդցին, Կիրակոս Տրապիզոնցին, Պողոս Մոկացին՝ Մելիք Հայկազնի հովանավորությամբ, Տաթևի մոտ: Այդ լուսավորչական կարևոր ձեռնարկը հոգևոր մեծ լիցքեր է հաղորդում համայն Հայաստանի կյանքին: Պատմական այդ իրադարձությունը պատկերված է ոչ միայն Առաքել Դավրիժեցու «Պատմության» մեջ,³⁹ այլև Ներսես Մոկացու հրաշալի ներբողյանում, որն Ալիշանը տպագրել է «Հայապատում» գրքում:⁴⁰

Ներսես Մոկացու «Ներբողեան գովեստի չորեցունց արանցն, որք եղեն սկիզբն անապատի կարգիլ յազգս մեր» քերթվածի ստեղծման պատմությունը հայտնում է հենց ինքը՝ հեղինակը.

Փոքրիկ Փիլիպոս դըպիր փափագող բանիս տաղական՝

Չայս խնդիր արար, թե ասա յիշատակ, որ ողորմիս տան:⁴¹

Փիլիպոս դպիրը Փիլիպոս Աղբակեցին է, ով հետագայում Սյունյաց Մեծ անապատի աջակից Մովսես Տաթևացուց հետո ձեռնադրվեց Էջմիածնի կաթողիկոս (1633-1655): Նա մեկենասն է եղել իր աշակերտի՝ Առաքել Դավրիժեցու «Պատմության», որը պատմիչի կենդանության օրոք՝ 1669-ին, տպագրվեց Ամստերդամում՝ Ոսկան Երևանցու ջանքերով:⁴²

Ներբողյանի սկիզբը համակված է մի կենսուրախ տրամադրությամբ, որով հեղինակը դիմում է իր ունկնդիրներին՝ ցանկանալով

³⁹ Տե՛ս Առաքել Դավրիժեցի, Պատմություն, թարգմ. և ծանոթագր.՝ Վարազ Առաքելյանի, Երևան, 1988, էջ 198-207:

⁴⁰ Դ. Ալիշան, Հայապատում, էջ 618-623: Տե՛ս նաև Ա. Դոլուխանյան, Ներսես Մոկացի (Կյանքը և գործունեությունը), Ս. Էջմիածին, 2009, էջ 73-85: Ներբողյանի քննական բնագիրը տե՛ս Ներսես Մոկացի, Բանաստեղծություններ, աշխատասիրությ.՝ Ա.Գ. Դոլուխանյանի, Երևան, 1975, էջ 44-63:

⁴¹ Դ. Ալիշան, Հայապատում, էջ 623:

⁴² Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ամստերդամ, 1669:

պատմել այն դեպքերի մասին, որոնց ինքը տեղյակ է, ինչպես նաև այն մարդկանց մասին, որոնք եղան «պարծանաց տեղի և կայան»: Դա կարևոր է հատկապես իր բացառիկությամբ՝ որպես ուրախ և շինարարական ստեղծագործ աշխատանքի գովք, մի բան, որն այնքան պակաս էր այն դարերում.

Ականջ ունողացդ ասեմ,
ուսկն դիք բանիս միաբան,
Լսեք, փափագող լերուք,
ծարաւի բաժակիս արբման,
Զի սիրոյ սեղան կազմեմ
և կոչեմ զձեզ ի խրախարան.
Կայթելով ծափս հարէք
ի լսել զճառս երանական:
Զի թե մեք յետնեալ գտաք
և չեղաք արժանի գովութեան,
Սակայն մերաինքս եղեն
պարծանաց տեղի և կայան...

Այս պանծալի անուններից առաջինը, որի մասին խոսում է Ներսես Մոկացիին, Մելիք Հայկազն է՝ մի քաջարի մարդ, որն իր բազկի հզորության, իմաստուն խելքի շնորհիվ և օսմանցիների դեմ մղած բազմաթիվ ճակատամարտերից հաղթանակով դուրս գալու համար դարձել էր Շահ Աբասի սիրելի զորավարներից մեկը: Վերջինս մեծ պատիվներ է տալիս Մելիք Հայկազնին և որպես վարձատրություն նրան հանձնում է հայրենի գավառի՝ Սյունիքի իշխանությունը:⁴³ Իր այս իշխանությունն էլ Մելիք Հայկազնը օգտագործել է անապատի հիմնադիրներին անհրաժեշտ օգնություն ցույց տալու ժամանակ: Ներսես Մոկացիին Մելիք Հայկազնին համարում է անապատի սյուն.

Անապատի սին լինէր
և գրգէր գթով հայրական,
Մինչ յիշխանութեան միջին

⁴³ Մ. Օրմանյան, Ազգապատում, Բ, Կ. Պոլիս, 1914, էջ 2344-2345:

ջանք դնէր անապատական...

Ներսէս Մոկացու ներբողյանում դրվատված են հայրենասիրությունը, շինարարական ստեղծագործ աշխատանքը, լուսավորությունը: Հայրենասիրությունը դրսևորված է հատկապես Մելիք Հայկազնի կերպարի միջոցով:

Ներսէս Մոկացին հայրենասիրության հետ ներբողում է շինարարական ստեղծագործ աշխատանքը, եկեղեցիների կառուցումը՝ դրանք կապելով Պողոս Մոկացու, իսկ դպրոցը, ուսումը, կրթությունը՝ Սարգիս Ամբերդցու և Կիրակոս Տրապիզոնցու գործունեության հետ: Լուսավորության գովքը արվում է ցնծագին տոնով ու մեծ ոգևորությամբ:

Սյունյաց Մեծ անապատի հիմնադիրներին նվիրված Ներսէս Մոկացու ներբողյանը XVII դարի գրական կյանքի վերանորոգման առաջին արտահայտություններից է, իսկ նրա հեղինակը՝ այդ վերանորոգման առաջին և նշանավոր ներկայացուցիչներից մեկը:

Ղևոնդ Ալիշանի «Հայապատում» աշխատությունը այսօր էլ չի կորցրել իր արդիականությունը: Այն պերճախոս մի վավերագիր է հայ ժողովրդի դժվար, սակայն հերոսական անցյալի, որը մեզ ավանդել է Վենետիկի Մխիթարյան միաբանության անմահ դեմքերից մեկը, որպեսզի ամեն եկող հայ նոր սերունդ լիցքեր քաղի անցյալի հերոսական էջերից ու այդ պարտավորեցնող անցյալով կառուցի երջանիկ ու արժանապատիվ ապագա:



ՍՈՎՐԱՏ ԽԱՆՅԱՆ

*Արցախի պետական համալսարանի
գրականության և լրագրության
ամբիոնի պրոֆեսոր,
Բանասիրական գիտությունների դոկտոր,
ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ*

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԸ

ԵՎ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՊՈԵԶԻԱՆ

Դժվար է գերազնահատել հայ մշակույթի նշանավոր գործիչներին մեկի՝ Ղևոնդ Ալիշանի տեղն ու դերը հայ նոր պոեզիայի ձևավորման ու զարգացման, ինչպես նաև հայագիտության բազմաշերտ բնագավառներում: Որպես բանաստեղծ, բանասեր, պատմագիր, աշխարհագետ, թարգմանիչ, հնագետ, վիմագետ՝ նախադեպը չունեցող անհատականություն է նա, որը մեկուկես դարից ավելի է, ինչ իր գրական, գիտական հարուստ ժառանգությամբ վերածնում է իրեն ծնող ժողովրդին՝ հայացքը հառած գալիք սերունդներին, այնպես, ինչպես Մովսես Խորենացին, Գրիգոր Նարեկացին, Ներսես Շնորհալին, Խաչատուր Աբովյանը, Հովհաննես Թումանյանը, Հակոբ Պարոնյանը և այլ հսկաներ: Նշենք, որ Ալիշանի գործունեությունը սերտորեն կապված է եղել Մխիթարյան միաբանության հետ: Հայ ժողովրդի վտանգված ճանապարհին ճակատագրական մեծ նշանակություն ունեցող երևույթ էր Մխիթարյան միաբանության ստեղծումը Մխիթար Մեքաստացու ղեկավարությամբ:

Պատահական չէ Հայոց հեղափոխական մտքի թևաբաց արծիվ Միքայել Նալբանդյանի բարձր գնահատականը Մխիթարյան միաբանության և Մխիթարյանների մասին: Աշխարհայացքային որո-

շակի տարբերությամբ հանդերձ Մեծն Նալբանդյանը արձանագրել է. «Մխիթարյան միաբանությունը, այդ մեզանից ընկած հատվածը, օտարության մեջ, պատերազմելով բազմադիմի նեղությունների հետ, քունը կտրել է հայոց հին լեզուն մշակելու ու ծաղկեցնելու համար, և եվրոպական մարդը այսօր ճանաչում է հայոց ազգը Մխիթարյանց շնորհիվ»¹:

Եվ ընդգծենք, որ հայոց ազգը Եվրոպային ներկայացնողների մեջ ամենահզոր դեմքը Մխիթար Սեբաստացու հանճարեղ աշակերտն էր՝ Ղևոնդ Ալիշանը, որը գիտության ասպարեզում հայ հանճարի հրաբխային ժայթքումով ներկայացավ Եվրոպային՝ դառնալով ֆրանսիական ակադեմիայի պատվավոր լեզունի դափնեկիր (1886), Ենայի փիլիսոփայական ակադեմիայի պատվավոր անդամ և դոկտոր (1897), անդամակցեց իտալական, ռուսական և այլ գիտական ընկերությունների: Եվ նա երջանիկ էր զգում իրեն առաջին հերթին նրանով, որ ինքն իրենով ներկայացնում էր իր պատմական հզոր անցյալ ունեցող, սակայն միջնադարյան մղձավանջային տարիներին օտար բռնակալների լծի տակ տառապող մայր ժողովրդի հրաբորբոք հանճարը: Եվ ոչ միայն այդ: Նա, կոփվելով նախ Վենետիկի Ռափայելյան վարժարանում որպես ուսուցիչ տեսուչ, «Բազմավեպ» հանդեսի խմբագիր, Փարիզի Մուրադյան վարժարանում՝ ուսուցիչ, 1872 թվականից ամբողջովին նվիրվեց գիտական գործունեության:

Գրական ասպարեզ իջնելով որպես բանաստեղծ՝ նա եռանդով շարունակեց Մխիթարյանների գրական ավանդները ու դարձավ հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության և համախմբման նվիրյալ ջահակիրներից մեկը:

Ղ. Ալիշանի պատմահայեցողությունը և հայագիտական գործունեության միտումը ճիշտ հասկանալու համար բավական է անդրադառնալ 1840-1852 թթ. ստեղծած նրա պոեզիային՝ ամփոփված հինգ հատորյակներում՝ «Մանկունք», «Մաղթանք» և «Բնունի», «Հայրունի», «Տերունի» և «Տխրունի» խորագրերով:

¹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 2, Երևան, 1980, էջ 273:

Խորանալով այդ ժողովածուների ենթատեքստերի աշխարհը՝ դժվար չէ նկատել, որ մեծանուն բանաստեղծը անձնական ապրումների համապատկերին ներկայացնում է մայր ժողովրդի հերոսական-արժանապատիվ անցյալը, բնարմատների անխափան ավիշը, պետականության կորստի ցավը: Ժողովրդի ճակատագրի ճշմարիտ պատկերը ներկայացնող հայոց բամբիռի լարերի հպարտ ու թախծոտ մեղեդիների փունջ են նրա ժողովածուները: Ալիշան-բանաստեղծի մտորումների հորձանուտում հայրենասեր ու ժողովրդասուրբ սերունդ դաստիարակելու գաղափարն է ալեկոծվում: Դրա խոսուն վկայություններից է 1845 թ. Ռափայելյան վարժարանում ծիածանված նրա խորհուրդը. «Ուր քաղաքացիք չիք՝ չկան և հայրենիք»²: Նշենք, որ այդ օրերին Իտալիայում ընթանում էր ժողովրդի ազատագրական պայքարը ավստրո-հունգարական զավթիչների դեմ: Ամեն դեպքում նրա ուշքն ու միտքը հայրենի երկրում էր, իր ճնշված ու հալածվող ժողովրդի մոտ: Տասներկուամյա Ղևոնդ (Քերովբե) Ալիշանը, որ հոր ցանկությամբ մեկնել էր Վենետիկի Սուրբ Ղազար վանքի դպրոցում («Ընծայարան») սովորելու, տարիք էր առնում ծննդավայրից հեռու՝ այդպես էլ երբեք ոտք չդնելով հայրենի հողին: Պարզվում է, որ հայրենիքի հանդեպ ծփացող կարոտը աչքեր ունի, որ հեռվից ամեն պահ տեսնում է իր հայրենի հողը, հարազատներին: Պարզվում է, որ այդ կարոտը ոտքեր ունի, որ կարող են հեռվից-հեռու քայլել հայրենի եզերքի բոլոր ծայրերում, ինչպես նաև ունի ձեռքեր, որ ունակ են անգամ տիեզերական հեռուներից գրկել հարազատներին, փարվել այն հողին, որ ավիշն ու կանչն են մարդու արյան հյուլետում: Ղևոնդ Ալիշանի կյանքն ու գործը քաղաքացու աստվածային այդ առեղծվածների վկայությունն են:

Հասակ առնելով Սուրբ Ղազար կղզում, այցելելով Հռոմ, Լոնդոն, Փարիզ, Բեռլին, Վիեննա, ուսումնասիրելով գրական այն հաղորդումները, որոնք ներկայացնում են հայ ժողովրդի պատմությունը՝ նա իր ստեղծած գրական ու պատմական երկերում որդիական կարոտած աչքերով տեսել է Հայոց աշխարհը, նրա հին թռիչքներն ու ժամանակի

² «Բազմավեպ», Վենետիկ, 1845, թ. 22, 15 նոյեմբերի, էջ 343:

ծանրածանր վիճակը ու խորհե՛լ, խորհե՛լ ժողովրդին այդ ողբերգական վիճակից հանելու, փրկելու, ազատության երջանկաբեր ուղին հանելու մասին: Այդ երանելի օրերին հասնելու համար նա ուղիներ է որոնում ու գտնելով՝ խորհուրդներ է տալիս իրեն ժամանակակից սերնդին: Առաջին հերթին նա պատգամում է նոր սերնդին. «Ճանաչել և պահել անվթար զսեփական շնորհս ազգիս զլեզու նորա, զպատմութիւն նորա, զսովորութիւն և զախորժակս նորա անվնաս, զհարազատ դպրութիւն նորա և զփառս անուան նորա: Զայսպիսի կամիմ հայրենասիրութիւն»³:

Խորապէս գիտակցելով ազգային մշակույթի, առանձնապէս գրականության ճանաչողական ու դաստիարակչական նշանակությունը՝ նա հայացքն ուղղեց դեպի հայոց արվեստի անցյալը՝ ոչ միայն գեղագիտական հաճույք ստանալու, այլև հոլովելու սեփական ժողովրդի ուժն ու կորովը՝ անցյալում անկախ պետություն ունենալու շնորհիվ, ընդգծելու ժողովրդի արժանապատվությունը պահպանող հերոս զավակների անձնուրացությունը, հայրենի օջախներն ու եզերքը պաշտպանելու համար չմոռանալ Ավետարանի հուսալատ պատգամը. «Մրով եկողը սրով էլ կընկնի»: Ահա ազգափրկիչ ու ազգապահպան այս գաղափար-միտումներով էլ Ալիշանը դիմել է նաև հայ պոեզիայի կարկառուն ներկայացուցիչների՝ Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Մագիստրոսի, Հովհաննես Մարկավագ Իմաստասերի, Ներսես Շնորհալու, Ֆրիկի, Հովհաննես Երզնկացու, Կոստանդին Երզնկացու, Խաչատուր Կեչառեցու, Հովհաննես Թլկուրանցու, Առաքել Բաղիշեցու, Գրիգորիս Աղթամարցու, Նահապետ Քուչակի և մյուս տաղերգուների ստեղծագործությանը՝ հետևյալ հիմնական միտումներով. ըմբռնել հայոց մարդասիրական բազմերանգ պոեզիայի լավագույն նմուշները, հուսալաճառել հայոց ժողովրդանվեր բանաստեղծների լավատեսական երկերի կրակով, թևավորվել նրանց հայրենասիրական գաղափարներով, օրինակ վերցնել նրանց ստեղծած պատմական-գրական կերպարների խիզախությունից, մարտնչել հայոց պետականությունը

³ «Բազմավեպ», Վենետիկ, 1848, թ. 12, 15 յունիսի, էջ 181:

վերածնելու արքայան նվիրումով, որպես ժողովրդի անվտանգության և հավերժական ապահովման երաշխիք: Նվիրյալ հայրենասեր քաղաքացիներ դաստիարակելու երազանքով նա նշում է. «...Բուն իսկ հայրենիք մեք ենք, անձն իւրաքանչիւր, և լավութիւն մեր նեցուկք են նորա»⁴: Եվ նման կոչով մեկ անգամ չի հանդես եկել իր սաների առջև, առանձնապէս Ռաֆայելյան վարժարանում: Նա իր ելույթներով սաներին արիության դասեր էր տալիս. «Դրախտին Հայաստանի մէջ ծաղկիլը զմեզ չկրնար ազատե հիմակվան փուշերէն, որ լեցուն է ճամբնուս վրա: Մեր աննման դյուցազունք և քաջերն և երևելի մարդիկը չեն կրնար մեր գերութեան և խեղճութեան վիճակը մեզի մոռցնել... Նախնիք այն ատեն պարծանք են մեզի, երբ մենք ալ իրենց նման կըլլանք... Մեր ինչ ըլլալը մեզնէ կախված է, անոնց պարծանքն ու փառքը մեկ լույս մըն է մեզ ճամբուն վրա, բայց մենք պետք է որ աչվընիս բանանք ու ոտվընիս շարժենք...»⁵:

Շրջանցելով Ղ. Ալիշանի ելույթներն ու հոդվածները հայ հին մատենագրության վերաբերյալ՝ կոնկրետ անդրադառնանք նրա մտորումներին ու կարծիքին 10-18-րդ դարերի հայ պոեզիայի վերաբերյալ:

Ղ. Ալիշանը բարձր է գնահատում Գ. Նարեկացու պոեզիան: Նրա վերաբերյալ եղած բոլոր աղբյուրներին քաջաձանոթ Ղ. Ալիշանը արդարամիտ ու խորաթափանց քննադատի հմտությամբ է մոտեցել Գ. Նարեկացու մասին հնչեցրած կարծիքներին: Օրինակ՝ նա չի ընդունել Գ. Ավետիքյանի այն կարծիքը, թե իբրև Նարեկացին իր «Սուրբ Խաչի պատմություն»-ը գրելիս նյութին մոտեցել է ոչ լուրջ, ուստի «Ապարանից Ս. Խաչի պատմության» մեջ ուրիշ ձեռքից միջամտություններ կան: Խոսելով այս մասին՝ ականավոր նարեկացիագետ Պողոս Խաչատրյանը բերում է Ղ. Ալիշանի հետևյալ կարծիքը, որի հետ համամիտ է նաև ինքը. «Գիրգոր Նարեկացի համեն գրվածուն ևս՝ Գրիգոր

⁴ «Բազմավեպ», Վենետիկ, 1845, թ. 22, 15 նոյեմբերի, էջ 343:

⁵ «Բազմավեպ», Վենետիկ, 1848, թ. 5, 1 մարտի, էջ 66-67:

Նարեկացի է: Որպիսի և է առարկա ըլլա իր գրելիքը... հեղեղորեն թափե նկարագրությունը և հեղեղորեն փայլեցնեն»⁶:

Պ. Խաչատրյանը վստահորեն ավելացնում է. «Ապարանից Ս. Խաչի պատմության» մեջ դժվար է որոշակիորեն մատնացույց անել օտար ձեռքի միջամտություն, ոչ նարեկացիական նախադասություն կամ կապակցություն (Ավետիքյանի նկատառումները համոզիչ չեն): Եվ հասկանալի է Ալիշանի հիացումն առանձնապես «այդ գործի ոճով»: Խաչատրյանը կրկին ու կրկին դիմում է Ալիշանի ծանրակշիռ կարծիքին. «Կրնա ըսվիլ, թե ոչ միայն մեր ազգի պատմական գրվածոց, այլ թերևս և ամենայն ազգաց սա գերաթոույց պատմվածն է, կարծես թե ոչ միայն մոռքն (խմաստոյք), այլև շարաբանությամբն թռչի...»⁷:

Գ. Նարեկացու ամբողջ ստեղծագործությունը գտնվել է Ղ. Ալիշանի ուշադրության կենտրոնում: Նրա գնահատականները Նարեկացու տաղերի և «Մատյան ողբերգության» պոեմի վերաբերյալ այսօր էլ գործառնական մեծ նշանակություն ունեն:

Ուշագրավ են Ղ. Ալիշանի գնահատականները Գրիգոր Մազիստրոսի և Հովհաննես Մարկավազ Իմաստասերի ստեղծագործություններին: Գրիգոր Մազիստրոսին բնութագրում է որպես իմաստուն և հանճարեղ թե՛ հայկական և թե՛ հունական դպրութեան մեջ⁸:

Ղ. Ալիշանը ընդգծում է Գ. Մազիստրոսի գիտելիքների հարստությունն ու խիզախությունը, որոնց շնորհիվ Բյուզանդական կայսրության կողմից ստանում է մագիստրոսի և դքսության աստիճաններ: Նրան է վստահվում երկրի արևելյան սահմանների պաշտպանությունը: Նա գրում է. «Գրիգոր Մազիստրոս իր ընդարձակ իշխանությամբ և հարստութեամբը յարմար առիթ և դիրություն ունեցաւ իր մտաւոր և հոգևոր ախորժակները բանեցնելու. գրասիրութեան հետ՝ հոգեսիրու-

⁶ Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, հտ. I, Ս. Էջմիածին, 1896, էջ 92:

⁷ Նույն տեղում, էջ 92-93:

⁸ Ղ. Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 209:

թեան եռանդն ալ ունէր, և այն ալ իբրև ժառանգութիւն մը ի հարց և ՚ի նախնեաց, որով և իրենց վեհագոյն նահապետին՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի՝ համանման յաջորդաց արժանաւոր ցեղապետ եղաւ: Իշխանական գորութեամբ խաղացընելով իր սահմանները, ջանաց թէ զինուց թէ բանից ուժով նուաճել նաև մտաւոր մոլորութիւնները, մասնաւորապէս Թոնդրակեցի Հայ աղանդաւորաց դէմ վիճնցաւ, և ամենևին անհաւանները և պիղծերը բռնութեամբ ալ պատժեց և խոշտանգեց, ինչպէս Մեծն Սահակ իր ատենի բարբոքիտոնները: Իսկ ուր որ հաւանութիւն և խաղաղութիւն կար՝ հոն ձեռք և ստակ ալ տալով՝ կանգնեց բարեկարգեց վանքեր, և անոնց մէջ ուսումնարաններ, ուր որ նոր պիտանի գիրք մը գտնէր, կամ օրինակել կու տար. ուր որ գիտնական մը կար՝ անոր հետ կը թղթակցէր, ոչ միայն ընդ ազգայինս, այլ և ընդ Յոյնս, Ասորիս, Արաբացիս և Պարսս, որոց լեզուաց ալ բաւական հմտութիւն ունէր. ինչպէս վկայեն իր մնացեալ գրուածին, մանաւանդ Քերականութիւնն և Թուղթքն»⁹:

Ալիշանն անդրադարձել է նաև Գ. Մագիստրոսի որդուն՝ Վահրամին, ով թարգմանություններ է կատարել հունարենից և ասորերենից, և կոչվել Վկայասեր:

Ալիշանը Հովհաննես Սարկավագին գնահատում է որպէս ժամանակի ամենահանճարեղ գործիչ: «Մեր հայ գրագիտաց ամենէն հանճարեղներէն և ճարտար գրողներէն մեկն է ԺԱ դարուն վերջերում, ԺԲ-ին սկզբներում»: Նա նշում է, որ Հովհաննես Սարկավագը քահանա էր, թեպետ գրական անունը հռչակվում էր Սարկավագ:

Ղ. Ալիշանը նշում է, որ Հովհաննես Սարկավագի բանաստեղծությունները գրված են իմաստասիրական ոճով, որտեղ նա փառաբանել է Հայոց Տրդատ արքային, սուրբ հայրապետ Ներսէս Մեծին, սքանչելի Սահակ Պարթևին ու Մեսրոպ Մաշտոցին, որոնց շնորհիվ իր պայծառությամբ փայլում է Հայոց եկեղեցին: Պատահական չէ, որ վրաց Դավիթ թագավորը մեծարել է նրան, երբ նրան լսել է Թիֆլիսում:

⁹ Նույն տեղում, էջ 25:

Հովհաննես Սարկավագի ստեղծագործությունը միշտ գրավել է Ղ. Ալիշանին: Եվ նա մեկ անգամ չէ, որ հանդես է եկել նրա երկերի գնահատմամբ: Առաջին անգամ Ղ. Ալիշանն է հրատարակել Հովհաննես Սարկավագի ամբողջական աղոթագիրքը: 22 աղոթքներից բաղկացած այդ ժողովածուի մեջ Սարկավագը դիմում է Աստծուն, Քրիստոսին, Սուրբ Հոգուն և Աստվածամորը:

Ղ. Ալիշանի՝ հայ միջնադարյան պոեզիայի մասին գրած գիտական աշխատությունները, առանձնապես Ներսես Շնորհալուն նվիրած ստվարածավալ աշխատությունը, հետագա տարիներին դարձել է տասնյակ անվանի բանասերների ուսումնասիրության առարկա:

Նախ ներկայացնելով Ն. Շնորհալու մանկությունն ու պատանեկությունը՝ Ղևոնդ Ալիշանը նշում է Սև լեռան վրա կառուցված սրբավայրերը, որտեղ տարբեր ազգերի քրիստոնյա ճգնավորներ էին աղոթում: Այդ կապակցությամբ Ալիշանը բերում է Ն. Շնորհալու հետևյալ բանաստեղծությունը.

Անդ՝ ուր սրբոցըն բնակք եղեալ
Եւ ի մարմնի հրեշտակացեալ,
Մշտամոռնչ փառաբանեալ
ԶԵրորդութիւնն ամենօրինեալ.
Ի վայելուչ յայն լեառն անուանեալ,
Ուր են հոգիք լուսաւորեալ¹⁰:

Սև լեռան վանքերում հոգևոր կրթություն ստացած աստվածաշնորհ գործիչների շարքում Ղ. Ալիշանն առանձնացնում է չորս հոգու. Ղուկասի ավետարանի մեկնիչ Իգնատիոս եպիսկոպոսին, կաթողիկեանների թղթերի մեկնիչ Սարգիս վարդապետին և Պահլավունի երկու հարազատ եղբայրներ Գրիգորիսին ու Ներսեսին, «որոց նման մաքուր և շնորհագարդ գրողք կամ չեն եղած, կամ շատ քիչ իրենցմէ առաջ և ետև. և յետ Ե դարու թարգմանչաց»¹¹:

¹⁰ Ղ. Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, էջ 48:

¹¹ Նույն տեղում, էջ 51:

Նկարագրելով Ն. Շնորհալու անցած ուղին՝ Ղ. Ալիշանը ընդգծում է նրա բանաստեղծական ինքնատիպ կարողությունը, ինչպես նաև հետաքրքրությունը Պլատոնի, Հոմերոսի, Արիստոտելի երկերի հանդեպ:

Անմահ գիտնականը Ն. Շնորհալուն համարում է ամենից զարգացածը ընկերների շարքում և պատահական չի համարում նրա Շնորհալի կոչումը: Նշելով մեծ բանաստեղծի 50 տարվա ստեղծագործական վաստակը ամենօրյա պաշտոնական զբաղվածության մեջ՝ Ալիշանը նրան համարում է եզակի դեմք 12-րդ դարի ամբողջ ընթացքում:

Ղ. Ալիշանը Ն. Շնորհալու ստեղծագործությունը քննարկում ու գնահատում է բազմակողմանիորեն՝ մատնանշելով նրա բերած նորությունները հայկական տաղաչափական արվեստի, վիպասանության, լեզվաոճական առանձնահատկությունների բնագավառներում՝ ընդգծելով. «Եթե մեր լեզուին արձակաբանից մեջ առաջին կարգը կը դասուի Շնորհալին, տաղաչափից մեջ առանց տարակուսի՝ նոյն իսկ առաջին տեղին ունի և միակ այս բանս կըրնար անմահական պարծանք ըլլալ. լեզուի մը և ազգի մը նախադաս չափաբան, այսինքն ուտանաւոր բանիւ գրողն ըլլալ... վասնզի ոչ ոք իրմէ առաջ այնչափ տեսակ չափերով և ոճով երգեր, տաղեր և քերթումներ գրած է»¹²:

Այստեղ Ղ. Ալիշանը մի կողմից ինքը ներկայանում է որպես գրականության հմուտ տեսաբան՝ բանաստեղծական ոտքի տեսակները առնչելով լեզվի շեշտադրության հետ, մյուս կողմից, ըստ էության, գնահատում է Ն. Շնորհալու բերած նորությունը տաղաչափության ասպարեզում՝ Գրիգոր Մագիստրոսից հետո:

Ղ. Ալիշանը բարձր է գնահատում Ն. Շնորհալու չափածոն նաև այն առումով, որ Ս. Երրորդության վրա իր մտորումների մեջ «Կերևի նաև ազգային եռանդուն ոգին, զոր չեն մարած հոգևոր և աստուածաբանական կրթութիւն, այլ իրենց գերագոյն լուսովը աւելի պայծառ և մաքուր ցուցնեն: Ասոնց վրայ՝ բաւական ճարտարու-

¹² Նույն տեղում, էջ 70:

թիւն ալ կ'երևի համառօտելու ազգին պատմութեան կարևոր յիշատակները և անձինքը, որով աւելի ախորժընթերց կըրնայ ըլլալ, քան իրմէ առաջ Խորենացին համառօտող արձակաբան պատմիչը»¹³:

Մատնանշելով Շնորհալու «Յիսուս Որդի», «Ողբ Եդեսիոյ», «Բան հաւատոյ», «Վիպասանութիւն», «Ժամասացութեան երգերն», «Չարչարանաց և ննջեցելոց» և այլ շարականներ՝ նա ընդգծում է անմահ բանաստեղծի կողմից օգտագործված բանաստեղծական տարբեր չափերն ու ոճը, որոնց շնորհիվ նա մեծարվել է Վարպետ կոչումով:

Ղ. Ալիշանն իր հիացմունքն է արտահայտել նաև Ն. Շնորհալու ակրոստիքոսների վերաբերյալ, ինչպես նաև կրկնաձայնության օգտագործման կապակցությամբ:

Ականավոր գիտնականը ընդգծում է նաև Շնորհալու պոեզիայի անմիջականությունը՝ հետո քարոզից: «Գալով քերդուածոց նիւթերուն կամ առարկային, յայդ է, որ 'ի Շնորհալոյ աշխարհային և պարզ նկարագրական բաներ պետք չէ սպասել. ամէն գրուածն ալ հարկաւ բարոյական են, այլ ոչ զուտ խրատական կամ հոգևոր... Շնորհալին գիտած է զամենայն 'ի կրթութիւն մարդկան գրել և քերդել. և լավ գիտէր, որ բարուց կրթութիւնն չէ միայն 'ի հոգի մարդուս, այլ և 'ի միտս և 'ի սիրտս. այս երեք զօրութեանց համար ալ գրած է զանազան բաներ»¹⁴: Այս դիտարկումից հետո Ղ. Ալիշանը Ն. Շնորհալուն աներկբայորեն համարում է առաջին բանաստեղծը հայ իրականության մեջ թե՛ նյութերի բազմազանության և թե՛ տաղաչափության օրինաչափությունների առումներով: Գիտնականը Շնորհալու մեջ խտացված տեսնում է սիրտ-հոգի-միտք եռամիասնության միաձուլվածք: Այս ուղղությամբ Ն. Շնորհալուն համարում է հավասարը չունեցող անհատականություն, «անհաւասարելի հաւասարութիւն»:

Աշխատության «Է» գլուխը նվիրված է Ն. Շնորհալու երաժշտական արվեստին: Ու պատահական չէ, որ ժամանակակիցները, առանձ-

¹³ Նույն տեղում, էջ 76:

¹⁴ Նույն տեղում, էջ 80:

նապես Սամուել Անեցին, նրան անվանել է «ԵՐԳԵՅՈՂՆ», ոչ միայն երգեր հորինելու, այլև աստվածանվեր ձայնով երգելու շնորհիվ:

Ղ. Ալիշանն իր աշխատության հաջորդ գլուխներում 12-րդ դարի քաղաքական հակասական իրադարձությունների համապատկերին ներկայացնում է Ն. Շնորհալու գործունեությունը Ծովքում, Հռոմկլայում և բուռն նվիրումը որպես կաթողիկոս:

Ղ. Ալիշանը Ն. Շնորհալու բազմակողմանի գործունեությունը պատկերում է և՛ Կիլիկիայի, և՛ բուռն Հայաստանի ազգային-քաղաքական, պատմամշակութային խաչմերուկներում: Դրանով իսկ նա ներկայացնում է Ն. Շնորհալու ժամանակաշրջանը և ստեղծագործության դարակազմիկ նշանակությունը: Ընթերցողը ծանոթանում է Մեծ Հայքի ծանր իրավիճակին, Անիի և անեցիների դրությանը, Գանձակի և Մխիթար Գոշի ճակատագրին, Հաղպատի և Սանահինի պատմական դերին: Եվ պարզ է, որ այդ դարաշրջանի հորիզոնի վրա Ն. Շնորհալու տաղանդի ծիածանն էր կամարված:

Ղ. Ալիշանի ուշադրությունից չի վրիպել Հայոց և Ասորաց կրոնական ընդդիմաբանությունը, որի հրամայականով Ն. Շնորհալին գրել է Թուղթ՝ Ասորաց մեջ այդ մոլորյալ շարժման մասին:

Դարաշրջանի քաղաքական իրադարձությունների հանգամանակից իմացությամբ Ալիշանը ափամեջ է դնում Հայաստանում, առանձնապես Կիլիկիայում կատարված իրադարձություններն ու տարբեր ժողովուրդների փոխհարաբերությունները, պատմում է Հայոց կաթողիկոսության և նորընծա Ռուբինյան պապագատների հարաբերությունների, շրջակա ազգերի ու տերությունների՝ հույների և լատինների, ինչպես նաև հենց մերոնց՝ Պահլավունի հայրապետների և Լևոնյան ու Հեթումյան թագավորությունների մասին: Ազդեցիկ դիրք ունեին նաև ասորիները:

Ըստ Ղ. Ալիշանի՝ Ն. Շնորհալին ակտիվ դիրք ուներ այդ հարաբերություններին խաղաղ ընթացք տալու ուղղությամբ: Ինչպես գրում է Ղ. Ալիշանը. «Շնորհալին ինչպես տաղաչափութեան և այլևայլ բաներու մեջ, այսպես և թղթեգրութեան, մեր դպրութեան մեջ

նախադաս օրինակ է. այս բանի մեջ ալ՝ իր պապէն (Գրիգոր Մազիստրոսէն) զատ՝ ոչ ոք իրեն չափ թղթոց ավանդ թողած է մեզի, կամ պահուած և հասած է մեզ. և ամենքն ալ այսպէս աստուածաբանական չեն, աւելի ընտանեկանք ալ կան»¹⁵:

Ալիշանը հայ ժողովրդի ճակատագրի անվտանգության երաշխիքը համարելով միաբանությունը՝ անդրադարձել է նաև Աղվանից կաթողիկոսությանը: Ամենուրեք նկատելի էր Ն. Շնորհալու գործունեության վեհությունը:

Ղ. Ալիշանն աշխատության մի առանձին գլուխ նվիրել է Եդեսիա քաղաքի վտանգված ժամանակաշրջանին, որի հետևանքը եղավ քաղաքի գրավումը թուրք Ջանգի ամիրայի կողմից: Ալիշանն այդտեղ անդրադառնում է Շնորհալու «Ողբ Եդեսիո» պոեմին՝ այն համարելով գլուխգործոց: Նա գրում է. «Իր երգած Եդեսիո ողբն՝ իր գործոց մեջ շատ նշանաւոր տեղ մը բռնած է, և քան զամեն քերդուածոն աշխուժի և ճարտարութեամբ գրուած, և ինչպէս իր պատմիչն կ'սէ՝ «զամենայն ընթերցողս շարժեց»¹⁶:

Ալիշանն ավելացնում է, որ արդարև այս քերթվածում Ն. Շնորհալին կատարել է նորանոր հնարանքներ՝ անձնավորելով Եդեսիան ողբերգական ապրումների մեջ: Հետևողականորեն վերլուծելով պոեմը՝ Ալիշանը բերում է նաև Շնորհալու մարգարեական խորհուրդը այն մասին, որ հայերը օտար ավերից վերադառնան Հայաստան:

Ներկայացնելով Հռոմկլա բերդը, որտեղ Շնորհալին գործունեություն ծավալեց Ծովքից հետո՝ Ղ. Ալիշանը գրքում առանձին հատվածներ է բերում մեծ բանաստեղծի չափածոյից, որտեղ առանձին պատկերներ են նվիրված Հռոմկլայի դիրքին ու գեղեցկությանը: Ինչ վերաբերում է Շնորհալու «Բան հավատոյ», «Թուղթ առ Գր. Ապիրատ», «Յիսուս Որդի» երկերին, կրկին երևում է Ղ. Ալիշանի գրաքննադատական բարձր մակարդակը գեղարվեստական խոսքը դիտարկելու և արժևորելու ուղղությամբ:

¹⁵ Նույն տեղում, էջ 110:

¹⁶ Նույն տեղում, էջ 199:

Ն. Շնորհալուն նվիրած աշխատության վերջաբանը կարելի է համարել Ալիշանի գեղարվեստական լավագույն երկերի շարքը, որի քնարական հերոսները մի կողմից Ն. Շնորհալին է, մյուս կողմից՝ գրքի հեղինակը՝ Ղ. Ալիշանը: Մույն աշխատությունը սովորական ուսումնասիրություն չէ, այլ հանրագիտարան, որտեղ ստույգ փաստերով ներկայացված են ոչ միայն Շնորհալին, այլև հայ դպրության Ոսկեդարը և հայ միջնադարյան պոեզիայի վերածնունդը 11-12-րդ դարերում:

Օրը-օրին, տարին-տարուն, դարը-դարին հաջորդեցին Հայոց աշխարհում: Արյունարբու թշնամիները ևս հաջորդեցին միմյանց: Արաբական խալիֆայության զորքերը հեռացան ասպարեզից, Հայաստան ներխուժեցին սելջուկ-թուրքերը, ապա Լենկ-թեմուրյան դահիճները, վերջնականապես պարսկական բռնապետությունն ու թուրքական սուլթանությունը բաժան-բաժան արեցին Տիգրան Մեծի ստեղծած ծովից-ծով Հայոց երկիրը: Բայց Աստված Հայկ Նահապետից սերված ժողովրդի հետ էր, որովհետև երկրի պաշտպանության դիրքերում հառնել էին Հայկյան Արամն ու Արա Գեղեցիկը, Արտաշես արքան ու Տիգրան Մեծը, որովհետև Գրիգոր Լուսավորիչն ու Տրդատ թագավորը Հայոց օջախներում հավատի ջահ էին դարձրել Քրիստոսի Լույսը, և այդ լույսի շողերի շաղախով հայոց այբուբենն էր կամարվել սուրբ Մաշտոցի մոքով ու ձեռամբ: Ահա, այդպես, Հայկի և Մեսրոպի սերունդները մի կողմից սրով, մյուս կողմից՝ գրով պաշտպանեցին Արարատված երկիրը՝ աշխարհին պարզելով գրականության և արվեստի այն գանձերը, որոնք ծիածանվեցին Խորենացի-Նարեկացի, Գրիգոր Մագիստրոս-Ներսես Շնորհալի, Ֆրիկ-Երզնկացի, Քուչակ-Սայաթ-Նովա և մյուս աստվածախոս մեծերի աստղաշող հոգուց: Եվ հետագա դարերում հանդես եկան այն մարգարենները, որոնք պետք է և՛ ստեղծագործեին, և՛ գնահատմամբ մեծարեին նրանց, ովքեր արարել էին միջնադարյան հայ պոեզիան: Այդ մարգարեններից էր Ղևոնդ Ալիշանը, որը Ներսես

Շնորհալուց հետո իր զրույցն սկսեց Հովհաննես Իմաստասերի ու Ֆրիկի, Հովհաննես ու Կոստանդին Երզնկացիների, Հովհաննես Թլկուրանցու ու Գրիգորիս Աղթամարցու, Մկրտիչ Նաղաշի ու Նահապետ Քուչակի, Նաղաշ Հովնաթանի ու Սայաթ-Նովայի երգող հոգիների հետ, գրիչն առավ ու դարերին հանձնեց նրանց պոեզիայի մասին գոբելենի փոխված իր հայրական գնահատականը՝ այն կտակելով գալիք հայկազուն սերունդներին, հանուն այն Հայաստանի վերածնման, որ ստեղծել էին Արտաշես արքան, Տիգրան Մեծը, պաշտպանել էին Վարդան Մամիկոնյանն ու Եսայի Ապու Մուսեն, Բագրատունյաց նվիրյալներն ու Ռուբինյան պայազատները։ Ապա Հովերոսի հանգույն եղեգնյա գրչով Նահապետի անունից դիմեց Ավագ Մասիսին ու հայ սերունդներին.

Շարժի՛ր, հա՛շարժի՛ր, Ավագըդ Մասիս,
Արձան պարծանաց Հայոց աշխարհիս,
Շընչե՛, հա՛շընչե ծըխիկ ծիրանի,
Որ քո մանկըտյացըդ նըշան ընիս,
Ահա շարժեցավ Ավագըն Մասիս,
Արձան պարծանաց Հայոց աշխարհիս,
Ահա շարժեցան դաշտք Արարատա,
Դուք այլ շարժեցե՛ք, մանկըտիք հայկա¹⁷:

Այսօր հնչեցնելով Ղ. Ալիշանի «...Ուր որ հայրենի երգեր կլսվին՝ Հոն հայրենիքը ողջ է» տողերը, պարզենք մեր ձեռքերը առ երկինք և գոչենք. «Ով մեծն Ղևոնդ Ալիշան, Քո պատգամը մեր օրերում հնչում է հայոց հզոր բանակի դյուցազնասիրտ զինվորների շուրթերին, իսկ անունդ հնչում է որպես դարերից եկող մեր Տիգրանված նախնյաց ժառանգորդի սրբանուն։ Փա՛ռք մեր ժողովրդին, որ ծնել է Քեզ ու փառք Քեզ, որ հանճարեղ որդու կյանքով ու գործով շարունակում ես վերածնել Քեզ աշխարհ բերած ժողովրդին»:

¹⁷ Ղևոնդ Ալիշան, Նվագներ, Երևան, 1957, էջ 57:



ԱՇՈՏ ԳԱԼՍՏՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
բանասիրական ֆակուլտետի դեկան,
Բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ*

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ ԲՆՈՐԴԸ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԵՐՈՒՄ

«Հ. Ալիշան Ս. Ղազարու ոգին է. իր գրկին մեջ ապաստանարան
կփնտրեն հուզյալ ու եռանդոտ երիտասարդ վարդապետները,
տարեցներն անոր խորհուրդներուն մտիկ կընեն, ծերերն իրենց
գորությունը իրմեն կխնդրեն: Ամենուն զորավիզ է, ամենուն
մխիթարանք է, ամենուն սեր է» (ԱԺՀ, 78):

Հայր Ղևոնդ-Մարգար Ալիշանը (Քերովբե Ալիշանյան) ծնվել է
Կ. Պոլսում 1820 թ. նշանավոր դրամագետ և հնահավաք Պետրոս
Ալիշանի ընտանիքում: Տասներկու տարեկան հասակում նա մտնում
է Սուրբ Ղազարի վանքը և 1836-ին սքեմատության ժամանակ կոչ-
վում հայր Ղևոնդ: Հայտնի է, որ Ալիշանն իր ողջ գիտակցական
կյանքն անց է կացրել Վենետիկի Մխիթարյան միաբանությունում՝
նշանավոր գիտնականների շրջանում: Նա Հայաստանի մասին իր
երկասիրությունները գրել է առանց այն տեսնելու: Ծովածիծաղ
Սուրբ Ղազարից մտքով և երևակայությամբ սլացել է դեպի Հայոց
աշխարհ: Միաբանության ավագ և կրտսեր սերնդի շատ ներկայա-
ցուցիչներ իրենց հուշագրառումներն են կատարել Ալիշանի կյանքի
այս կամ այն դրվագի վերաբերյալ: Մեծ հանրագիտակին հուշագրել
են գրող և հրապարակախոս Արփիար Արփիարյանը, նկարիչ Գևորգ
Բաշինջաղյանը, ականավոր հրապարակախոս Գրիգոր Արծրունին,

հայ նոր գրականության դասական Ավ. Իսահակյանը, Ալիշանի ավագ և կրտսեր ընկերները: Այդ հուշապատումները հնարավորություն են ընձեռում բացահայտելու շնորհագարդ Նահապետի՝ Մխիթարյան միաբանության անդամներից ամենահեղինակավորի կյանքի և գործունեության հետ կապված մանրամասներ¹:

Բնորդ Ալիշանը, ներկայանալով իր անժխտելի արժանիքներով իբրև գրագետ, իբրև հնախոս, իբրև պատմաբան, հուշերում հանդես է գալիս տարբեր բնութագրիչներով՝ *պատմաբան-աշխարհագիր, շնորհագարդ Նահապետ, առույգանձն և ջղապինդ Բարձրահասակ մարդ* և այլն: Հուշագիրները կարևորում են առաջին տեսակցությունը հայր Ալիշանի հետ. «Նույնիսկ առաջին տեսակցությանս ժամանակ հայր Ղևոնդի հետ բարեկամացանք. ինչպես ինձ թվում էր, նա կողմնակի կերպիվ ուրախանում էր, որ այժմ հայերս սկսել էինք հետաքրքրվել մեր անցյալով» (էջ 37): Առաջին տպավորությունն ընդգծել է նաև հուշագիր Մ. Զալյանը. «Առաջին տպավորությունից սթափվելով՝ ես նոր ուշադրություն դարձրի համեստ ուղեկցիս գծագրության վրա և նշմարելով հանրաձանոթ լայն ճակատն ու խոշոր աչքերը՝ համոզվեցի, որ, այո՛, նա ինքն է» (էջ 82): Առաջին հանդիպումից հետո հեղինակները կերտում են Ալիշանի դիմանկարը. «Օտարք և ազգայինք կուգային զինք տեսնել: Պարզությամբ և մեծ վայելչությամբ կընդուներ այցելուներն, որոց խորին պատկառանք կազդեր: Էր Բարձրահասակ, վատույժ, լայն ճակատ, սև մորուք, անպաճույճ, բայց մաքուր, անպատմելի քաղցրահայաց աչկունք, որոց բոցեր կցուլային երբեմն, յուր սրտին սիրելի նյութոց վրա ճառելու ժամանակ: Յուր սրբակրոն վարքով և անկեղծ բարեպաշտությամբ օրինակ էր յուր կրոնավոր ընկերաց, որք արդ կգուրգուրան նորա վրա և կպանծան ի նա» (էջ 10):

Առաջադիր հուշերում Ալիշանի դիմանկարը կերտվում է մի քանի սկզբունքներով՝

¹ Ալիշանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1974, 264 էջ:

Բնագրային հատվածները քաղաբերված են սույն հրատարակությունից:

ա. բնորդի արտաքին նկարագրությամբ,
բ. երկխոսություններով,

գ. ժանրային առանձնահատկությամբ և այլն:

Նշվում է բնորդի կազմվածքը, հասակը, դեմքը (աչքերը, ճակատը, մորուքը), ձայնը և այլն: Տեղ-տեղ արտաքին նկարագրությունը ներկայացվում է համեմատության հիմքով. «Ալիշան միջին հասակի, շատ նիհար, հիվանդոտ դեմքով, թույլ կազմվածքով, մոտ հիսուն տարեկան մարդ էր: Նա սկսեց խոսել. ձայնը թույլ էր և խուլ, խոսակցությունը անդադար ընդմիջվում էր չոր, անախորժ հազով: Խոսելու և պատասխան ընդունելու ժամանակ նա անդադար կարմրում էր, ինչպես մի օրիորդ կամ ինչպես մի գերմանացի համեստ պրոֆեսոր...» (էջ 25):

Դիմանկարն ամբողջանում է նրա կեցության սենյակով. նկարագրական խոսքին ձուլվում են սենյակի տարբեր պարագաների անվանումները, վարդապետի արտաքին և ներքին հատկանիշները. «Անպաճույճ խցի դուռը բացվեցավ: Քառակուսի, լուսավոր և անզարդ սենյակի մի կողմում դրված էր անկողին, իսկ ձախակողմյան պատի առաջ գրքերով և թղթերով ծածկված սեղանի հետևը նստած էր մի ալեգարդ, բարձրահոն վարդապետ, որ վեր կենալով ողջունեց ինձ սիրով և հրավիրեց նստելու: Այդ բարձրահասակ, քաղցրադեմ ծերունին էր հայր Ղևոնդ Ալիշանը» (էջ 34):

Առանձնասենյակի (հյուրասենյակի) մեկ այլ նկարագրություն, որ լեզվական հիմքերով նախորդի հետ ընդհանուր եզրեր ունի. «Ես բաց արի դուռը, և իմ աչքերիս առաջ ներկայացավ հետևյալ տեսարանը: Ահագին, լուսավոր սենյակ՝ լի գրքերի պահարաններով, մեջտեղ դրած մի մեծ գրասեղանով, որը բեռնավորված էր բազմաթիվ գրքերով և թղթերով. մի քանի գեղեցիկ, թեև հասարակ բազկաթոռներ և մի դիվան, լայն և բարձր պատուհանների վրա՝ մուգ գույնի վարագույրներ. ահա Ալիշանի սենյակը» (էջ 24):

Նուշերում երևում են ժամանակի պատմական և մշակութային զարգացման յուրահատկություններ: Ղևոնդ Ալիշան բնորդը երևում է Նապոլեոն զորավարի հրովարտակը քննելիս, Բոտալիայի թագու-

հու հետ երկխոսելիս, եվրոպական գիտնականների հետ մասնագիտական հարցերի շուրջ խորհելիս: «Պատմում են, որ անցյալ դարու վերջում, երբ Նապոլեոն Ա-ն, Հյուսիսային Իտալիային տիրելով, փակեց բոլոր կաթոլիկ վանքերը՝ հիվանդանոցների կամ զինվորանոցների վերածելով նրանց, և Մխիթարյանները դողալով բուպե առ բուպե սպասում էին նույն վիճակին, մի օր հանկարծ մոտենում է կղզուն մի նավակ, որի միջից դուրս է գալիս Նապոլեոնի սպաներից մեկը՝ հետը բերելով նրա հրովարտակը, որի մեջ մեծ զորավարը հայտնում է, որ հարգելով վանքի գիտական գործունեությունն ու լուսավոր նպատակները Արևելքի վերաբերմամբ՝ թույլ է տալիս նրան շարունակել իր գոյությունը: Միաբանությունը մինչև այժմ տոնում է այդ օրը՝ իբրև փրկության օր» (էջ 85):

Ժամանակակիցները հուշագրում են, որ Իտալիայի թագուհին մեծ հանրագիտակի երկրպագուն էր և հաճախ էր այցելում Ս. Ղազար. «Հ. Ալիշանի ամեն մի նոր աշխատությունը դուրս գալուց մի օրինակ ուղարկվում է թագուհուն: Եվ սա ամեն Վենետիկ գալուց այցելում է Ս. Ղազարի կղզին: Գալով վանքը՝ նա առաջ կարգադրում է անհանգիստ չանել ծերունուն, իսկ վերջը, վանքը շրջելուց հետո չղիմանալով՝ խնդրում է կանչել նրան իր մոտ:

-Հայր Լևոն², ինչպե՞ս ես դու կարողանում գրել այդքան մեծ գրքեր,- հարցնում է թագուհին մի անգամ:

-Ես ոչինչ չեմ գրում,- պատասխանում է Ալիշան՝ երեխայի նման շփոթվելով, կարմրելով,- ես միայն նյութեր եմ ժողովում» (էջ 86):

Հարկ կա հատուկ նշելու, որ եվրոպական գիտնականները, եթե որևէ բացատրության կամ տեղեկության կարոտություն էին ունենում, անմիջապես դիմում էին Վենետիկի Մխիթարյաններին, մասնավորաբար հայր Ալիշանին³:

² Ղևոնդ հունարեն նշանակում է առյուծ-լեօն: Հ. Աճառյանը *Ղևոնդ* հատկանվան ընդարձակ բացատրությունը տալիս է Լևոն անձնանվան տակ: Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հտ. II, Ե., 1944, էջ 408:

³ Ս. Շտիկյան, Ալիշանը հայ մտավորականների հուշերում, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1987, թ. 6, էջ 37-46:

Մշակութային, հոգեկան, անձնային ընդհանրական հատկանիշներ են առկա Ղևոնդ Ալիշանի և Խրիմյան Հայրիկի միջև: «Երկու եկեղեցականք կան,- գրում է Ա. Արփիարյանը,- որոնց դեմքը նայելով՝ երբեք հայ մը չկշտանար հագենալ՝ Խրիմյան և Ալիշան»⁴:

Ավ. Բսահակյանը «Բմ հուշերից» գրքում անդրադառնում է Ղևոնդ Ալիշանի և Խրիմյան Հայրիկի հուշ-դիմանկարներին: «Երբ մեկնում էի Վենետիկից,- հուշագրում է Ավ. Բսահակյանը,- գնացի Ալիշանի մոտ՝ վերջին անգամ տեսնելու և հրաժեշտ տալու:

Օրհնեց ինձ, Բարիքներ մաղթեց և ողջույն ուղարկեց Խրիմյան Հայրիկին:

-Ինձմեն հարյուր օրով մեծ է ան,- ասաց Ալիշանը,- բայց կըսեն, որ շատ առույգ է, ձի կնստի. հարկավ այդպես է. ան Մասիսի հովին տակ կքնանա, Արաքսի ջուրը կխմե, Հայաստանի հացը կուտե, անոր հողի ուժը կառնե...»⁵:

Հուշերում նկարագրական խոսքը հեղինակները հյուսում են՝ կիրառելով լեզվառճական այնպիսի հատուկ հնարներ, որոնք ձևավորում են հուշագրական տեքստի դիմապատկերային միջուկը: Այս տեսանկյունից կարող ենք առանձնացնել կառուցվածքային միավորներ, Բառաշերտեր, որոնք ընդգծում են՝

ա. բնորդի արտաքին հատկանիշները,

բ. գործողություններն ու արարքները,

գ. ուղղակի (կամ անուղղակի) խոսքը և այլն:

Հ. Ալիշանի՝ հուշագիր Մ. Ջալյանի հետ երկխոսությունում կարողում ենք.

«Յոթանասունինն տարիս լրացավ. «Ձեր» Խրիմյան ինձնից հարյուր օրով մեծ է,- ասաց նա (Ղ. Ալիշանը-ԱԳ) հնազետի ճշտությամբ:

-Ինչո՞ւ «մեր» և ոչ թե «ձեր», - նկատեցի ես:

-Ինչպե՞ս թե «մեր»:

-Չէ՞ որ նա էլ տաճկաստանցի է:

⁴ Նույն տեղում, էջ 9:

⁵ Ավ. Բսահակյան, Երկերի ժողովածու, հտ. 5, Երևան, 1977, էջ 14:

-Այո՛, ճիշտ է,- պատասխանեց նա ծիծաղելով»⁶:

Նկատելի է՝ այս երկու մեծերի մտերմությունը ցուցադրվում է հենց հուշագրության բնագրերում: Իմանալով Ղևոնդ Ալիշանի հարգանքը՝ Խրիմյան Հայրիկը հրաման է արձակում. «Ես վաղը կկարգադրեմ, որ անոր Մասիսի հողեն, Երասիսի ջրեն ու Հայաստանի ծաղիկներեն քիչ մը վերցնեն և փոքրիկ արկղով մը դրկեն Վենետիկ:

Ինչպես հետո իմացա, Հայրիկի կողմից ուղարկվել էր մի փոքր արկղ այդ արմաղաններով, բայց մինչ հասնելը, դժբախտաբար, սիբեի Նահապետը արդեն վախճանված էր եղել»⁷:

Երկու բնորդներին միաժամանակ հիշատակել է հուշագիր Տիգրան Նազարյանը. «Եթե հայության մեջ անկետայի ենթարկվեր, թե ո՞վ է ԺԹ դարու ամենախոշոր, ամենահեղինակավոր, ամենասիրելի, պաշտելի մարդը, որի խոսքը, կամքը, տենչանքը ու մտորումը համայն հայության բաղձանքի ամփոփումը իր սրտում-հոգում ամբարած լիներ, անշուշտ, միաձայն երկու մարդի վրա կանգ կառնեին՝ Խրիմյան Հայրիկ (մինչև կաթողիկոսանալը) և Հայր Ղևոնդ Ալիշան»⁸:

Հուշագիրները Ղևոնդ Ալիշան բնորդի դիմանկարը կառուցել են տարբեր բառամիավորների նրբագծերով, որոնք գործածության առումով հետաքրքրական իրողություններ են վեր հանում: Ինչպես նշում է Լ. Եզեկյանը, «բառապաշարը ոճական սկզբունքներով խմբավորելիս նախ և առաջ անհրաժեշտ է հաշվի առնել յուրաքանչյուր բառի ոճաբանական բնութագիրը, նրա ոճական կիրառությունը, այլ կերպ ասած՝ նրա հուզարտահայտչական երանգավորումը, կիրառական հաճախականությունը»⁹:

Բառային մերձիմաստ շղթաներ ենք գտնել առաջադիր հուշերի բնագրերից: Այստեղ շատ են կրոնական ըմբռնումները: Գաղտնիք չէ, որ բառապաշարի կրոնակեղեցական բառաշերտը մյուս

⁶ Ալիշանը ժամանակակիցների հուշերում, էջ 83:

⁷ Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հտ. 5, էջ 16:

⁸ Ալիշանը ժամանակակիցների հուշերում, էջ 163:

⁹ Լ. Եզեկյան, Բաժնու ստեղծագործությունների լեզուն և ոճը (ըստ պատմավեպերի նյութերի), Երևան, 1975, էջ 136:

բառաշերտերի համեմատությամբ ավանդապահ է և կայուն: Ժամանակի պատկերն ամբողջացնելու համար մեծապես գործածվում են ծիսական և կրոնական գրքերի անվանումներ՝ Ս. Գիրք, Ավետարան, Մաշտոց, Մաղմոսարան, Մեկնութիւնք, Ճաշոց և այլն: Գիրառվել են նաև այլ արտահայտություններ՝ քրիստոսախմբո¹⁰, Աստվածամայր, կրոնակից, այլակրոն, ժամասացություն, վարդապետական խուց, Վենետիկի Սուրբ Ղազար վանք, սուրբ Երուսաղեմ, Խաչելության պատկեր, Համբարձումն ներկայացնող նկար, պահապան հրեշտակ, Աստուծո տաճար, սրբության սրբոց («Ինքն էր սրբության սրբոցի առաջին երկրպագուն»)¹¹ և այլն: Օգտագործված է նաև խրատական մի ասույթ («Ծերութիւն յոյժ ապականել զմարդ»), որն աղերս ունի սուրբգրային իմաստասիրական գրականությունից այն մեջբերման հետ, որն առկա է Սողոմոնի իմաստությունում. (հմմտ.՝ 3:17):

Այս բառամիավորներն ու արտահայտությունները բնութագրում են Ղ. Ալիշանին կամ գործածվում են Սուրբ Ղազարի գրամշակությային միջավայրը պատկերելու համար: Քննվող հուշերում առատ են *սէր, գիր, տուն, պետ, հայ* վերջնաբաղադրիչներով բառեր, ինչ՝ աստվածասէր, մարդասէր, կրոնասէր, հայասէր, ազգասէր, ուսումնասէր, ժողովրդասէր, անփառասէր, լռասէր, մենասէր, հասարակասէր, հյուրասէր (հյուրասէր մենաստան) (սէր վերջնաբաղադրիչով բառերը հիմնականում բնութագրում են Ղ. Ալիշանին), հանրագիր, ձայնագիր, մատենագիր, խնդրագիր, երկաթագիր, ձեռագիր, սրբագիր, գրչագիր, գրատուն, մաքսատուն, սեղանատուն, զանգակատուն, խմբագրատուն, ձեռագրատուն («Երջանիկ կզգար ինքզինքը, երբ *ձեռագրատան* մեջ կգտնվեր»)¹² և այլն: *Պետ* վերջնաբաղադրիչով բաղադրություններ՝ տպարանապետ, ուսուցչապետ, սակավապետ, վարդապետ, ուսում-

¹⁰ Դ. Գյուրջինյան, «Քրիստոս» անվան բառակազմական արժեքը հայերենում, «Էջմիածին», 1992, թ. ԺԲ, էջ 50-56:

¹¹ Ալիշանը ժամանակակիցների հուշերում, էջ 129:

¹² Նույն տեղում, էջ 112:

նապետ և այլն: Գործածության հաճախականությունն ունեն *հայ* վերջ-նաբաղադրիչով որևէ տեղի բնակիչ մատնանշող կազմությունները՝ թուրքահայ (թրքահայ), տաճկահայ, կովկասահայ, ռուսահայ, մաճառահայ (հունգարահայ) և այլն: Գործածական են *հայ(կ)* սկզբնաբաղադրիչով բառեր՝ հայապատում, հայագետ, Հայկարան և այլն: Հուշերում գործածական են *նվազահանդես* և *սգահանդես* կազմությունները. «Այս օրն հատկացած էր *նվազահանդեսի*», «*Սգահանդեսը* տևեց մինչև կես զիշեր»¹³: Ակտիվ են նաև *նալ*/և *նկար* արմատներով բաղադրությունները՝ նավահանգիստ, նավավար, նավամատույց, շոգենավ, լուսանկար, մանրանկար, բազմանկար, յուղանկար և այլն: Ղ. Ալիշանը բնութագրվում է *Ս. Ղազարու ոգի, խոհուն, մտածող, միշտ խորասուզված իր մեծ աշխատություններուն մեջ, ամբողջ հայության սիրելի, ճգնության խնկարան, դպրության թանգարան* արտահայտություններով:

Հուշագրության լեզվում կարևորվում են *հիշել* բայի իմաստաշարահյուսական հատկանիշները. «Կհիշեմ զինքն, որ երբ հիվանդ էինք, անոտնաձայն, լոկիկ-մնջիկ կուգա մեր անկողնին քովն ամեն օր, կհոգա մեր առողջության համար, կքաջալերե զմեզ ու կխնամե իր ձեռքերովը»¹⁴: Հաճախական է հակոտնյա *չեմ հիշում*-ը. «Իմ վարժապետս մի երիտասարդ լեհաստանցի հայ էր, որի ազգանունը այժմ չեմ հիշում» (էջ 20):

Հուշագրության այս մետաբնագիրը շրջասությունների, թևավոր խոսքերի, առած-ասացվածքների շտեմարան է, այսպես. շրջասույթներ՝ *Աղրիականի թագուհի* – Վենետիկ. «Մի քանի օրեր անցուցի ի Վենետիկ, այդ եզական քաղաքն, որ Աղրիականի նազելի թագուհին կոչված է իրավամբ» (էջ 67): *Ղարաբաղի թագ ու պսակ, հայության զարկերակ* – Շուշի «Թաթարը ածուխ ու մոխիր դարձավ աննման Շուշին՝ Ղարաբաղի թագ ու պսակ, հայության զարկերակը» (էջ 165): Անգլիական առած՝ Time is money-Ժամանակը դրամ է: Jch verstehe nicht (Իխ ֆեռշթեհե նիխթ)–«Ես չեմ հասկանում» և այլն:

¹³ Նույն տեղում, էջ 59, 167:

¹⁴ Նույն տեղում, էջ 76:

Ղ. Ալիշանը հիսուն տարի իր կյանքը նվիրել է մեր պատմության ուսումնասիրությանը և այդ պատճառով էլ ստացել է *Նոր քերթողահայր* պատվանունը. «Եթե այդ բազմատեսակ գործերն էլ չլինեին, նա դարձյալ պիտի արժանանար *նոր քերթողահայր* կոչման»¹⁵:

Տեղին է հիշատակել Արփիար Արփիարյանի բնութագրումը. «Հ. Ղևոնդ վ. Ալիշան բանաստեղծ ըլլալե առաջ քրիստոնյա է, քրիստոնյա մը, որ կատարելապես խոնարհ է և կխորշի ամեն պատվե, ամեն փառքե» (էջ 43):

Ալիշան բնորդի դիմանկարի համեմատությունները զուգահեռվում են թոչունների հատկանիշների հետ: Քերովբե Չրաքյանը հուշագրել է Ալիշանին. «Խստակյաց կյանք կվարեր և թոչունի պես կսնաներ, ավանդապահ էր սովորություններուն և պահպանող վանական կարգ ու կանոնին»¹⁶:

Մեծ հանրագիտակի՝ Ղևոնդ Ալիշանի ներշնչող անունը դաջված կմնա հայ ժողովրդի հիշողության մատյանում այնքան ժամանակ, քանի կան հայն ու Հայաստանը: Բոլոր ժամանակներում էլ հնչել են նրա խոսքերը՝ քաղված հուշագրության բնագրից. «Շրջահայա՛ց եղեք, սիրեցե՛ք հայոց լեզուն, Հայաստան աշխարհը և սիրեցե՛ք միմյանց»¹⁷:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԺՀ- Ալիշանը ժամանակակիցների հուշերում, Ե., 1974:

Հ.-հայր:

Ս.-սուրբ:

Վ.-վարդապետ:

¹⁵ Նույն տեղում, էջ 42:

¹⁶ Նույն տեղում, էջ 227:

¹⁷ Ավ. Բաահակյան, Երկերի ժողովածու, հտ. 5, էջ 14:



ԼԻԼԻԹ ՀՈՎՍԵՓՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
հայ հին և միջնադարյան
գրականության և նրա դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի դոցենտ,
Մաշտոցյան Մատենադարանի
ավագ գիտաշխատող,
Բանասիրական
գիտությունների թեկնածու*

ՍՅՈՒՆԻՔԻ ԾՂՈՒԿ ԳԱՎԱՌԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԴԵՐՆ ԸՍՏ ԱԼԻՇԱՆԻ «ՄԻՍԱԿԱՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ

Մեծ Հայքի Սյունիք նահանգին է վերաբերում Ղ. Ալիշանի հերթական գլուխգործոց՝ «Միսական» աշխատությունը¹։ Ըստ Ալիշանի՝ քաջակորով սյունեցիները հմուտ էին թե՛ ռազմական գործում, թե՛ ազգային արժեքների պահպանության մեջ, այդ է պատճառը, որ Սյունիքն օտար հարձակումներին ամենաուժեղ և երկար դիմադրությունն է ցույց տվել։

Ինչպես այլ, այնպես էլ «Միսական» աշխատության մեջ հեղինակն իր քննությունը խարսխում է ժամանակի գիտաբանասիրական հենքի վրա։ Պատմագրական, գրական, ճանապարհորդական ամենատարբեր հրապարակումների համադիր քննությամբ հեղինակը տալիս է Սյունիքի հնարավորինս ճշգրտված պատմաաշխարհագրական բնութագիրը հին ժամանակներից մինչև իր ապրած դարաշրջանը։ «Միսականը» Սյունիքի պատմության վերաբերյալ ամեն-

¹ Ղ. Ալիշան, Միսական, Տեղագրություն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893 (այսուհետև այս աղբյուրից արված հղումները շարադրանքի մեջ՝ փակագծերում)։

նաամբողջական և հանրագիտարանային արժեք ունեցող աշխատությունն է²: Սյունիքի պատմության (ուստի և Ծղուկ գավառի³) քննության համար **Ալիշանն օգտագործել է միջնադարի մատենագրությունն ամփոփող տպագիր և ձեռագիր հսկայական նյութ**, ինչով և պայմանավորվում է քննվող աշխատության աղբյուրագիտական արժեքը: Հիմնական տեղեկությունները քաղում է Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն տանն Սիսական» աշխատությունից, գիտականորեն հիմնավորում է պատմիչի հղած վավերագրերի դերը՝ համադրելով մատենագրական տվյալների հետ: Այդպիսի մի հետաքրքիր դրվագ է Սյունյաց Պելուծավը (Պելուծավը – Ղ. Ա.) Սյունեցու անձի հարցը: Հայալեզու աղբյուրները չեն ավանդում քաջակորով այս նահապետի անունը, որ քրիստոնեության ջերմեռանդ պաշտպաններից էր և Տարոնում պայքարում էր հեթանոսների դեմ: Նրա անձի մասին լրացուցիչ տեղեկություններ է հաղորդում վրացական մի ժամանակագրություն, որը մատնացույց է անում Ալիշանը. «Պատմիչ մի Վրաց յիշէ, ոչ գիտեմ զսա, թէ զայլ ոք ժամանակակից՝ օտարածորթ իմն անումար՝ **Պելուծավը** Սիւնեցի, առնթերակայ գտեալ փոխման սրբոյ կուսին Նունեայ, յամի 332»⁴ (էջ 10):

² «Սիսականը» որպես հիմնական աղբյուր կիրառված է պատմական Հայաստանին և Սյունիքին վերաբերող բոլոր ուսումնասիրությունների մեջ. տե՛ս Գր. Գրիգորյան, Ս. Հարությունյան, Սյունիքի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Բուհական համառոտ դասընթաց, Երևան, 2001, 316 էջ: Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, թարգմ., ներածութ. և ծանոթագր., Ա.Ա. Աբրահամյանի, Երևան, 1986, 613 էջ (մեջբերումներն արված են այս բնագրից, այսուհետև՝ «Օրբելյան»):

³ Ղ. Ալիշանի հաղորդած տեղեկություններն այնքան առատ են, որ Սյունիքի ամեն առանձին գավառ կարող է մի առանձին ուսումնասիրության նյութ դառնալ: Ծավալի ուռճացումից խուսափելու պատճառով վերցրել ենք միայն Ծղուկ գավառը:

⁴ Լեոնտիոս Ռուիսեցի, Վրաց թարագաւորների եւ նախահայրերի ու տոհմերի պատմութիւնը: Տե՛ս Գր. Լ. Մելիքսեթեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Մաս Ա, Երևան, 1934: Վրաց Սալմե Ուջարմեցի թագուհու հետ այս իշխանը ներկա է գտնվել վրաց առաքելուհի Նունեի մահվանը և գրի առել նրա կենսագրությունը, անդ, էջ 174:

«Միսական» աշխատությունը բնութագրում է Ղ. Ալիշանին որպես **աղբյուրագետի՝ ձեռագրագիտական, բնագրագիտական քննությունն անելու իր հմտություններով**: Ստ. Օրբելյանի Պատմության մեջ Ալիշանը կարևորում է հատկապես մատենագիտական արժեք ներկայացնող փաստերը: Պատմիչն իր կիրառած վավերագրերի, եկեղեցիներում պահպանվող ձեռագրերի մասին հաճախ ձեռագրագիտական արժեք ունեցող տեղեկություններ է հաղորդում, որոնք «Միսական»-ում հղված են ամբողջությամբ: Ահավասիկ՝ «Տեսեալ գայս (Գիր վճռի ի շրջակա սահմանին Տաթևոյ) ամենայն նամակ վճիռ ձեռագիր իւրեանց իսկ զշնորհացն, **հնացեալ եւ ծայրատեալ, գոր ի բազմացն գասկան կարացաք ընթեռնուլ. եւ վասն երկարութեանն տաղտկութիւն համարեցաք լսողացոյ**»:

Ծղուկ գավառի եկեղեցիներն ու վանքերը ներկայացնելիս ամենակարևոր տեղը հատկացնում է **վիմական արձանագրություններին**. այս առումով նույնպես «Միսական» աշխատությունը սկզբնաղբյուրի արժեք ունի, և Դիվան հայ վիմագրության շարքի հիմնական աղբյուրներից է⁵:

«Միսականը» **սկզբնաղբյուր է մի շարք հիշատակարանների համար**. հրատարակված հատորներում Ա. Մաթևոսյանը, Լ. Խաչիկյանը, Վ. Հակոբյանը մի շարք հիշատակարաններ ընդօրինակում են պարզապես Ալիշանի այս ուսումնասիրությունից⁶:

Պատմամշակութային ընդհանուր նկարագիրը տալուց հետո հեղինակը Մյունխենի աշխարհը քննում է գավառ առ գավառ, որոնց մեջ կարևորագույն դերը պատկանում է Ծղուկին: Այդպես էր ընկալում գավառս և Ստ. Օրբելյանը՝ Մյունիքի պատմությունը սկսելով հե՛նց Ծղուկից, թեև աշխարհացույցում այն յոթերորդն է: Հետևելով Ստ. Օրբելյանին՝ գավառի անվան ծագումն Ալիշանը կապում է գավառապե-

⁵ Միսական, Հավելված

⁶ Հիշատակարանների հրատարակության ընթացքին Վենետիկի Մխիթարյան մատենադարանի ձեռագրացուցակի միայն առաջին հատորներն էին տպագրված. շատ ձեռագրերի հիշատակարաններ հասանելի էին միայն Ալիշանի աշխատության միջոցով:

տի անվան հետ, որ Միսակյան հայկագուններից էր, սակայն առարկում Ստ. Օրբելյանի Պատմության մեջ հիշատակված **Ծղակ** (Ծղկայ՝ սեռական հոլովածնից) ձևի դեմ⁷: Գավառը կոչվել է նաև Սյունիք կամ Միսական. «Եւ զի սա էր բուն գահ Սիւնեաց, ապա եւ յատկաբար կոչի յումանց ի նախնեաց Սիւնիք եւ Միսական գաւառ զոր յետինք այլայլեալ կոչին Սիսիան» (էջ 207): Ծղուկը (Սիսիան) նախ ռազմավարական նշանակության գավառ էր, այդ է պատառը, որ Ստ. Օրբելյանը կարևորում էր Արշակունիների կողմից սյունեցիներին արտոնված իրավունքները⁸. այս տեղեկություններն ընդունում է նաև Ալիշանը, և Սիսիան անվան հին հետքերը տեսնում Մեսրոպ Վայոցձորեցու (Ժ. դար) Ներսեսի Վարքի մեջ պահպանված Գահնամակի 20-րդ համարով վկայակոչված **«Միսանեանք»**⁹ անվան մեջ: ԺԳ. դարից ավելի հաճախ հանդիպում է Որոտան անվանումով¹⁰:

Ծղուկը երկար ժամանակ համարվել է Սյունյաց աշխարհի գիտամշակութային կարևորագույն կենտրոնը. Այստեղ են հաստատված Շաղատ կենտրոնը՝ Սյունյաց վարդապետարանով, Վաղատնո, Սյունի¹¹, Տաթևի վանքերը, Հարանց անապատը, որոնց համակարգված քննությունը հայագիտության մեջ առաջին անգամ անում

⁷ «Ծղուկ գաւառ՝ անուանեալ ի Ծղկայ գաւառապետէ». տե՛ս Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւնն տանն Միսական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, էջ 6: Աշխարհաբար բնագրում այս տարբերակումը չի արտացոլվում: Ծուլուկու տեղանվան հետ կապված ստուգաբանության մասին տե՛ս Օրբելյան, ծնթ. 14, էջ 408:

⁸ Արշակը... հրաման է տալիս Միսականներին՝ լինել հրամանատար արքունի բոլոր զորքերին, թագավորության երկրորդը և պատերազմով շարունակ դեմ կանգնել Հոնաց դռանը, Օրբելյան, էջ 72:

⁹ Մատենագիրք Հայոց, ԺԱ հատոր, Ժ դար, Մեսրոպ Վայոցձորեցի, Մեսրոպայ երիցու Վայոցձորեցույ պատմութիւն Սրբոյն Ներսիսի Հայոց Հայրապետի, առաջար. և բնագիրը՝ Գ. Տեր-Վարդանյանի, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 682:

¹⁰ Հակոբյան Թ., Հայաստանի պատմական աշխարհագրությունը, Երևան, 1968, էջ 205:

¹¹ Ղ. Ալիշանը թեաքար նույնացնում է Վաղատնո և Սյունի վանքերը, որը սխալ է:

է հեղինակը: Սյունիքի կին և տղամարդ գործիչներին տեսնում ենք գավառի (և ոչ միայն) ամենատարբեր մասերում բազմաբնույթ գործունեություն ծավալելիս: Տաթևի համալսարանի լավագույն սաները, մեծահարուստ մեկենասները ցրվել են Հայաստանի ողջ տարածքով՝ գիտության լույսը տարածելով հայրենիքում և նրա սահմաններից դուրս¹²: Սյունիքի գիտական ակունքները կապված են Մեսրոպ Մաշտոցի հետ. նրան այստեղ սատարել են Սյունյաց տեր Վաղինակը, Կորյունի վկայությամբ՝ Վասակ Սյունի իշխանը:

Ծղուկ գավառի կենտրոն **Շաղատ քաղաքավանը** Սյունյաց գահագլուխ իշխանների և եպիսկոպոսապետի նստավայրն էր մինչև 9-րդ դ.՝ մինչ Սյունյաց պայազատ Վասակ նահապետը հաստատեց գահը Վայոց Ձորում և եպիսկոպոսական աթոռը Շաղատից տեղափոխեց Տաթև: Ալիշանը ենթադրում է, թե սկզբնական շրջանում Սյունյաց թագավորության մայրաքաղաքը եղել է Ծղուկում: Շաղատի ունեցած մշակութային դերի արձագանքները գտնում ենք Ստ. Օրբելյանի (ԼԳ.) և Մովսես Կադանկատվացու պատմություններով (Գ, ԺԺ) մեզ հասած **Պետրոս Սյունեցի Քերթովի** Բաբիկ Սյունու մասին հյուսված «**Ճառ ներքողեանի**» հատվածներից ¹³: Ալիշանն առանձնացնում է այս պատմության մատենագիտական արժեք ունեցող փաստերը, որոնք կապված են եկեղեցական սպասքի հաշվառման, պահպանման, տեսակավորման, գաղտնարանների և այլ խնդիրների հետ¹⁴: Անդովկ Սյունին թե՛ Շապուհի գանձարանից զավթած ամբողջ ավարը, թե՛ եկեղեցիների ողջ հարստությունն ամբարում է Շաղատի «քարակոփ գմբեթավոր» եկեղեցում, որը Բա-

¹² Անաստաս վարդապետի «Վասն վանորեից որ յԵրուսաղէմ» աշխատության մեջ հիշատակված է, որ սյունեցիները Երուսաղեմում հինգ վանք են կառուցել, Հայապատում, Պատմիչք եւ պատմութիւնք հայոց ի Շ. Ղեւոնդեանց Վ. Մ. Ալիշան, Վենետիկ, 1901, էջ 227-228:

¹³ Ն. Ադոնցը ապացուցում է, որ Օրբելյանը շփոթել է ժամանակով իրար մոտ կանգնած Բաբիկների. մեկը Շապուհի արքունիքում ըմբոստացած և նրան հակառակված Անդովկի որդի Բաբիկն է. տե՛ս Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 307-308:

¹⁴ Օրբելյան, էջ 62:

քիկ Սյունու հրամանով կոչվել է Մայր եկեղեցի¹⁵: Այս հարստությունների տեղում գոյանում է արհեստական բլուր, որը հետագայում մի հրաշքով հայտնաբերում է Սյունյաց Բաբիկը: Շաղատի եկեղեցու հայտնությունն այդուհետ նշվում է որպես Սյունյաց աշխարհի մայր եկեղեցու օր: Հետաքրքիր փաստ է հաղորդում Օրբելյանը, որը չի վրիպում Ալիշանի ուշադրությունից. «Բացելով Ստեփանոս Նախավկայի սուրբ եկեղեցու դռները՝ տեսնում են բազմաքանակ ոսկե և արծաթե խաչեր, բազում պատվիրանագրքեր, Սյունիքի բոլոր եկեղեցիների ուրիշ սպասքներ՝ **յուրաքանչյուրը իր գյուղաքաղաքի գրությամբ**, ինչպես նաև սուրբ ու պատվական նահատակների անթիվ ու անհամար նշխարները, որոնք մնացել էին եկեղեցիների պատերի մեջ»¹⁶: Հայտնի է, որ հիշատակարանների ծագումը կապվում է ավելի ուշ շրջանի հետ: Եթե վերոնշյալ վկայությունը Օրբելյանի խմբագրումը չէ, ապա ապացուցում է, որ եկեղեցական սպասքն ու գույքը (իսկ ձեռագրերը նույնպես դրա մասն էին), ցուցակագրվել, ցանկագրվել են:

Շաղատի զարդը Սյունյաց վարդապետարանն էր. Ալիշանը վստահ չէ վարդապետարանի հիմնական գործառույթի հարցում՝ «որպիսին ինչ էր, նոյն իսկ եպիսկոպոսարանն կղերանոց, եթե զատ ուսումնարան, ոչ ունիմ ասել ստուգի» (էջ 208), սակայն ավանդությունն ու Սյունյաց պատմիչները վարդապետարանի գործունեությունը կապել են Սահակի և Մեսրոպի անվան հետ, ինչպես Օրբելյանն է վկայում, «Սուրբ Սահակի և Մեսրոպի կողմից վերապահված էր նրանց վարդապետներին թարգմանություններ կատարել և մեկնաբանել, լինել հայոց բոլոր վարդապետների պարագլուխ և առաջատար»¹⁷: Սյունյաց վարդապետարանի հիմնադիր է համարվում Անանիա եպիսկոպոսը, ով Բենիամինի հետ միասին սա-

¹⁵ Նույն տեղում, էջ 84-85:

¹⁶ Նույն տեղում, էջ 90:

¹⁷ Օրբելյան, էջ 135: Ղ. Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հտ. 3, Վենետիկ, 1835, էջ 87-88:

տաբեց Մաշտոցին կրթական գործի կազմակերպման մեջ¹⁸։ Սահակը «շրջում էր բոլոր տեղերում, ուղղում և լրացնում էր եկեղեցու կարգերը, Մեսրոպի աշակերտ Անանիային էլ, որ թարգմանիչ էր ու առաքինությամբ լի, ձեռնադրեց Սյունիքի եպիսկոպոսության համար»¹⁹։ Բենիամինը նույնպես թարգմանիչ-մանկավարժ էր և Մեսրոպին օգնեց Աղվանից աշխարհում գրեր ստեղծելու, կարգեց թարգմանության և մանկավարժության գործին (էջ 98)։ Ե.-Զ. դդ. հայտնի են Պետրոս և Վրթանես Քերթոզների անունները²⁰։ Որ է դարում Հայաստանում հայտնի էին նաև այլ վարդապետարաններ, վկայում է հետևյալը. Կոմիտաս կաթողիկոսը (615-628 թթ.) «շրջանցելով **կաթողիկոսարանի բոլոր վարդապետարաններին**, այլև **Արշարունիքում գտնվող հայոց վարդապետարանը**, որտեղ Հայաստանի ճարտարներն ու գիտունները հավաքել էին մանուկներին», իր եղբորորդի Թեոդորոսին ուսման մեջ հմտանալու նպատակով ուղարկում է Սյունյաց վարդապետարան՝ Մաթուսաղայի մոտ կրթություն ստանալու։ Արդեն Ը. դ. այս վարդապետարանում ենք տեսնում Մովսես եպիսկոպոսի աշակերտ Ստեփանոս Սյունեցուն²¹, որի քույրը՝ Սահակդուխտը, նույնպես հմուտ էր երաժշտության մեջ և սովորեցնում էր շատերին²²։ Ը.Թ. դդ. Հայաստանի վարդապետարանների կրթական բարձր մակարդակի մասին է հիշատակվում **Մաշտոց եղիվարդեցու** «Առ տէր Գեորգ Հայոց վասն Սիւ-

¹⁸ Վ. Ալեքսանյան, Անանիա եպիսկոպոս Սյունեցի (5-րդ դար), «Էջմիածին», 1999, թ. Գ., էջ 69-76:

¹⁹ Օրբելյան, էջ 98:

²⁰ Վ. Ալեքսանյան, Սյունիքի եպիսկոպոսությունը VI դարի կեսին, «Էջմիածին», 2000, թ. Ժ, էջ 92-100:

²¹ Օրբելյան, ԻԳ., էջ 121-123: Գ. Զարբհանալեան, Հայկական դպրութիւն, Վենետիկ, 1897, էջ 489-98: Մեսրոպ Գ. Գրիգորեան, Ճշդումներ եւ յաւելումաճք Ստեփանոս Իմաստասէր Սիւնեցոյ կենսագրութեան եւ գրութեանց մասին, «Հանդէս ամսօրեայ», առանձնատիպ, էջ 438-459:

²² Օրբելյան, էջ 152:

նեաց խաչին, թէ է՞ր աղագաւ տուաւ» մի թղթում²³: Թ. դ. վերջին - Ժ. դարասկզբին, երբ աթոռանիստը Շաղատից տեղափոխվում է, «ծովացյալ փիլիսոփաների» վայր է դառնում Տաթևի վանքը:

Ծղուկ գավառի մշակութային կյանքում կարևոր դեր ունեն **Անգեղակոթը**: Ալիշանին հայտնի է միայն այս գյուղաքաղաքի «շէն եւ ընդարձակ» լինելը, եկեղեցի ունենալը: Հեղինակը «հռչակատու գեղս Անգեղակոթ»-ի մշակութային բնութագիրը հյուսում է ընդամենը ԺԵ. դարի 3 ձեռագրերի հիշատակարանների հիման վրա, որոնք մեր ճշտումներով ՄՄ 3756 (1459 թ.), 1569 (1431 թ.)²⁴ և 7968 (1459 թ.) ձեռագրերն են: Այս ձեռագրերի միջոցով Ալիշանը պարզում է Անգեղակոթի Ս. Սարգիս, Ս. Լուսավորիչ եկեղեցիները²⁵: Մաշտոցյան Մատենադարանում պահվում են Անգեղակոթում գրված այլ ձեռագրեր, որոնք հայտնի չէին Ղ. Ալիշանին և հետաքրքիր տեղեկություններ են պարունակում գյուղիս հոգևոր միջավայրի մասին: Ալիշանի հիշատակածներից ավելի վաղ՝ 1371-1378 թթ., Մատթէոս գրչի **գրած** Հաբանց վարք ամփոփող կարևոր ձեռագրում (ՄՄ 2680) խոսվում է Անգեղակոթում զարգացած կրթական միջավայրի մասին: Այս Մատթէոսը ոչ այնքան ընդօրինակող է, որքան գրող-խմբագրող, որովհետև քաջ գիտակցում է, որ քաղաճ ընդօրինակում է բովանդակությամբ

²³ «...Նորոգեր Հայաստան եկեղեցիքս ըստ բազմամարտ շինութեան նախանձեալ, եւ պէսպէս ուսմանց առատութիւնք եւ արուստաւորք եւ դպրոցք կանգուն էին յաշխարհիս եւ յոյն բարբառոյն տեղեկագոյն եւ զիւզաշուրթն նոցին թարգմանէ յովով կային»: Տե՛ս Մայր Աթոռի «Գիրք թղթոց» ձեռագիրների մէջ ամբողջութեամբ անտիպ մնացած թղթեր, «Արարատ», Վաղարշապատ, 1902, թ. Է.-Ը., էջ 749:

²⁴ ԺԵ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Մասն առաջին (1401-1450), Կազմեց՝ Լ. Խաչիկյան, Երևան, 1956, էջ 409 (այսուհետև՝ Յիշք, ԺԵ. կամ ԺԴ.):

²⁵ Ս. Ստեփանոս, Ս. Աստվածածին, Ս. Հագարափրկիչ, տե՛ս Թ. Խ. Հակոբյան, Սոս. Ս. Տելիք-Բախշյան, Հ.Խ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. Ա., Երևան, 1986, էջ 285:

նմանը չունեցող ձեռագիր²⁶։ Այս հիշատակարանով պարզվում է նաև Շաղատի տակավին անհայտ եկեղեցու անունը՝ Ս. Գրիգոր։

Կարևոր ենք համարում նաև ՄՄ 3713, 1422 թ. «ի հռչակաւոր գեղս Անկեղակոյթ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս»²⁷ **Առաքել Սյունեցու** ինքնագիր Աւետարանը, որի հիշատակարանը ցույց է տալիս, որ 1422-ին՝ կյանքի վերջին տարիներին, Առաքել Սյունեցին այլևս չէր պաշտոնավարում, այլ զբաղվում էր գրչությամբ²⁸։ Եվս մեկ ձեռագիր Աւետարան՝ ՄՄ 6401, 1428 թ. ընդօրինակում է Մովսես Անկեղակոթեցին։ Ալիշանը կարևորում է Անգեղակոթի մեկիքությունը՝ որպես ԺԷ. դարի ազատագրական պայքարի օջախ Մելիք Շաֆռազի և Բսրայել Օրոտ գործուն մասնակցությամբ։

Այսպիսով՝ Ալիշանի՝ Անգեղակոթի մասին հաղորդած մատենագիտական տվյալները և պահպանված ձեռագիր աղբյուրները ցույց են տալիս՝ **Շղուկ գավառի Անգեղակոթ գյուղաքաղաքը եղել է գավառի հայտնի կենտրոններից 14-15 րդ դդ. կեսերից. այդ դերով էր պայմանավորված նաև ավելի ուշ՝ Հայաստանի համար ճակատագրական ԺԷ. դարում, Անգեղակոթի մեկիքության ազատագրական պայքարի օջախ դառնալը։**

Վաղադին գյուղն իր համանուն վանքով հայտնի է միջնադարի հայ մատենագրության մեջ՝ որպես Հովհաննես Որոտնեցու ծննդա-

²⁶ Յիշք., ԺԴ., կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 526։ Մայր ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Ը., խմբագրութեամբ Գ. Տէր-Վարդանեանի, ցանկերը կազմեց՝ Վ. Դեւրիկեան, Երևան, 2013, էջ 1152-1160 (այսուհետև՝ Ցուցակ ՄՄ)։ «Եւ մեղսամակարթ անձամբ գրեցի զսայ հաւաքելով ի համարէն աշխարհաց, ի բազում սուրբ գրոց։ Զոր քաջ գիտէք, զի ոչ գոյ ի մի վայր այսքան ամենալի եւ անուշահամ, զմայլեցուցիչ եւ ծաղկափթիթ բուրաստան՝ լի կենդանի անմահական բանիք եւ վարուք աստուածահաճոյ սուրբ հարցն...»։

²⁷ Յիշք., ԺԵ., Ա., էջ 292-3։

²⁸ Պոտուրյանը տեղյակ չէ այս հիշատակարանի մասին, քանի որ 1422-ից հետո Առաքել Սյունեցու կյանքի մանրամասները նրան անհայտ են. Առաքել Սիւնեցի եւ իւր քերթուածները, ուսումնասիրութեամբ հրատարակեց Մ. Պոտուրեան, Վենետիկ, 1914, էջ ԺԵ-ԺԶ։

վայր, որի պատճառով և վանքը հայտնի է նաև Որոտնավանք անունով: Ալիշանը հաղորդում է, թե այն կոչվել է նաև Կարմիր վանք (էջ 219): Վաղադնի վանքի պատմության հիմնական աղբյուրը կրկին Ստ. Օրբելյանի Պատմությունն է, ըստ որի վանքի տարածքում տակավին Լուսավորչի ժամանակներից եղել է եկեղեցի Ս. Գրիգոր անունով, որը նորոգել կամ նրա մոտ նորն է կառուցել ոմն Ստեփանոս վարդապետ²⁹: Այս վանքում՝ «ընդ հովանեաւ սուրբ Կարապետին», 1385ին Գրիգոր Տաթևացին հեղինակել է **Շապու մեկնությունը** (ՄՄ 46, ինքնագիր): Այս գյուղից էր նաև Գրիգոր Տաթևացու Գալուստ անունով աշակերտը: Այսքանով սահմանափակում է Վաղադնի վանքի մասին իր տեղեկությունները Ալիշանը, սակայն ձեռագիր աղբյուրները լրացնում են նրան: Առաքել Սյունեցու կյանքի մի ողբերգական դրվագ կապված է այս վանքի հետ: Առաքել Սյունեցու միակ Բարսեղ եղբայրը, օգնական չունենալով, ինքն է ողջ գրանյութը պատրաստում և 1393 թ. ընդօրինակում Ավետարան: Կաթողիկոսի մոտ ուղևորվելիս ավագակային հարձակման է ենթարկվում և նահատակվում: Առաքել Սյունեցին երկար ժամանակ փնտրել է եղբոր դին, գտել և նշխարներն ամփոփել Վաղադնի Ս. Կարապետի դռների սեմերի մոտ, նրա ձեռքով գրած Ավետարանն ամբողջացրել է, ծաղկել, լրացրել ցրվացանկերը 1407 թ.³⁰: Ժամանակին Վաղադնի վանքով է անցել է Թովմա Մեծոփեցին և Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանցի» ինքնագրի հիշատակարանում (ՄՄ 9247) որպես ականատես խոսում է այստեղ վախճանված Ներսես Որոտնեցու մասին³¹:

Որպես Սյունիքի նշանավոր վայր և իշխանանիստ ամրոց **Որոտն** բերդը հիշատակվում է տակավին Եղիշեի կողմից (Գ եղանակ), այն հիշված է 906 թ. Տաթևի վանքի սահմանները հաստատող կալվածագրի մեջ: 1000 թ. Սյունյաց թագուհի Շահանդուխտը, իր ա-

²⁹ «Ես՝ Ստեփանոս, հիմնարկեցի ՆԽ. /// զեկեղեցի ... ով սուրբ», տե՛ս Դիւան հայ վիմագրության, պրակ II, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ, կազմեց Ս.Գ. Բարխուդարյան, Երևան, 1960, էջ 99:

³⁰ Յիշք. ԺԴ, էջ 602:

³¹ Յիշք. ԺԵ, Ա, էջ 78:

մուսին Սմբատի հրամանով, հիմնում է այստեղ եկեղեցի՝ կոփածո քարերով, իսկ 1007 թ. նրա կրտսեր որդի Սևադան կառուցում է Ս. Կարապետ եկեղեցին և նրա արևմուտքում՝ սրահ: Որոտնը միջնադարի հայ մատենագրության մեջ առավելապես հայտնի է որպես Հովհան Որոտնեցու ծննդավայր:

Ալիշանը բարձրացնում է **Հովհան Որոտնեցու Օրբելյան լինելու խնդիրը** և թեաքար նրան Օրբելյան է համարում: Այստեղ առկա է շփոթություն, որի մասին ակնարկում է հենց Ալիշանը: Տարբեր անձեր են Որոտնեցու հայրը՝ Որոտանի տեր Իվանեն, և Օրբելյաններից ծագած Իվանե Բուրթել Օրբելյանը³²: Ալիշանն ընթերցողների ուշադրությունը հրավիրում է Որոտնեցու կենսագրության մի քանի կարևոր փաստերի վրա՝ ըստ իր ձեռքի տակ եղող Տաթևացու ինքնագիր ներբողյանի³³.

ա. Որոտնեցու անունը վառ պահած նրա աշակերտ Գրիգոր Տաթևացին երբեք իր ուսուցչին **որպես Օրբելյան չի հիշատակում**. «Ազատ պայազատ յազնե Սիսական բնիկ Հայկազնի» (էջ 219):

բ. Որոտնեցու կենսագիրներն ուղղակի փաստում են, թե Գլաձորի համալսարանի գործունեության դադարեցումից հետո սաների մի մասի հետ տեղափոխվել է Հերմոն, ապա՝ Որոտնավանք և այնուհետև՝ Տաթև: Ալիշանը ենթադրում է, թե նրան **հրավիրել են** Տաթև. «Որ եւ զվիճակ Սիւնեաց յաջորդեալ (ընդգծումը՝ Դ.Ա.) փառաց ի փառս գերազանցեալ», իսկ ինքը հրաժարվել է «կամ առ ակնածութեան կամ առ անգբաղ պարապելոյ ի մակացութիւնս եւ յաղօթս»³⁴.

գ. Դեպի Երուսաղեմ ուխտագնացության ժամանակ «վիճաբանի ընդ քաղկեդոնականաց եւ յետ մահուան Դաւթի թագաւորի Վրաց, երթայ յուխտ Երուսաղեմ» (էջ 219):

³² Լ.Խաչիկյան, Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը, «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1969, թ. 9, էջ 178-179:

³³ Այս և հաջորդ տեղեկությունները հավանաբար քաղված են Ալիշանին հայտնի ինքնագիր ներբողյանից, որի աղբյուրը պարզել չի հաջողվել. նմանահանությունը տե՛ս Սիսական, էջ 219:

³⁴ Ա. Մարգարյան, Հովհան Որոտնեցու կյանքն ու գործունեությունը.

http://ysu.am/files/01A_Minasyan.pdf

դ. Ավարտում է Տաթևի զանգակատան շինությունը և ըստ Ալիշանի հանդիսավոր խոսք ասում³⁵: Ալիշանն այս ճառի մեջ զանգակատան շինարարության մասին, սակայն, ակնարկ չի տեսնում (ծնթ. 1, էջ 220):

Ե. 1378 թ. մի հիշատակարանի մեջ Որոտնեցին հիշատակվում է որպես մեկը. «Որ ունի զվիճակս Հաղբատայ եւ է սպասաւոր Ս. Նշանիս» (էջ 220): Որոտնեցու հոգևոր նկարագիրն Ալիշանը ներկայացնում է ըստ Վենետիկում պահվող Պետրոս Արագոնացու Գիրք առաքինութեան ձեռագրի (Վենետիկ հմր. 241)³⁶, որի գրիչը Որոտնեցու Մելքիսեդ անունով աշակերտն է: 1376-ին, երբ «վանքերս ամենայն ամայի եղեն», նա «վերստին զարդարեաց զեկեղեցի, եւ սնուցանէր զմանկունս Սիոնի»:

Այսպիսով՝ ձեռագիր և տպագիր աղբյուրների համադրությամբ Ղ. Ալիշանը ոչ միայն ներկայացնում է Տաթևի գիտական կյանքում նշանակալի դեր ունեցած երևելի վարդապետի՝ Հովհան Որոտնեցու կյանքն ու ստեղծագործությունը, այլ նաև լրացուցիչ, մեզ տակավին անհայտ տեղեկություններ է հաղորդում:

Ծղուկ գավառի պսակը Տաթևի վանքն է³⁷, որին Ալիշանն անդրադարձել է «Մահմանք Տաթեւոյ», «Տաթեւ», «Տաթեւոյ վանք եւ եպիսկոպոսարան» բաժիններով: Հեղինակին կասկածելի և անհավանական է թվում Տաթևի՝ Եվստաթեոս անվան հետ կապված ստուգաբանությունը երկու պատճառով. ա. Ստ. Օրբելյանը, որ այդքան մանրա-

³⁵ Վիմական արձանագրություններն այս մասին լրում են: Ճառի խորագիրը՝ «Յովհաննու Որոտնեցոյ ասացեալ ի յարհնութիւն նորակերտ շինուածոյ տաճարին և զանկակատանն առաքելական աթոռոյ վանիցն Ստաթէի, որ է գլուխ և աթոռ Սիւնեաց վիճակին, ի բանն, որ ասէ՝ Տէր ի տաճար սուրբ իւրում, Տէր յերկինս յաթոռ իւրում»:

³⁶ Տե՛ս Յուզակ Վենետիկի, հտ. Ը., էջ 532-534: Յիշք. ԺԴ., Հիշատակարանը, որի աղբյուրը Սիսականն է, խիստ պակասավոր է:

³⁷ Ծղուկի այլ սրբավայրերի համեմատ սա ամենից հայտնին և ուսումնասիրվածն է: Տաթևից հասած ձեռագրերի քնությունը տե՛ս Օննիկ Եզանեան, Մաշտոցեան Մատենադարանի ձեռագրական հաւաքածուները, խմբ.՝ Գեորգ Տէր-Վարդանեան, Երեւան, 2014, էջ 50-61:

մասնորեն կանգ է առնում Սյունյաց աշխարհի տեղագրության վրա, մանրամասնորեն անդրադառնում այստեղ ամբարված սրբություններին, չի անդրադառնում Եվստաթեսու անվանը: Բ. Թեև ավանդությունը Եւստաթեսոսին կապում է Թադեոս առաքյալի հետ³⁸, այնուամենայնիվ, սա Ալիշանին կասկածելի է թվում, քանի որ ոչ Հայսամավուրքներում, ոչ պահպանված նշխարների մեջ Եվստաթեսու անվան որևէ հիշատակություն չկա³⁹. «Ինձ ամենեւին հայկական եւ հին թուի անունը **Տաթև**, եւ հաւանօրէն երիցագոյն քան զԺամանակս քրիստոնէութեան. երաշխաւոր հնութեան եւ հայութեան է եւ այն, որ Ներսիսեան գահնամակի ընդ բարձրականսն դասին եւ **Տաթևեանք**» (էջ 224)⁴⁰: Ոչ միայն հին այլ նաև հայտնի վայր է եղել Տաթևը, Ալիշանին օրինաչափ է թվում, որ առաջին տաթևացիների անունները մեզ չեն հասել. «չեն ինչ զարմանք, զի ահա եւ այլ բազում եւ հռչակագոյն եւս տեղիք Սիւնեաց՝ **թաքուն մնացին**» (էջ 224): Եպիսկոպոսական այթոռի Տաթևում հաստատվելն անուղղակիորեն հուշում է հեղինակին, թե նախկինում այստեղ մեհենատեղի է եղել, որը հետագայում դարձել է սրբարան կամ վանատուն (էջ 225): Տաթևի մասին հիմնական աղբյուրը Ստ. Օրբելյանի Պատմության ԼԹ.-ԽԳ. գլուխներն են, որոնցում հիշատակված վավերագրերի հիման վրա Ալիշանը հյուսում է այս վանական համալիրի պատմությունը: Տակավին Ներսեսի և Սահակի օրերից բարձր քարաժայռի վրա եկեղեցի կար՝ անշուք ու անտաշ քարերով, կրաշաղախ շարվածքով, որտեղ սակավաթիվ կրոնավորներ էին բնակվում մշտաջան ճգնությամբ⁴¹: Այս տեղն են Սյունիքի եպիսկոպոսներն իշխաններից խնդրում և հաստատում Սյունյաց իշխանների կողմից խնամքով ժողովված սրբություններ՝

³⁸ Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Բ, Երևան, 1944, էջ 151:

³⁹ Նույնը՝ Ղ. Ալիշան, Արշալոյս քրիստոնէութեան Հայոց, Վենետիկ, 1901, էջ 23:

⁴⁰ Հմմտ. Մատենագիրք Հայոց, ԺԱ. հատոր, Ժ դար, Մեսրոպայ երիցու Վայցճորեցոյ պատմութիւն սրբոյն Ներսիսի Հայոց հայրապետի, էջ 685:

⁴¹ Օրբելյան, էջ 194:

Բարկենյան խաչը ⁴², Հովհաննեսի և Ստեփանոս Նախավկայի, տասնմեկ առաքյալների ու սուրբ Գրիգորի նշխարները, սուրբ Հռիփսիմեի աջը, սրբուհի Աստվածածնի մագերը: Տաթևի վերաբերյալ Օրբելյանի, ուստի և Ալիշանի բուն պատմությունը սկսվում է տեր Դավթի կողմից Տաթևի սահմանների ընդլայնումով՝ 839 թ., որոնց վավերագիրը և վիմական արձանագրությունները հիշատակում է Ալիշանը: Այդուհետ Տաթևի հետ կապ ունեցող ամեն գործիչ փորձել է հարստացնել և թանկ հիշատակ թողնել իր արած գործերից. երանելի Փիլիպպեն մի գեղեցկաշեն եկեղեցի է կառուցում Ս. Գրիգոր Լուսաուրյչի անունով «մերձ հին եկեղեցուն», երանելի Սողոմոնը կենարար **Ս. Խաչն** է ամփոփում այստեղ (Թ. դ. կես), Հովհաննեսն սկսում Պողոս-Պետրոս եկեղեցու շինարարությունը (արձանագրությամբ, էջ 227)⁴³: Ահա այս նորակառույց եկեղեցում ստեղծում են հատուկ խորշեր՝ նշխարներն ու այլ զանազան պահպանելու նպատակով: Կառուցում է գաղտնանոցներ, որբատներ, համբարանոցներ, սրբատներ և **գրատներ** և Սյունյաց եպիսկոպոսների դամբարանատեղին: Տաթևը «լի էր եւ ծովամատոյց փիլիսոփայիւք երաժշտական երգոց, ճոխ էր եւ վարժարանն վարդապետական կրթութեամբ. նա եւ արհեստաւորք նկարչացն եւ գրողացն՝ անհամեմատք»: Ալիշանը կարևորում է ութօրյա շքեղ նավակատիկի դրվագը, քանի որ մեր մատենագրության մեջ հազվագյուտ փաստ է և ճանաչողական մեծ արժեք ունի, միաժամանակ Սյունիքի ունեցած դերի վկայությունն է: Այսպիսի փարթամ վիճակում էր Տաթևի վանքը, երբ կողոպտվում են Տաթևից և հարակից վայրերից Բաղաբերդում ամբարված եկեղեցական զանազանք՝ շուրջ 10000 ընտիր ձեռագրերով⁴⁴:

Տաթևի վանքի փառքը կապված էր ոչ միայն այստեղ ամբարված սրբությունների, այլ նաև գիտակրթական այն միջավայրի հետ, որ

⁴² Նույն տեղում, էջ 194:

⁴³ Դիվան հայ վիմագրության, էջ 13: Արձանագրությունը կիսեղծ է, և վերականգնվում է ըստ Ալիշանի:

⁴⁴ Օրբելյան, էջ 280:

գարկ տվեց եռամեծ փիլիսոփա Գրիգոր Տաթևացին: Նրա կենսագրությանը Ալիշանն անդրադառնում է աշխատության 238-40 էջերում՝ հյուսելով ըստ հիշատակարանների⁴⁵: Հայտնի է՝ Մխիթարյան մատենադարանի ցուցակը նյութի կարգով է, և Ալիշանի ձեռքի տակ եղել են նախ՝ Մխիթարյան մատենադարանի՝ Տաթևացու գործերը պարունակող 34 ձեռագիր, որոնցից «Միսականում» կիրառածների գրեթե բոլորը ճշտված են մեր կողմից: Ալիշանի ձեռքի տակ է եղել նաև Գրիգոր Տաթևացու ինքնագրի նմանահանությունը, որը հատվածաբար զետեղված է «Միսականի» 219 և 238 էջերին: Ալիշանն առանձնացնում է Գրիգոր Տաթևացու կյանքի հետևյալ դրվագները.

ա. Ծնողներին. հայրը՝ Սարգիսը Քաջբերունյաց Արճեշ քաղաքից, մայրը՝ փարպեցի, հաստատվել էին Վայոց ձորում, որտեղ⁴⁶ և ըստ Ալիշանի ծնվել է Գրիգոր Տաթևացին: Յոթնամյա հասակում տրվում է կրթության, 15 տարեկան հասակում Տփլիսում հանդիպում է Հովհան Որոտնեցուն: Գործունեություն ծավալում Որոտանում (Վենետիկի 804, ինքնագիր)⁴⁷ երկու տարի պաշտոնավարում է Երնջակում, իսկ Որոտնեցու մահից հետո (1386 թ.) դառնում է Տաթևի առաջնորդը:

բ. Ալիշանը մատենագիտական տեղեկություններով լրացնում է (Վենետիկի 1278, Թովմա Մեծփեցու ինքնագիր) Մեծփավանքից **Թովմա Մեծփեցու**, 12 աշակերտների և 60 քահանաների այցը Տաթևացու մոտ: **Մխիթար Տաթևացին**, որ ձեռագրերում հիշատակվում է որպես մեծ բաբունապետ (1406-26)⁴⁸, ըստ Ալիշանի Տաթևա-

⁴⁵ Այս հատվածը փոխադրված աշխարհաբարի տե՛ս «Սյունյաց երկիր», Կապան, 2010, թ. 16, 25 սեպտեմբերի, էջ 10:

⁴⁶ Ըստ Ս. Արևշատյանի՝ Գուգարքի նահանգի Թմկաբերդ քաղաք-ամրոցում: Տե՛ս Հայ մշակույթի նշանավոր գործիչները. V-XVIII դարեր, Երևան, 1976, էջ 406:

⁴⁷ Ցուցակ Վենետիկի, հտ. Ը., էջ 120: Յիշք. ԺԵ, Ա, էջ 56. վերցրել է «Միսականից», էջ 238:

⁴⁸ Մ. Չամչյանց, Պատմություն հայոց, ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ Տեառն 1784, Վենետկ, 1786, էջ 449-450:

ցու առաջին սաներից էր⁴⁹: Ինքնագրում Թովման ուշագրավ ձեռագրագիտական տեղեկություն է հաղորդում, որը բացատրում է Ղ. Ալիշանը. Տաթևացու Լուծմունք Արտաքին գրոցը **ինքնագրից** գաղափարելիս՝ Թովման բողոքում է. «...աշխատութեամբ եւ չարչարանօք գրեցի յառաջին օրինակէն, զի ի չորս կողմանս **նիւսխայ** էր արարեալ»: Ալիշանը բացատրում է՝ Մեծփեցին գանգատվում է, քանի որ բազում ծանոթագրություններ և լրացումներ են եղել գաղափար օրինակի լուսանցային մասերում (էջ 239): Սա պատկերացում է տալիս Տաթևացու աշխատանքային մասին⁵⁰: Տաթևացին ինքն է գնում Մեծփավանք⁵¹, որտեղ նրա **աշակերտ Հովհաննեսը** կատարում է Ս. Աստվածածին եկեղեցու նավակատիկը 1408 թ., վերադառնում ու երկու տարի հետո վախճանվում է յոթանասունամյա հասակում և թաղվում մեծ շուքով:

գ. Ալիշանը ներկայացնում է Գրիգոր Տաթևացու ստեղծագործության ընդհանուր բնութագիրը և նույնպես Տաթևացու երկերի քանակը համարում է 24՝ հիշատակարանային տվյալներով ներկայացնելով հետևյալ երկերը՝ Լուծմունք գրոցն Արիստոտելի, Մեծ և փոքր Հարցմունքները, Քարոզգիրքը, Ոսկեփորիկը, Սողոմոնի գործերը և ավետարանական մեկնությունները: Ալիշանը հրաշալիորեն գիտի նրա գործերն ամփոփող հին ու նոր ձեռագրերը. անգամ ժամանակով հեղինակին մոտ կանգնած ամեն առանձին անհատի, նրա աշակերտների և գործերը տարածող երախտավորներին հիշատակում է անուն առ անուն:

Ալիշանը կարծում է, որ Տաթևացին հավանաբար իմացել է արաբերեն և թուրքերեն: Նրան հայտնի է նաև Տաթևացու դամբարանում պահվող ինքնագիր Ավետարանի մասին. ըստ ավանդության՝ այս սուրբ գրքի ասեղնագործ ծածկույթը գործել է Տաթևացու քույր

⁴⁹ Յուզակ ՄՄ, հտ. Գ, 2007, հմր. 921, էջ 1245-1246: Յիշք, ԺԵ, Ա, էջ 93:

⁵⁰ Յուզակ Վենետիկի, հտ. Է, Կազմեց Սահակ Ճեմճեմեան, Վենետիկ, 1996, էջ 852:

⁵¹ Ա. Մաթևոսյան, Գրիգոր Տաթևացին և Մեծփավանքի հիմնադրումը, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1969, թ. 2, էջ 146-154:

Հռիփսիմեն: Տաթևի պատմությունն ըստ աղբյուրների Ալիշանը հասցնում է մինչև ԺԸ դ. վերջը, երբ Տաթևն այլևս անշքացած է. 1875-ին միայն երկու վարդապետ կար այստեղ: Սյունյաց Ծղուկ գավառի քննությունն Ալիշանն ամփոփում է Սյունիքի անապատական կյանքի համառոտ բնութագրով, որի հիմնական աղբյուրները Առաքել Դավրիժեցու պատմությունն է և պահպանված վիմական արձանագրությունները: Այստեղ նույնպես Ալիշանի աշխատությունն իր նպաստն է բերում ուսումնասիրողներին⁵²: Անապատական կյանքում, ինչպես և պատմական Սյունիքի ողջ նկարագրի մեջ զգալի է Սյունեցի կանանց դերն ու նշանակությունը. նրանցով հիացած է Ալիշանը. «Ոչ ինչ ընդհատ յարանց՝ մեծ ոգիք եւ վեհագունք հանդիսանան ի վէպս եւ կանայք Սիւնեաց, պեսպես, չքնաղ եւ վսեմական կերպարանօք առաւել քան զայլ աշխարհս Հայոց» (էջ 211):

Ծղուկ գավառի մատենագիտական քննությունն ըստ «Սիսական» աշխատության ցույց է տալիս, որ Ղ. Ալիշանի գիտական վաստակն առ այսօր չի կորցրել իր ճանաչողական արժեքը, ծրագրային է տարբեր բնագավառներով զբաղվող ուսումնասիրողների համար և տակավին ասելիք ունի ժամանակակից հայագետին:

⁵² Ա. Դոլուխանյան, Ներսես Մոկացի (Կյանքը, գործունեությունը), Ս. Էջմիածին, 2009, 205 էջ:



ՌՈՒԶԱՆ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
հայ հին և միջնադարյան
գրականության և նրա դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի դոցենտ,
Մանկավարժական
գիտությունների թեկնածու*

ՂԱԼԻՇԱՆԻ «ՀԱՅՈՑ ԵՐԳՔ ՌԱՄԿԱԿԱՆՔ» ԱՆԳԼԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Իրենց երախտագիտության տուրքը Ղևոնդ Ալիշան մեծ գիտնականին հայտնելու համար Մխիթարյան միաբանությունը Ս. Ղազար կղզու տպարանում լույս աշխարհ է բերել մի չափազանց կարևոր գրքույկ «Ալիշանեան մատենադարան» վերտառությամբ: Ըստ գիտնականի, թարգմանչի, գրողի, աշխարհագետի, պատմաբանի, բանասերի, մանկավարժի, աստվածաբանի թողած հոգևոր ժառանգության՝ նրանում ներկայացված է, այսօրվա ընկալմամբ, Ալիշանի ստեղծագործության մատենագիտությունը՝ ըստ առանձին բաժինների:

«Բանաստեղծականք» բաժնում կա «Հայոց երգք ռամկականք» գիրքը, որն ունի հետևյալ ծանոթագրական բացատրությունը.¹ «Հայոց երգք ռամկականի - հայերեն և անգլերեն, մի քանի ազգային երգերը անգլերեն թարգմանված: Տպագրվել է 1852-ին»:²

Գրքի անգլերեն վերնագիրն է. “Armenian Popular songs translated into English by the R. Leo M. Alishan DD. Of the Mechitaristic society”.

¹ Մեջբերումը կատարում ենք արևելահայերենով – Ռ.Դ.:

² «Ալիշանյան Մատենադարան», Վենետիկ, Ա.թ., էջ 1-2:

Գիրքը լույս է տեսել 1852-ին: Այս թվականը խիստ կարևոր է, որովհետև ներկայացնում է Ղևոնդ Ալիշանի վերաբերմունքը դեպի հայ ժողովրդական բանահյուսությունը: Փաստորեն Խաչատուր Աբովյանից հետո ժողովրդական բանահյուսությունը հայ բանասիրության մեջ կարևորողը եղել է Ալիշանը, որն իր գիրքը գրել է հատկապես բրիտանական ընթերցող հասարակության ոչ միայն բանասերների, այլև բոլորի համար: Դրա համար էլ գրքի սկզբում դրել է նախաբան՝ “To the British public”³ հղումը:

Սա նշանակում է, թե XIX դարի երկրորդ կեսին Անգլիայում որքան մեծ հետաքրքրություն կար ոչ միայն սեփական ժողովրդի բանահյուսության, այլև աշխարհի ուրիշ ազգերի նկատմամբ:

Ալիշանն իր գրքի սկզբում դրել է շատ սեղմ առաջաբան, որում ներկայացնում է, թե հայերն Արևելքի ամենահին քաղաքակրթություններից մեկի կրողն են, որոնք երկար ժամանակ ունեցել են զարգացած ու ծաղկուն գրականություն: Սակայն նույն այդ հայերն իրենց երկրում երջանիկ չեն եղել, որովհետև քոչվոր, բարբարոս ցեղերը ոչնչացրել են նրանց արվեստն ու գրականությունը: Արարատի որդիների բանաստեղծական այս համեստ ժողովածուն առաջին անգամ է թարգմանվում եվրոպական մի լեզվով, և հեղինակը հույս ունի, որ այն կսիրվի անգլիացիների կողմից:

Գրքի վերջում Ալիշանը զետեղել է ժողովրդական տաղերին վերաբերող ծանոթագրություններ:

Մեծ գիտնականը բոլոր բանահյուսական երգերը քաղել է ձեռագրերից: Նա Խ. Աբովյանի, Գ. Սրվանձությանցի, Ղ. Աղայանի, Հովհ. Թումանյանի, Մ. Աբեղյանի ու Կոմիտասի նման չի տեսել ոչ Մեծ Հայքը և ոչ էլ Կիլիկյան Հայաստանը, նա մշտապես եղել է գրքերի ու գրադարանների միջավայրում, սակայն հասկացել է, այն էլ շատ խորը ձևով, որ որոշ գրիչներ զգացել են ժողովրդական բանահյուսության գեղարվեստական ու ճանաչողական արժեքը ու դրանց առանձին նմուշներ գրառել են գրչագիր մատյաններում:

³ «Բրիտանական հասարակությանը»:

Անշուշտ, միջնադարագետ Ասատուր Մնացականյանն իր արժեքավոր «Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր» գրքի մտահղացումը ստացել է Ալիշանի այս գրքից:⁴

Ալիշանի ժողովածուի «Երգ արագիլի» տաղի ծանոթագրության մեջ, որն անգլերեն է, կարդում ենք. «Այս երգը շատ փոխված է ձեռագրերում, որոշ ձեռագրերում կարճ է, իսկ որոշ ձեռագրերում՝ երկար, մենք բոլոր տարբերակները միացրել ենք»:⁵

Ահա «Երգ արագիլի» տաղից հատվածներ՝ հայերեն ու անգլերեն.

To the stork

Welcome stork!

Thou stork welcome!

*Thou hast brought us the
sign of spring.*

Thou hast made our heart gay.

Descend o stork!

Descend o stork upon our roof,

Make thy nest upon our ash-tree.

Thou our dear one.

Stork, I lament to thee;

Yes, o stork, I lament to thee,

I will tell my thousand sorrows,

The sorrows of my heart,

the thousand sorrows.

Երգ արագիլի

Արագիլ, բարով եկիր,

Դուս արագիլ, բարով եկիր.

Ըմե գարնան նըշան բերիր,

Դու մեր սրբտիկ զըւարթ արիր:

Արագիլ, մեզի իջիր,

Դուս արագիլ մեր տուն իջիր,

Մեր խացի ծառին բունիր,

Դու մեր սիրուն:

Արագիլ, քե գանգըտիմ,

Հա չ արագիլ քե գանգըտիմ.

Իմ հազար ցաւերս ասիմ

Սըրտիս ցաւեր հազար ցաւ.⁶

Ալիշանի ժողովածուի հետազոտական ընթերցումը համոզիչ ձևով վկայում է, թե այդ գիրքը ծանոթ է եղել հայ գրողներին ու նրանից

⁴ Աս. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, 671 էջ:

⁵ Ղ. Ալիշան, Հայոց երգք ուսմականք, Վենետիկ, 1852, էջ 84:

⁶ Նույն տեղում, էջ 60-61:

օգտվել են շատերը: Գրքի հիման վրա գրվել են նոր ստեղծագործություններ:

Հանրահայտ է, որ Ռաֆայել Պատկանյանը սովորել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում, և նրա գրականության ուսուցիչը Մկրտիչ Էմինն էր, ով շատ էր գնահատում ժողովրդական բանահյուսությունը ու իր սաներին մղում էր հետամուտ լինել ժողովրդական բանահյուսության գոհարներից քաղելու թեմաներ, մտքեր, պոեմներ:

Մեր ձեռքի տակ եղած «Հայոց երգք ռամկականք» գիրքը ժամանակին պատկանել է հայ դասական գրող Մուրացանին: Գրքի տիտղոսաթերթի վրա կա Մուրացանի կնիք ընծայականը: Ահա այն՝

ՆՈՒԷՐ

Ս.ԷԶՄԻԱՇՆԻ ԳԷՈՐԳԵԱՆ

Ժառանգաւորաց ճեմարանին

ՄՈՒՐԱՅԱՆ՝ ից

25 Սեպտեմբ. 1899 ամլ.

Ռ. Պատկանյանի պատմվածքներից մեկը կոչվում է «Չախու»⁷, որի կենտրոնական դեմքը Մարտիրոսն է, իսկ պատմվածքի շարժիչ ուժը չախուի՝ դանակի կորուստը: Ալիշանի տպագրած մի տաղն էլ կոչվում է «Տաղս խաղալիկ է ի չախու»: Նրանում պատմվում է չախուի մասին, որը կորել է ու ցավ է պատճառել Մարտիրոսին: Գուցե Ռ. Պատկանյանը ծանոթ է եղել Ալիշանի ռամկական երգերի ժողովածուին և այնտեղից վերցրել է և՛ Մարտիրոսի անունը, և՛ իր պատմվածքի վերնագիրը:

Ահա երկու հատված «Տաղս խաղալիկ է ի չախու» գործից: Ալիշանը տաղի վերնագրում անգլերեն գրում է կորած դանակի մասին. “On a little knife lost”.⁸

This song had written Martiros:

My knife was fond of ham:

They carried me to the wedding of a bridegroom,

⁷ Ռ. Պատկանյան, Երկեր, Երևան, 1980, էջ 323-350:

⁸ Ղ. Ալիշան, Հայոց երգք ռամկականք, էջ 74:

*I had not advantage, because I lost it.
 My knife said to me: Care not so much:
 Rejoice that thou hast found me:
 Till Jyly thou must have patience,
 And then I will give thee to eat cucumber with honey.*

*Երգս է գրրած Մարտիրոսի.
 Չախուս յաշըդ էր չոր մըսի.
 Հարսնիք տարան ի նոր փեսի,
 Խէր չըտեսայ, քան կորուսի:
 Չախուս ասէր. Խիստ մի հոգար,
 Ուրախացիր երբոր գըտար.
 Մինչ ի յուլիս ունիս դիժար
 Որ կերցընեն մեղրով խիար:⁹*

Հայոց ռասկական երգերի ժողովածուն բացվում է «Ի Լեւոն որ-
 դի Հեթմոյ Ա» վիպական տաղով, որի մի շարք տարբերակները
 Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերից տպագրել է
 Ասատուր Մնացականյանը:¹⁰ Երգի առիթով Մնացականյանն ունի
 հետևյալ ծանոթագրությունը. «Քննվող երգը ծնվել է հավանաբար
 XIII դարի 70-ական թվականներին: 1266 թ. եգիպտական զորքերը
 (մամլուքները) արշավում են Կիլիկիայի վրա. Հեթում Առաջին թա-
 գավորը կազմակերպում է դիմադրություն, սակայն պարտվում է:
 Թշնամին մեծ ավարի և բազմաթիվ գերիների հետ իր ձեռքն է գցում
 նաև Լեւոն արքայորդուն: 1268 թ. տեղի է ունենում հաշտության
 պայմանագրի ստորագրում, որից հետո Լեւոնն ազատվում է գե-
 րությունից և շատ չանցած՝ դառնում թագավոր»:¹¹

Այս նույն վիպական տաղի համար Ալիշանն անգլիացի ընթեր-
 ցողի համար ունի հետևյալ ծանոթագրությունը. «Այս երգերը կամ

⁹ Նույն տեղում, էջ 78-79:

¹⁰ Աս. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, էջ
 228-232:

¹¹ Նույն տեղում, էջ 544:

պոեմները գրված են հայ ռամիկ լեզվով, բայց տարբեր բարբառներով՝ չնայած նրանցից շատերը մոտ են գրական լեզվին: Նրանք նաև ստեղծվել են տարբեր դարաշրջաններում՝ XIV և մի քանիսը XIII դարից մինչև վերջին դարին մոտ: Դրանց մեծ մասը մենք քաղել ենք մեր՝ Սուրբ Ղազարի գրադարանի հայկական ձեռագրերից, բայց այդ պատճեններից մի մասը խիստ սխալ են... և նրանցում կան օտար բառեր, դրա համար էլ կցում ենք հետևյալ սեղմ բացատրությունները: Այս Լևոնը, որ հետո դարձավ Լևոն III, պատերազմեց իր հոր բացակա ժամանակ Եգիպտոսի սուլթանի դեմ, որը նվաճել էր Կիլիկիան և գերել էր նրան ու տարել Եգիպտոս: Որոշ ժամանակ անց նրա հայրը՝ Հայթոնը կամ Հեթում I-ը, վերադառնալով Մոնղոլիայից, սկզբում զինված ուժով, հետո բանակցելով սուլթանի հետ՝ վերադարձնում է իր որդուն: Մեյդանը թուրքերեն բառ է, որ նշանակում է հրապարակ: Սիսը եղել է Կիլիկիայի հայ թագավորների մայրաքաղաքը և հիմա հայ պատրիարքի նստավայրն է:¹²

Պատմական պանդխտության երգ է «Ողբ Ջուղայեցուց» տաղը: Այն կապված է Շահ Աբասի հայերի բռնի արտագաղթի հետ, որը տեղի է ունեցել 1604-ին: Գաղթի է ենթարկվել նաև վաճառաշահ հարուստ գյուղաքաղաք Ջուղան, որի բնակիչներն էլ հորինել են այս ողբը:

Ջուղայի հայերի բռնի արտագաղթի մասին մանրամասն գրել է Առաքել Դավրիժեցին:¹³ Ողբի մի հատված տպագրել է Լևոն իր «Հայոց պատմության» մեջ:¹⁴ Ահա մի հատված այդ սրտառույց տաղից.

The Armenians in their emigration from Old Ciulfa

Woe to ye poor Armenian people!

Without a fault and without a thought ye have been

scattered;

¹² Ղ. Ալիշան, Հայոց երգք ռամկականք, էջ 83:

¹³ Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Երևան, 1988, էջ 55-66:

¹⁴ Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1969, էջ 247: Տե՛ս նաև Ա.Դովուխանյան, Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 2008, էջ 139:

*Ye are gone into slavery to Ispahan,
Hungry and thirsty and naked and poor.
Ye have supported a hundred thousand sorrows,
And ye have never put your foot out of your sweet
native country:
But now ye leave the tombs of your parents,
And abandon to others your churches and houses.*

Ողբ Ջուղայեցոց

*Ափսոսքեզ Հայոց խեղճիկ ժողովուրդ,
Յիրուցան ելաք անմեղ անխորհուրդ.
Գերի գնաման աք դէպ ի Խորասան,
Քաղցած ու ծարաւ, տկլոր թշուառական:
Խարհիւր ու խազար ցաւի դիմացաք
Ձեր քաղցրիկ երկրէն ոտ դուրս չըդրաք.
Խիմի ձեր խօր մօր գերեզման թողաք,
Տըներն ու ժամերը ուրիշի տուաք:¹⁵*

Ալիշանի տպագրած «Յամէն առաւօտ եւ լոյս» սկսվածքով տա-
ղը Մայիս Ավդալբեգյանը զետեղել է XVI դարի բանաստեղծ Գրիգո-
րիս Աղթամարցու բանաստեղծությունների մեջ:¹⁶ Ա. Մնացական-
յանը այն համարում է ժողովրդական երգ:¹⁷

Ալիշանի ժողովածուի շատ երգերի հանդիպում ենք Կոմիտա-
սի «Հազար ու մի խաղ» ժողովածուում, որը հրատարակել են Կոմի-
տասն ու Մանուկ Աբեղյանը 1905-ին Վաղարշապատում: Դրանցից
մեկը «Երգ հարսին» հյուսվածքն է: Այն ներկայացնում է երիտա-
սարդ աղջկան, որը տխուր հրաժեշտ է տալիս տան առարկաներին,
բնությանը, հարազատներին, որովհետև չգիտի ինչպիսին է լինելու

¹⁵ «Հայոց երգք ոսմկականք», էջ 12-13:

¹⁶ Գրիգորիս Աղթամարցի, Տաղեր, Երևան, 1984, էջ 107-109:

¹⁷ Աս.Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, էջ 409-430:

իբ ամուսնական կյանքը: Աղջիկը ներկայացված է որպես շուշան ծաղիկ, որը մաքրության ու անաղարտության խորհրդանիշն է.

Little tree, tremble not;	Ծառուկ մի՛ դողա.
It is for me to tremble,	Ես եմ՝ դողալու,
To bring lilies.	Շուշան տանելու:

Little leaf, be thou not thrown down;	Տերիկ մի՛ թափի.
It is for me to be thrown down,	Ես եմ՝ թափելու,
To bring lilies.	Շուշան տանելու:

Sun, arise not;	Արեւ դուն մ՛ելնի.
It is for me to arise,	Ես եմ ելնելու,
To bring lilies.	Շուշան տանելու:

Sun, circulate not;	Արեւ մի՛ պատի.
It is for me to circulate,	Ես եմ պատելու,
To bring lilies.	Շուշան տանելու: ¹⁸

«Կռունկ, ուստի՞ կուգաս, ծառայ եմ ձայնիդ» հրաշալի երգը, որի մշակումը Կոմիտասինն է և առաջիններից մեկը տպագրել է Ղևոնդ Ալիշանը.

The pilgrim to the crane.

Crane, whence doest thou come? I am servant of the voice.

Crane, hast thou not news from our country?

Run not to thy flock, thou wilt arrive soon enough:

Crane, hast thou not news from our country?

I have left my possessions and vineyard, and I have come hither:

How often do I sigh, it seems that my soul is torn from me:

Պանդուխտ առ կռունկ

Կռունկ, ուստի՞ կուգաս, ծառայ եմ ձայնիդ.

¹⁸ Ղ. Ալիշան, Հայոց երգք ոամկականք, էջ 36-37: Հարսանեական երգեր. տե՛ս նաև Հազար ու մի խաղ. Ժողովրդական երգարան, Երևան, 1969, էջ 110-118:

Կոունկ, մեր աշխարհէն խաւարիկ մի չունի՞ս:

Մի վագեր երամիդ՝ շուտով կը հասնիս:

Կոունկ, մեր աշխարհէն խաւարիկ մի չունի՞ս:

Թողեր եմ ուեկեր իմ մըլքերս ուայգիս:

Քանի որ ա՛խ կ'անեմ կուքադուի հոգիս:¹⁹

Կարծում ենք, որ Ալիշանի «Հայոց երգք ռամկականք» ժողովածուից օգտվել են նաև Ղ. Աղայանն ու Հ. Թումանյանը՝ իրենց մանկական ռոմանսները գրելիս: Թե՛ Ալիշանի և թե՛ Թումանյանի մոտ կաքավը ներկայացվում է ժողովրդական երգին հատուկ քնքշանքով:

Ղևոնդ Ալիշան

<i>Thy nest is enameled with flowers,</i>	<i>Քես բենն հինած ծաղկըներով,</i>
<i>With vasilico, narcissus and water-lily:</i>	<i>Ռըհան նարկիս նունուֆարով.</i>
<i>Thy place is full of dew,</i>	<i>Քես տեղ լըցուած է շաղերով,</i>
<i>Thou delightest in the fragrant odour.</i>	<i>Դիւ կըմայլիս անմահ հոտով.</i>
<i>Ah! Pretty, pretty,</i>	<i>Ա՛յ խօրօտիկ խօրօտիկ,</i>
<i>Ah! Dear little partridge!</i>	<i>Ա՛յ սիրունիկ կեաքեալիկ:²⁰</i>

Հովհաննես Թումանյան

*Քո բուն հյուսած ծաղիկներով՝
Շուշան, նարգիզ, նունուֆարով,
Քո տեղ լըցված ցող ու շաղով,
Քընես, կելնես երգ ու տաղով,
Սիրունի՛կ, սիրունի՛կ.
Նախշուն կաքավիկ:²¹*

Համեմատությունը վերհանում է ժողովրդական երգի ու թումանյանական մշակման չնչին տարբերությունները: Կրկնակի մեջ Թումանյանը խորոտիկ բառը փոխել է առաջին տողում սիրունի-

¹⁹ Ղ. Ալիշան, Հայոց երգք ռամկականք, էջ 48-53:

²⁰ Նույն տեղում, էջ 56-57:

²¹ Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու (ԵԼԺ): Տասը հատորով, հտ. I, Երևան, 1988, էջ 233:

կով, իսկ երկրորդ տողի սիրունիկը՝ նախշունով: Բոլորովին փոխված է ժողովրդական երգի քառյակի վերջին տողը: Բոլոր դեպքերում պահպանված է ժողովրդի մարդու հիացմունքը կաքավի նկատմամբ:

Թումանյանը մանկական ոտանավորներում մշակված ներկայացնում է նաև «Մանուկն ու ջուրը» խաղերգը: Այս ոտանավորը Ալիշանից հետո տպագրել է նաև Գարեգին Սրվանձտյանցը: Կարծում ենք, որ Թումանյանը ծանոթ է եղել և՛ Ալիշանի, և՛ Սրվանձտյանցի օրինակներին: Խիստ արժեքավոր գիտելիքներ կան այս տաղում մանկան համար: Հայաստանը հայտնի է իր սառնորակ ու քաղցրահամ աղբյուրներով: Ջուրը կյանք է, առանց ջրի ամեն ինչ մեռնում է, դրա համար մանկական խաղերգում խանդաղատանք կա պաղ ու անուշիկ ջրի նկատմամբ: Ալիշանի մոտ տաղը ունի հետևյալ տները.

The youngman and the water

Down from yon distant mountain

The water flows through the village. Ha!

A dark boy came forth

And washing his hands and face,

Washing, yes washing,

And turning to the water asked. Ha!

Water, from what mountain dost thou come?

O my cool and sweet water! Ha!

I came from that mountain,

Where the old and the new snow one on the other.

Մանուկն և ջուրն

Այդ վայրի լեռնէտ ի վայր

Ջուրն ի շինուտ մէջն անցանի. Հա՜յ.

Թուխ մանուկ մի դուրս ելեր

Ձեռքն ու զերեսն է լուացեր.

*Լուացեր, հա՛յ լուացեր,
 Դարձեր ի ջուրն հարցունք եղեր. Հա՛յ:
 Ջուր դու ի յո՞ր լեռնէ կուգաս,
 Իմ պաղիկ ջրիկ ու անուշիկ. Հա՛յ:
 Ես ի յայն լեռնէն կուգամ,
 Որ հին ու նոր ձիւնն ի վերայ. Հա՛յ.²²*

Թումանյանի «Մանուկն ու ջուրը» վերնագրի տակ գրված է ժողովրդական, և ոտանավորը բանաստեղծը հորինել է, ավելի շուտ մշակել՝ 1911-ին: Թումանյանի երկերի լիակատար ժողովածուի առաջին հատորում, ասվում է, թե մանկական այդ երգի տարբերակը Թումանյանը հավանորեն վերցրել է Կ. Կոստանյանցի «Նոր ժողովածուի» Բ պրակից՝ Թիֆլիս, 1892 թ.:²³ Միաժամանակ նշվում է, թե այդ ժողովրդական երգը մշակել է XVII դարի տաղասաց Երեմիա Չելեպի Քյոմուրճյանը:²⁴

Աստվածաշնչային մոտիվները ևս դարձել են բանահյուսության նյութ: Ծննդոց գրքի թեմատիկայով է գրված «Ողբ Ադամայ» (“Elegy of Adam”) երգը: Ադամը, նստած դրախտի դռանը, դառնագույն ձևով լալիս է, որովհետև Եվան, խաբվելով օձից, ստիպել է, որ Ադամն ուտի «անմահ պտուղը», և Աստված իսկույն իմացել է այդ մասին.

*With the leaf of the figtree I girt my reins,
 Among the trees I hid myself:
 He come and called: Adam where art thou?
 I replied: I am naked:*

*Տերեւ թզենւոյն զինեւ սփածայ,
 Ի մէջ ծառոց անկեալ թագեայ.
 Եկն եւ ձայնեաց. Ադամ, ու՞ր ես.
 Ես ձայն տըլի, թէ Մերկ եմ եւ.²⁵*

²² Ղ. Ալիշան, Հայոց երգք ռամկականք, էջ 62-63:

²³ Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հտ.1, էջ 696:

²⁴ Նույն տեղում:

²⁵ Ղ. Ալիշան, Հայոց երգք ռամկականք, էջ 26-27:

Այս հատվածը Աստվածաշնչի «Ծննդոց» գրքում հետևյալն է. «Տեր Աստված կանչեց Ադամին ու ասաց նրան. «Ո՞ր ես»: Ադամը պատասխանեց. «Լսեցի քո ձայնն այստեղ՝ դրախտում, ամաչեցի, որովհետև մերկ էի և թաքնվեցի»:²⁶

Դեռ կարելի է շատ օրինակներ բերել Ալիշանի վերոհիշյալ ժողովածուից: Կարևորն այն է, որ այս ժողովածուն վերստին հաստատում է, թե մարդկային քաղաքակրթության հին օրրաններից մեկում՝ Վենետիկի մոտ գտնվող Սուրբ Ղազար կղզում հաստատված Մխիթարյան միաբանությունը եվրոպական առաջադեմ երկրներին համաքայլ զարգացնում էր հայ բանագիտությունը: Այդ շնորհակալ գործի առաջատարներից գուցե և հզորագույնը Ղևոնդ Ալիշանն էր, ով տիրապետում էր բազում լեզուների, նաև մեծ մանկավարժ էր:

«Հայոց երգք ռամկականք» գիրքը մեծապես օգտակար է այսօրվա բանասիրական ֆակուլտետների ուսանողների համար: Նախ՝ նրանում կան ժողովրդական բանահյուսության քնարերգության մի շարք ենթաժանրեր, և երկրորդ՝ բանահյուսական երգերի ալիշանական փայլուն թարգմանությունն անգլերենով կնպաստի ուսանողությանը՝ հաճելի ձևով յուրացնել նաև անգլերենը, որի իմացությունն այնքան կարևոր է բանասերի, նաև հմուտ ուսուցչի համար: Այս առումով Ալիշանի գիրքը, որը տպագրվել է 168 տարի առաջ այսօր էլ արդիական է ու պիտանի հայ ուսանողության, հատկապես բանասերների համար:

²⁶ «Ծննդոց», 3,9-10:



ԳԱՅԱՆԵ ՄԱՐԴՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
հայ հին և միջնադարյան
գրականության և նրա դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի դոցենտ,
Մանկավարժական
գիտությունների թեկնածու*

ՂԵՎՈՒԴ ԱԼԻՇԱՆԸ ՀԱՅ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԱՍՏՎԱԾՆԵՐԻ ԴԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆ

Հայ հեթանոս աստվածների մասին առաջին բացատրություններին հանդիպում ենք ոսկեդարի հայ մատենագրության մեջ՝ Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ, Եզնիկ Կողբացի, Մովսես Խորենացի: Հեթանոսական աստվածների ու հայերի կրոնական հնագույն հավատալիքների մասին սակավաթիվ փաստեր հաղորդում են նաև հետագա մատենագիրները՝ Սեբեոս, Թովմա Արծրունի, Ներսես Շնորհալի և ուրիշներ:

Հայագիտության առաջադիր խնդիրներից է եղել գիտությանը ներկայացնել հայ հեթանոս աստվածների պաշտամունքային հարստությունը՝ այդ սակավաթիվ փաստերն ի մի բերելով, մանավանդ որ աստվածներին նվիրվել են շքեղ տաճարներ ու ձոնվել գրական ստեղծագործություններ:

Հայ հեթանոսական կրոնի համեմատական փաստաշատ և, անշուշտ, հավաստի աղբյուրը եղել և մնում է Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը»:

Առաջինը հայագիտության մեջ, ըստ Ագաթանգեղոսի ու մյուս մատենագիրների հաղորդած փաստերի, հայ հեթանոսական կրոնի մասին գիտական հետազոտություն է գրել Մոսկվայի Լազարյան ճեմարանի պրոֆեսոր Մկրտիչ Էմինը: Նրա աշխատությունը գրվել

է ռուսերէն, որովհետև Էմինի նպատակն է եղել հայագիտական իր հետազոտությանը տալ առավել մեծ ընթերցողական շառավիղ:¹ Մ. Էմինի այս ուսումնասիրությունն այնքան մեծ հետաքրքրություն է առաջացրել, որն անմիջապէս թարգմանվել է ֆրանսերէն², հետո էլ ֆրանսերէնից՝ արևմտահայերէն:³

Էմինի այս ոչ ծավալուն հետազոտությունը (72 էջ) ազդակ դարձավ շատ հայկաբանների համար՝ հետագայում անդրադառնալու նույն խնդիրներին: Այդ անդրադարձերի մեջ կարևորագույնը, անշուշտ, 1895 թ. Վենետիկի Սուրբ Ղազար կղզում հրատարակված Ղևոնդ Ալիշանի «Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց» ծավալուն գիրքն է (522 էջ): Գրքի առաջաբանը կոչվում է «Գիտելիք», որում հիշեցնում է, որ իր գիրքը մաս առ մաս սկզբում տպագրվել է Մխիթարյանների «Բազմավէպ»-ում, ապա ներկայացվել որպէս գիրք: Եվ որպէս բացթողում՝ «Բազմավէպ»-ում տպագրված կենդանիների պաշտամունքին վերաբերող նյութի՝ պատմում է հետևյալ իրական դեպքը՝ պատահած Բրուսայի մզկիթի մոտ, որը գրառել է «մեր Վանական Վարդապետը»: Բրուսայի մեծ մզկիթի հրապարակում, ուր տեղացիները սովորություն ունեին նստել կամ զբոսնել, կային երկու բարձրաբերձ ծառեր, որոնցից մեկի վրա մայր արագիլը թուխս էր նստել: Հանկարծ երկու շար արագիլներ, եռանկյունի ձևացնելով, մոտենում են արագիլի բնին, հերթով կտցում մայր արագիլին՝ արյունլի անում ու ցած գցում: Տեսնողները հետաքրքրությունից դրդված՝ մի տղայի բարձրացնում են ծառի վրա՝ պարզելու պատճառը: Տղան բնի մեջ տեսնում է երկու սագի ձու՝ փոխանակ արագիլի: Պարզվում է՝ մի ուրիշ տղա նախապէս վերցրել է արագիլի ձվերը ու տեղը դրել սա-

¹ М. Эмин, Очерк религии и верований языческих армян, Исследование, Москва, 1864, 72 с.

² J.B. Emin, Recherches sur le paganisme arménien, Paris, 1864.

³ Մ. Էմին, Հնախօսութիւն ի վերայ հայկական հեթանոսութեանց, Արմաշ, 1875, 79 էջ:

զինը: Արագիլի ձվերը մզկիթներում զարդ էին համարվում: Մայր արագիլը զոհվում է հանուն արագիլների արդարության:⁴

Արագիլ եբրայերեն նշանակում է մարդասիրություն կամ շնորհք, իսկ հունարեն նշանակում է սեր, որովհետև արագիլը մեծ սեր ունի իր ծնողների նկատմամբ և վերջիններիս կերակրում ու խնամում է մինչև խորը ծերություն:⁵

Ալիշանը հիշեցնում է, որ Ներսես Շնորհալիյն ևս փառաբանում է արագիլին և Հոիփսիմեին նվիրված շարականում վերջինիս մեծարում է՝ կոչելով օձասպան արագիլ.

Իսկաճեմ աղաւնի օդապար,

Նոր Նոյեան տապանն է քոյդ դադար,

Օձասպան արագիլ դու արդար.

Հրեշտակ հրաշագեղ Հոիփսիմէ:⁶

Ալիշանի՝ հայ հեթանոսական կրոնին նվիրված հետազոտությունը սկսվում է հնագույն, վաղնջական պարզունակ կրոնական պատկերացումներից և հասնում մինչև հեթանոս հայ աստվածներին, որոնց կոչում է չաստված: Նախնական կրոնի՝ անիմիզմի ժամանակ պաշտել են լեռը, քարը, կրակը, ջուրը, բույսերն ու ծառերը, տիեզերական մարմինները՝ արևը, լուսինը, աստղերը և այլն: Մնոտիապաշտության դրսևորումներ է եղել վիշապի, արալեզների համբարումների, պայերի, հուշկապարիկների պաշտամունքը: Այս սնոտի հավատալիքների դեմ բողոքում էր Եզնիկ Կողբացին դեռևս հինգերորդ դարում. «Ուրեմն պարզ է, որ հուշկապարիկներն ու իշացուկերը անուններ են՝ առանց էականի: ... Պայը երբեք էլ մարդկանցից չի ծնվել, որ ծովակներում բնակվի: ... Ոչ էլ շնից սերված ու ինչ-որ աներևույթ էականների հետ ապրող որեւէ բան կա, որ երբ մեկը պատերազմում վիրավորված

⁴ Ղ. Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, Վենետիկ, 1895, էջը համարակալված չէ, հաշվելով՝ էջ 3-4:

⁵ Բառարան Սուրբ գրոց, Կ. Պոլիս, 1881, էջ 60:

⁶ Ներսես Շնորհալի, Երգեր, Եդեսիայի ողբը, առաջաբ. և թարգմ.՝ Լևոն Միրիջանյանի, Երևան, 1982, էջ 64:

ընկնի, (նրան) լիզի ու առողջացնի: Այս բոլորն առասպելներ են ու պառավական բարբաջանքներ և առավելապես դներից (կրած) մոլորություններից (են լինում)»:⁷

Ալիշանի աշխատության VIII (Ը) գլուխը կոչվում է «Դիցագունք», իսկ IX-ը (Թ)՝ «Դիք»: Այս երկու գլուխներն էլ դարձել են մեր հետազոտության նյութը:

«Դիցագունք» գլխում կան հեթանոսական բազմաստվածության և կիսաստվածության երևույթների բացատրությունները, որոնք քաղված են Ագաթանգեղոսի «Հայոց պատմություն»-ից: Բագում աստվածներին հորինել են մարդիկ, ովքեր տեսնելով որոշ քաջ, մեծագործ մարդկանց, հանդգնեցին նրանց աստված համարել: Նրանց կոչեցին վեհ ու դյուցազն: Ըստ որում սնոտի ձևով ոմանց կոչեցին մեծ կամ փոքր, ոմանց՝ կիսաստված, ոմանց՝ աստծուց սերյալ, բայց նաև հասարակ մարդ:⁸

Մարդկությանը հայտնի է հին ազգերի դիցաբանությունը՝ մանավանդ հույների, լատինացիների, եգիպտացիների և հնդիկների: Ալիշանին հետաքրքրում են հայկական աստվածները, որոնք նրա կարծիքով ժամանակին եղել են նշանավոր մարդիկ, իսկ հետո դասվել են աստվածների շարքում ու պաշտվել: Այս նույն միտքը կա Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» մեջ: Ահա թե ինչ է ասում Գրիգոր Լուսավորիչը Տրդատ Մեծին, երբ հրաժարվում է երկրպագել հեթանոս հայերի Անահիտ աստվածուհուն. «Այլ, որ դու կոչում ես մեծ Տիկին Անահիտ՝ գուցե եղել է այդպիսի մեկը երբեմնի ժամանակներում: Քանզի դիցապաշտ կախարդությամբ և դների տեսակ-տեսակ ցնորքներով համոզել են այն ժամանակվա մարդկանց, որ մեհյաններ շինեն, կուրքեր կանգնեցնեն և երկրպագեն»:⁹

⁷ Եզնիկ Կողնացի, Եղծ աղանդոց, թարգմ., ներածութ. և ծանոթագր.՝ Ա.Ա. Աբրահամյանի, Երևան, 1970, էջ 77-78:

⁸ Ղ. Ալիշան, Հին հուստոք կամ հեթանոսական կրօնք Հայոց, էջ 235:

⁹ Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմ. և ծանոթագր.՝ Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983, էջ 43:

Այդօրինակ դյուցազունների շարքին է դասում Ալիշանը մեր ազգի անվանադիր Հայկին, որին պատմահայր Մովսես Խորենացին ևս կոչում է դյուցազուն. «Գիտցած եղիր, ասում է **ն՝վ մեծդ դյուցազունների մեջ**, որ Բելը դիմում գալիս է քո վրա հավերժական քաջերով և երկնադեզ հասակով մրցող հսկաներով»:¹⁰

Հումերոսի «Իլիականի» գլխավոր հերոս Աքիլլեսն էլ համարվում էր կիսաստված, որովհետև նա Թեսալիայի Պելես թագավորի և ծովային դիցուհի Թետիսի որդին էր, դրա համար էլ մահկանացու էր:¹¹

Հայկին, որին Ալիշանը անվանում է հայերի առաջին դյուցազուն, համեմատում է հունական Օրիոնի հետ: Օրիոնը քաջ որսորդ էր, իսկ Հայկը՝ աղեղնավոր: Նրանք երկուսն էլ հետո երկնքում դառնում են համաստեղություններ ու աչքի են ընկնում իրենց պայծառ լույսով: Գրաբարում մեծ ուժ ունեցողներին անվանել են Հայկաչափ: Նույնիսկ Գրիգոր Նարեկացին Աստվածածնի գեղեցկության չափը պատկերելու համար օգտագործում է **Հայկանման** բառը:¹²

Հայկի սերնդից ամենահայտնի դյուցազնը Արան է՝ մանավանդ ըստ հին վիպասանների Շամիրամի հետ ունեցած հարաբերությունների առնչությամբ:

Նշանավոր մարդկանց աստված կոչելու երևույթի բացատրությունը թերևս ամենից ավելի դիպուկ ներկայացնում է Եզնիկ Կողբացին՝ օրինակներ բերելով տարբեր ազգերից. «Բայց հեթանոսությունն սկիզբ առավ Սերուքի ժամանակներից, որովհետև, երբ աշխարհ եկած մի քաջ անձնավորություն մեռնում էր, նրա քաջության հիշատակի համար պատկերը ներկերով նկարում էին, և տխմարները, այնտեղից սովորելով, հետզհետե պաշտում էին (այդպիսիներին)» ... Եվ այն ժամանակվանից հիմնադրված արձանագործությունը իր (այդ) նշանա-

¹⁰ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 43:

¹¹ Դիցաբանական բառարան, Երևան, 1985, էջ 43:

¹² Ղ. Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, էջ 240:

կույթամբ անցավ եգիպտացիներին, Բաբելացիներին, փոյուգացիներին, փյունիկեցիներին և ապա՝ հելլեններին, այսինքն հույներին»¹³:

Ալիշանի կարծիքով Տիգրանը և նրա որդի Արտավազը եղել են գեղարվեստի ու գեղեցիկ դպրության պաշտոններ: Ըստ Մտրաբոնի՝ պարսիկներների աստվածներին պաշտում էին և՛ մարերը, և՛ հայերը:¹⁴ Իսկ երբ հունական կուռքերն են մտնում Հայաստան, նոր աստվածները հարմարեցվում են հայկականին: Օրինակ՝ Դիոսը՝ Արամազդին, Արտեմիսը՝ Անահիտին, Աֆրոդիտեն՝ Աստղիկին, Հերակլը՝ Վահագնին և այլն:¹⁵

Արամազդը հայերի գերագույն աստվածն էր, որին հույները Դիոս կամ Ջևս են կոչում: Լատինացիներն Արամազդին կոչում են Յուպիտեր, պարսիկները՝ Ուրմիզդ: Զրադաշտականները գնդերենով իրենց գերագույն աստծուն կոչում են Ահուրա-Մազդա: Հայկական Արամազդի գլխավոր մեծիանը եղել է Դարանադյաց գավառի Անի ամուր ամրոցում: Լուսավորիչը ջախջախեց բոլոր հայ հեթանոս աստվածների արձաններն ու պաշտամունքային վայրերը և նրանց տեղերում կանգնեցրեց քրիստոնեական խաչը. «Երբ նրանց ևս հաստատեց, գնաց հասավ Անի անվանված ամուր վայրը՝ հայոց արքաների գերեզմանների թագավորաբնակ կայանը: Այնտեղ կործանեցին բազիլը Ջևս Արամազդ աստծու, որը բոլոր աստվածների հայրն էր անվանված: Այստեղ ևս տերունական [խաչի] նշանը կանգնեցրին, և ավանը իր ամրություններով հանդերձ եկեղեցուն ի ծառայություն նվիրեցին»:¹⁶

Ըստ Ալիշանի՝ հույների առասպելներն իրենց Ջևսին շատ գավակներ են վերագրում, սակայն հայերի դիցաբանության մեջ Արամազդից սերում են մի որդի՝ Միհր և երկու դիցուհիներ՝ Անահիտ ու Նանե:¹⁷ Մյուս չաստվածների ծնողները չեն հիշատակվում:

¹³ Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, էջ 132-133:

¹⁴ Ղ. Ալիշան, Հին հուսարք կամ հեթանոսական կրօնք Հայոց, էջ 253:

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, էջ 441:

¹⁷ Ղ. Ալիշան, Հին հուսարք կամ հեթանոսական կրօնք Հայոց, էջ 259:

Անահիտ աստվածուհին սեփական և ամենասիրված դիցուհին է հայերի համար: Նա հայերի բոլոր զգաստությունների մայրն է, հայ ժողովրդի պահապանը: Անահիտի պաշտամունքն այնքան զորեղ էր, որ Արտաշես Երկրորդի հիվանդության ժամանակ դեսպան է ուղարկվում Երիզա՝ դիցուհու մեհյանը, որպեսզի արքայի համար առողջություն խնդրի, սակայն մինչև դեսպանի դարձը, Արտաշեսը մեռնում է՝ երազելով Նավասարդի առավոտը:

Ալիշանը ներկայացնում է տարբեր կրոններում եղած Անահիտի դերը և ավելացնում, որ բոլոր ազգերի մեջ ամենից ավելի «անահտապաշտ» էին հայերը, և հայոց Անահիտն է նախատիպը բոլոր ազգերի Անահիտների:¹⁸ Անահիտ աստվածուհու պաշտամունքային վայրերը հռչակավոր էին թե՛ Մարաստանի Էկբատանում, թե՛ Կոմագենում, թե՛ Պոնտոսում և թե՛ Մարաշում: Հայաստանում հայտնի էին Եկեղյաց գավառի Երիզան ու Հայաստանի հին մայրաքաղաք Արմավիրը: Արտաշես Երկրորդը Անահիտի արձանը փոխադրում է Արտաշատ, ուր ընկնում է Լուսավորչի և Տրդատի կռանակործան ձեռքերի տակ:¹⁹

Առաջին դարում Բարդուղեմիոս առաքյալը փոքրիկ խաչով կործանում է Անձևացյաց երկրի Դարբնաքար վայրում կանգնած Անահիտի կուռքը և տեղը խաչ կանգնեցնում: Բարդուղեմիոսի Դարբնաքարում կատարած կռանակործան գործողություններն առկա են Մովսես Խորենացու թղթում՝ ուղղված ժամանակի նշանավոր իշխան Սահակ Արծրունուն: Թղթում ասվում է. «Հասեալ սուրբ առաքեալն Աստծոյ անդ, հալածեաց զդարբինսն զգործօնեայս չարին և զկուռսն փշրեաց, որ յանուն Անահտայ էր»:²⁰

Խորենացու «Առ Սահակ Արծրունի» թուղթն այնքան տարածված էր հայ միջնադարի գիտական ու կրոնական միջավայրում, որ նրա հի-

¹⁸ Նույն տեղում, էջ 266:

¹⁹ Նույն տեղում, էջ 267:

²⁰ Ա. Դուլուխանյան, Հայ միջնադարյան գրականության հիմնական ուղղություններն ու ժանրերը, Երևան, 2012, էջ 136:

ման վրա XVII դարի սկզբին Ներսես Մոկացին գրում է գեղեցիկ չափա-
ծո ներբողյան, որում վերստին խոսվում է Անահիտի կուռքի ոչնչաց-
ման մասին.

Առ ի համբաւ քարի միոջ,
Յոր էր աղուեսն ամբացեալ յորջ,
Ընդ Անահտայ բնակէր տիկնոջ՝
Մարդախոշոշ կռանագոյ:
Յայս վայր հասեալ առաքելոյն,
Փութով խափան առնէր գործոյն,
Դարբնական բախման թընդոյն,
Որ գործօնեայք էին նիւթոյն:
Եւ գդիցամայրն խորտակեաց,
Ջրոնութիւն քակեալ դիւաց,
Քարանձաւէն յայն հալածեաց
Եւ սրբութեան տեղիք գործեաց:²¹

Այլշանը ներկայացնում է Անահիտ աստվածուհուն նվիրված
հանդիսությունների շքեղությունը, որոնք տեղի էին ունենում տարին
երկու անգամ՝ զարնանն ու աշնանը: Այդ օրը քրմապետը թագավորա-
կերպ հագնված՝ խույրը գլխին, առաջնորդում էր քրմերին և ուխտա-
վորներին: Նա վերցնում էր Անահիտի կուռքը և թափորով պտտվում
մեհյանի շուրջը՝ աղոթանման երգելով:²² Հետո սկսվում էր կերուխու-
մը, և տեղի էին ունենում հեթանոսական անկարգությունները:

Անահիտին՝ որպես հեթանոս հայերի մեծահարգ աստվածու-
հի, հիշատակում են Պլինիոս Ավագը, Դիոն Կասսիոսը և Ստրաբո-
նը:²³ Նրանք հիշատակում են Անահիտի ոսկյա արձանը: Պոմպեոս
հռոմայեցին թերևս ընծաներով այն պատվեց, իսկ Մարկոս Անտո-
նիոսը կողոպտեց ու ավերեց Անահիտի տաճարը: Ավանդությունը,

²¹ Ներսես Մոկացի, Բանաստեղծություններ, Երևան, 1975, էջ 121-122:

²² Ղ. Այվազյան, Հին հուսարք կամ հեթանոսական կրօնք Հայոց, էջ 269:

²³ Նույն տեղում, էջ 271:

որ հռոմեական է, ասում է, թե Անահիտին առաջինը ձեռք զարնողը կուրացել է ու դարձել անդամալույծ:

Եկեղյաց գավառի Երեզ ավանի Անահիտի ոսկեծույլ արձանի մասին վկայում է նաև Ագաթանգեղոսը. «Դարձի եկած զորքերով այնտեղ հասածները, սուրբ Գրիգորը թագավորով հանդերձ, փշրեցին Անահիտ դիցուհու ոսկի արձանը, ամբողջ վայրը քանդեցին, փչացրին, ոսկին ու արծաթը ավարի տվին»:²⁴

Ալիշանը խոսում է նաև պարսիկների պաշտած Անահիտի մասին, որի նկարագիրը կա զրադաշտական կրոնի սրբազան գրքում՝ Ավեստայում: Անահիտն, ըստ պարսիկների, լանջագեղ է, ոսկեպաճույճ, ոսկեղեն վերարկուով, քառամանյակով, գոտիով, իսկ պատմուճանը 30 քառածին ջրաշների՝ կուղբերի մորթուց էր:²⁵

Նանեն՝ հայ հեթանոսների աստվածուհին, ծնվել էր Արամագդի ուղեղից և գիտության, իմաստության ու արիության աստվածուհին էր:²⁶ Ըստ Ագաթանգեղոսի՝ Նանեի պաշտամունքային վայրը եղել է Թիլ ավանը: Բացի այդ վայրից, Հայաստանի այլ վայրերում չի հիշատակվում Նանեի պաշտամունքային մեհյանի մասին:

Ալիշանը Նանեին համեմատում է հույների Աթենաս Պալլասի հետ: «Դիցաբանական բառարանում» ասվում է, որ Աթենաս Պալլասի գլխավոր սրբատեղին Աթենքի հայտնի Պարթենոնն էր, որտեղ կանգնած էր փղոսկրով ու ոսկով պատած նրա հսկա արձանը, որը կերտել էր Փիդիասը: Աթենասը պատկերվել է խստաշունչ և վեհասքանչ կույսի կերպարանքով, առավել հաճախ երկար զգեստով և լիագեն՝ նիզակով, վահանով ու սաղավարտով: Աստվածուհու ոտքերի մոտ սովորաբար նստած էր նրա սրբազան թռչունը՝ բուն:²⁷

²⁴ Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, էջ 443:

²⁵ Ղ. Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, էջ 276:

²⁶ Նույն տեղում, էջ 277-278:

²⁷ Դիցաբանական բառարան, էջ 8: Վիեննայի պառլամենտի գեղեցիկ շենքի առաջ հիմա կանգնած է Աթենաս Պալլասի հրաշալի արձանը – Գ.Մ.:

Նանեից առավել հայերը պաշտում էին Աստղիկին, որին կապում էին Նոյի հետ: Հենվելով Բերոսոսյան Միբիլյանների ասածի վրա՝ Խորենացին Աստղիկին համարում է Տիտանի և Զրվանի քույրը, որը հաշտեցնում է կովող եղբայրներին: «...ապա Աստղիկ քույրը Զրվանի կանանց հետ միասին համոզում են Տիտաններից մի քանիսին՝ մյուս տղաներին կենդանի պահել և ուղարկել արևմուտք, այն լեռը, որին ասում էին Դյուցընկեց, իսկ այժմ կոչվում է Ոլիմպոս»:²⁸ Խորենացին կարծում էր, թե ոմանք այս փաստերը կարող են համարել առասպել, սակայն ինքը հավատացած է, որ դրանք մեծ մասամբ ճշմարիտ են:²⁹

Ալիշանի վկայությամբ Տարոնում կար Աստղիկի բերդը, որն աստվածուհին շինել էր տվել եղբոր՝ Զրվանի ապահովության համար: Աստղիկի գլխավոր մեհյանը Աշտիշատում էր, ուր նրա արձանը կանգնած էր Վահագնի կողքին: Այս երկուսի արձանների մասին Խորենացին ասում է, որ Տիգրան Երկրորդը կամ Մեծը Աֆրոդիտեի՝ Աստղիկի և Հերակլեսի արձանները բերել է Հունաստանից. «Բայց Աֆրոդիտեի արձանը, իբրև Հերակլեսի տաքփածուի, հրամայում է կանգնեցնել հենց Հերակլեսի արձանի մոտ՝ Հաշտից տեղում»:³⁰

Ալիշանը հիշեցնում է, որ Անահիտն ու Աստղիկը սկզբում համարվել են միայն մեկ աստված՝ Անահիտ: Հետո է Աստղիկը զատվել Անահիտից՝ դառնալով «հեշտութեան գարշելի չաստված»:³¹ Անգամ Ներսես Լամբրոնացին հետազայում հիշատակում է Գրիգոր Լուսավորչի ձեռքով Վահեվանյան Մեհյանի դիցարանի մասին:³² Աստղիկը համեմատ է նաև լատինացիների Վեներային: (Venus): Հայերն Աստղիկին նվիրել են մեծամեծ հանդեսներ, որոնցից է Վարդավառը: Այս տոնը հայերի համար այն-

²⁸ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, էջ 29:

²⁹ Նույն տեղում:

³⁰ Նույն տեղում:

³¹ Ղևոնդ Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, էջ 281:

³² Նույն տեղում, էջ 282:

քան սիրելի էր, որ Գրիգոր Լուսավորիչը այն փոխեց Քրիստոսի Պայծառակերպության տոնով, երբ Հիսուս Քրիստոսը երևաց Թաբոր լեռան վրա: ³³

Հայ հեթանոս աստվածներից է Միհրը: Այս աստվածը համապատասխանում է հույների Հեփեստոսին: Նա հրի և արեգակի չաստվածն է: Միհրին պաշտել են ոչ միայն պարսիկները, հույները, լատինացիները, հնդիկները, այլև գերմանացիներն ու իսլանդացիները: «Սասունցի Դավիթ» էպոսի ֆրանսերեն թարգմանության առաջաբանում Ֆրեդերիկ Ֆեդին Միհրին համեմատում է մեր ազգային էպոսի երկու հերոսների՝ Մեծ և Փոքր Մհերների հետ և ասում, որ նրանց քաջագործությունները հիշեցնում են հնագույն աստված Միթրայի գործերը: ³⁴

Ձրադաշտական կրոնում Միհրը Որմիգդի որդին էր, ոչ չաստված, այլ Ազատ և գլխավորը Ազատների, միջնորդ Որմիգդի և Ահրիմանի միջև: ³⁵ Միհրը հիշատակվում է 449 թ. հայերի Հազկերտ Երկրորդի «Թղթին» տրված պատասխանի մեջ. «Այս բանն ասաց նաև ձեր սիրելի իմաստուններից մեկը, թե Միհր աստվածը մարդկային մոր ծնած էր և աստվածագավակ թագավոր է և քաջ համհարզ յոթերորդ աստվածների: Եթե կարելի է հավատալ այդ առասպելաբանությանը, որ դուք նույնիսկ գործերով կատարյալ եք ցույց տալիս ձեր հավատի մեջ, - մենք այլևս առասպելներին չենք հավատում, այլ աշակերտ ենք մեծ

³³ Նույն տեղում, էջ 283: Պայծառակերպության կամ Այլակերպության տոնը Հայ եկեղեցու հինգ Տաղավար տոներից է: Համաձայն Ավետարանի՝ Քրիստոսն իր քարոզչական գործունեության երրորդ տարվա ամռանը, իր մահվան և հարության մասին առաքյալներին հայտնած կանխատեսությունից վեց օր հետո, մի քանի առաքյալների հետ բարձրանում է Թաբոր լեռը՝ աղոթելու: Աղոթքի պահին Հիսուսը նրանց առաջ պայծառակերպվում է: Տե՛ս Քրիստոնյա Հայաստան: Հանրագիտարան, Երևան, 2002, էջ 973:

³⁴ David de Sassoun, Épopée en vers, Traduit de l'arménien avec une introduction et des notes de Frédéric Feydit, Paris, 1964, p. 43.

³⁵ Ղ. Ալիշան, Հին հուսարք կամ հեթանոսական կրոնք Հայոց, էջ 286:

Մովսես մարգարեի, որի հետ աստված խոսեց մորենու մեջ Սինայում և դեմ առ դեմ օրենքներ գրեց և տվեց նրան»:³⁶

Ալիշանը չի անդրադառնում Միհրի այս բացատրությանը՝ այն համարելով Սասանյանների առասպելներից: Միհրը այնքան է մտել մարդկանց կյանքի մեջ, որ նրա անվան բարդամաբ Հայաստանում, Վրաստանում, Պարսկաստանում կան անձերի անուններ, ինչպես Միհրան, Միհր-Ներսեհ, Միհրան-Շապուհ, Միհր-Արտաշես, Միհր-դատ, Միհրիշատ, Միհրիորիկ եւ այլն:³⁷

Տիրը ևս հեթանոս հայերի դիցարանից է: Տիր նշանակում է ուժ, պնդություն, քաջություն: Տիրին համարժեքներ են հույների Հերմեսը և Ապոլոնը: Հույների Հերմեսը, լատինացիների Մերկուրին Դիոսի պատգամավորն ու դպիրն էին: Պարսիկները նրան համարում էին երազագետ: Ազաթանգեղոսն էլ Տիրին կոչում է երազահան. «Նախ ճանապարհին հանդիպեցին քրմական գիտության դպիր, Որմզդի դիվան կոչված երազացույց, երազահան պաշտամունքի Տիր աստծու իմաստության ուսման մեհյանը և ամենից առաջ սկսեցին այն քանդել, այրել, ավերել»:³⁸ Տիր աստված ունեն և՛ պարսիկները, և՛ սաքսոնացիները, և՛ կելտերը:³⁹

Վահագնը Աստղիկի ամուսինն է: Աստղիկը զուտ հայկական անուն է: Վահագնը, ըստ պատմիչի, Տիգրան Երվանդյան, Հայկազյանի որդին էր: Մա այն Տրգրանն էր, որ հաղթեց Մարերի հռչակավոր Աժդահակ թագավորին: Ըստ հին հայերի՝ Աժդահակ նշանակում է Վիշապ, իսկ նրանց հաղթողներն էլ վիշապաքաղ: Մարերի և պարսիկների միջև ծագում է մեծ հակառակություն: Դրա մասին գրում են հույներից Հերոդոտոսը, իսկ հայերից՝ Մովսես Խորենացին: Հետաքրքիր է, որ պարսիկները իրենց Կյու-

³⁶ Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, թարգմ. և ծանոթագր.՝ Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1989, էջ 71:

³⁷ Ղ. Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, էջ 288:

³⁸ Ազանթագեղոս, Հայոց պատմություն, էջ 437:

³⁹ Ղ. Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, էջ 291:

րոսին Աժդահակի հակառակորդ և հաղթող ճանաչեցին, իսկ հա-
յերը՝ Տիգրանին:⁴⁰

Վահագնի քաջագործությունների մասին պատմում է նաև հին-
գերորդ դարի նշանավոր գիտնական, թվաբան, տիեզերագետ, մատե-
նագիր, աստվածաբան, պատմիչ Անանիա Շիրակացին: Վերջինս իր
«Տիեզերագիտության» մեջ բացատրում է Ծիր կաթինի կամ Հարդագո-
ղի ճանապարհի առաջացումը՝ ըստ հույների և ըստ հայերի. «Դարձ-
յալ հայոց նախնիներից ոմանք ասում են, թե Վահագնը՝ հայերի նախ-
նին, մի խիստ ձմռան ժամանակ գողացել է ասորեստանցիների նախ-
նու՝ Բարշամի դարմանը, որին մենք ավանդաբար հարդագողի հետք
ենք անվանում»:⁴¹

Վահագնը համեմատվել է նաև հնդիկների Ինտրայի եւ Ագ-
նիի հետ: Աշտիշատում Գրիգոր Լուսավորիչը դժվարությամբ
կործանեց Վահագնի կուռքը, որովհետև հնդիկների քուրմերը
այն համառ ձևով պաշտպանում էին:⁴² Այդ մասին պատմում է
Հովհան Մամիկոնյանը Տարոնի պատմության մեջ. «Բայց իշ-
խաններից ոմանք Գրիգորին հասկացրին, թե Տարոնի գավառում
դեռևս կանգուն են երկու բազիններ, որոնք դեռին են պաշտոն
մատուցում... «Իսկ նա, որ գլխավոր քուրմն էր, անունը՝ Արձան և
իր Դեմետր որդին՝ վերցնելով Կուառսի քրմական տանից չորս
հարյուր հոգի, բարձրացան Կուառսի հանդիպակաց լեռան վրա
ու այնտեղ սպասեցին, մինչև մյուս տեղերից օգնական զորքերի
ժամանելը»:⁴³

⁴⁰ Նույն տեղում, էջ 293:

⁴¹ Անանիա Շիրակացի, Մատենագրություն, թարգմ., առաջաբ. և ծանոթագր.
Ա.Գ. Աբրահամյանի և Գ.Բ. Պետրոսյանի, Երևան, 1979, էջ 95-96:

⁴² Ղ. Ալիշան, Հին հուստոք կամ հեթանոսական կրօնք Հայոց, էջ 295:

⁴³ Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, թարգմ. և ծանոթագր.
Վարդան Վարդանյանի, Երևան, 1989, էջ 36:

Խորենացին վկայում է, որ Վահագնին պաշտել են նաև Վրաստանում. «Բայց ասում են նաև, թե սա աստված է, և Վրաց աշխարհում սրա հասակով արձան կանգնեցնելով՝ պատվում էին զոհերով»:⁴⁴

Ազնիին, որպես հնդկական աստվածություն, հիշատակում է նաև Եղիշե Չարենցն իր «Մոմա» պոեմում.

Արշալույսների սրբազան արգանդ,

Ոգու Կաթն Օիր.

Արևից առաջ դու՛ երկնից անցար,

Ոսկի փռեցիր:

...Սո՛մա, օ, Սո՛մա, օրհնվի՛ թող այն

Վայրկյանը կարմիր աշխարհում այս չար,

Երբ մարդու սրտում առաջին անգամ

Հրի փոխվեցիր ու **Ա՛զնի** դարձար...⁴⁵

Հին պարսիկները Վահագնին ճանաչում էին որպես Վերերթրագնա: Ագաթանգեղոսը Վահագնին Անահիտի չափ կարևոր է համարում հայերի համար, որովհետև Վահագնը քաջության աստվածն էր. «Թող ողջուն և խաղաղություն հասնի աստվածների օգնականությամբ, պարարտ լիություն՝ արի Արամազդից, խնամակալություն՝ Անահիտ տիկնոջից, **քաջությունն ամենայն Հայոց աշխարհին՝ քաջ Վահագնից**»:⁴⁶

Այս բացատրությունը պարզ է դարձնում Ե. Չարենցի «Վահագն» փոքրածավալ քերթվածի ողջ ողբերգականությունը: Չարենցը Վահագնին համարում է հրդեհի աստված, միաժամանակ հայերի փրկության երաշխիքը, որը, սակայն, 1915 թ. երիտթուրքերի կազմակերպած ցեղասպանության հետևանքով արնաքամ ընկած է.

Մեր կյանքի հիմերն անդունդն ընկան

Եվ արնոտ միգում ճարճատում են դեռ...⁴⁷

⁴⁴ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, էջ 103:

⁴⁵ Ե. Չարենց, Հատընտիր, Երևան, 1987, էջ 32:

⁴⁶ Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, էջ 81:

⁴⁷ Ե. Չարենց, Հատընտիր, էջ 250:

Թովմա Արծրունին էլ, հիշեցնում է Ալիշանը, Վահեվանյան մեհյան է հիշատակում Տոսպում. «...որ շինել էր սուրբ Գրիգորը, Ահևական գյուղից վերև, Հայոց լուսավորությունը կատարելուց հետո, որովհետև այն նախկինում եղել էր Վահեվանյան մեհյանատեղի:»⁴⁸

Վահագնի մասին երգեր դեռ լավում էին սուրբ թարգմանչաց օրերին: Ալիշանն էլ շեշտում է, թե Վահագնի լծորդն է Ագնին՝ հրո չաստվածը:⁴⁹

Վերջին հեթանոս աստվածները, որոնց մասին խոսում է Ալիշանը, Վանատուրն ու Ամանորն են: Այս հատվածում Ալիշանը մեզ է ներկայացնում Բագրևանդ գավառում գտնվող Հայոց գլխավոր դիցապաշտական կենտրոն Բագավանը՝ հունարեն Դիոսպոլիս, հայերեն թարգմանությունն է՝ Աստվածաքաղաք:⁵⁰ Այդտեղ էլ Վանատուրի բազմին է՝ պաշտամունքային վայրը: Ընդունված կարծիք է, թե Վանատուր նշանակում է հյուրասեր, հյուրընկալ, օտարներին ու պանդուխտներին սատարող: Հյուրընկալության աստվածներ ունեն շատ ժողովուրդներ: Սուրբ Գրքում այդ մասին գրված է. «Կարճ ժամանակ անց թագավորն ուղարկեց Աթեներիոս ծերունուն, որ սա ստիպի հրեաներին հրաժարվել իրենց հայրերի օրենքներից, այլևս չենթարկվել Աստծու օրենքներին, պղծել Երուսաղեմի տաճարը և այնուհետև այն անվանել ողոմպիացիների Որմիզդ աստծու անունով, իսկ Գարգարիզում գտնվող տաճարը՝ **հյուրընկալ Վանատուրի** անունով, որովհետև այնտեղ բնակություն հաստատած հեթանոսները այդ էին պահանջում»:⁵¹ Լատինացիները Վանատուրին կոչում են՝ Hospitalis.

Վանատուրի տոնը կատարվում էր Հայոց Նավասարդի տարեգլխին, ու երկրի բոլոր կողմերից մեծ բազմություն էր գալիս: Հարկ էր շատ իջևաններ գտնել և հնարավոր էր, որ դժվար ճանա-

⁴⁸ Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Երևան, 1978, էջ 224:

⁴⁹ Ղ. Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, էջ 301:

⁵⁰ Նույն տեղում, էջ 302:

⁵¹ Մակաբայեցիներ, II գիրք, 6,1-2:

պարհներին շինված իջևանատները նվիրված լինեին այս աստծուն: Հետագայում այդ տները կոչվեցին Բուդկա՝ քարավանատուն կամ կրպակ նշանակելով:⁵²

IV դարում՝ քրիստոնեության ժամանակ, այդպիսի հարյուրավոր տներ կառուցեց Ներսես Մեծը:

Ալիշանն առանց պնդելու առաջ է քաշում վարկած՝ ըստ որի Ամանորն ու Վանատուրը մյուս հունական աստվածների արձանների հետ բերված էին Հունաստանից: Նավասարդ անվանումն էլ, որ Ամանոր, նոր տարի է նշանակում, զանդիկ - պարսկերեն է:⁵³

Հայկական հին դիցարանում Սպանդարամետ անունով դից ևս հիշատակվում է: Այս անվամբ Սուրբ Գիրքը անվանում է Դիոնիսիոսին կամ Բաքոսին. «Թագավորի ծննդյան օրը, յուրաքանչյուր ամսվա այդ օրը ստիպում էին զոհեր մատուցել: Երբ հասնում էր պտղաբերության պաշտամունքի տոնը, ստիպում էին նրանց թավ ոստերից հյուսած պսակներով պարել Բաքոսի կուռքի մոտ»:⁵⁴ Հայերը Բաքոսի ոգով մեկին պաշտում էին Սպանդարամետ անունով: Սպանդարամետի անունը փոխանցվել է սովորական հայերին՝ որպես անձնանուն: Սպանդարամետը մի տառ պակասով դառնում է Սանդարամետ և նշանակում է դժոխք:

Ինչ-որ ժամանակ հայերը պաշտել են նաև ասորական Բար-Շամինա աստծուն, որը նշանակում էր Երկնքի աստված կամ Մեծ աստված: Դա Արեգակի աստվածն էր և զարմանալի չէ, որ հայերն իրենց ոչ սիրելի ասորիների աստծուն են պաշտել, որովհետև այն ժամանակներում իրենք էլ արևապաշտ էին: Ալիշանը համոզված է, որ հին հայկական սեպագիր արձանագրություններում, անշուշտ, կան հայերի հին աստվածների այլ անուններ, որոնք այդպես էլ մնում են անհայտ:⁵⁵

⁵² Ղ. Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, էջ 303:

⁵³ Նույն տեղում, էջ 305:

⁵⁴ Մակաբայեցիներ, II, 6, 7:

⁵⁵ Նույն տեղում, էջ 319:

Ղևոնդ Ալիշանի հետազոտությունը շարադրված է քննական ձևով ու պատմահամեմատական մեթոդով: Հայկական հնությունները ներկայացվում են քաղաքակիրթ աշխարհի պատմական ընթացքին համեմատ, տարբեր լեզուներով ստեղծված աղբյուրների հիման վրա: Այս աշխատությունն համընդհանուր կրոնագիտության մեջ անպայման զբաղեցնում է իր արժանավոր տեղը:



ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

*Հայաստանի ազգային
գրադարանի
Մատենագիտության և
գրադարանագիտության
բաժնի վարիչ,
Բանասիրական
գիտությունների թեկնածու*

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԸ

«ՀԱՆՐԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ»-Ի ԷՋԵՐՈՒՄ

Ղևոնդ Ալիշանը, որպես ազգային մեծություն, գնահատված է բոլոր ժամանակներում: Նա առաջիններից էր, որ հայ գրականության մեջ ստեղծեց ժողովրդական հերոսական պայքարի գեղարվեստական պատկերը կամ կադապարը և արթնացրեց հույսը ապագայի նկատմամբ: Հենց սրանով առաջին հերթին նա տարբերվեց Մխիթարյան միաբանության մյուս անդամներից:

Ղևոնդ Ալիշանի կյանքը, գործունեությունը, ստեղծագործական աշխարհը բազմիցս արժանացել են տարբեր ոլորտների ուսումնասիրողների ուշադրությանը: Բոլոր ժամանակներում գրվել են առանձին ուսումնասիրություններ, հոդվածներ՝ հնարավորություն ընձեռելով հաջորդ սերունդներին տեսնելու Ալիշանի կենսագրության և ստեղծագործությունների խորքային շերտերը: Այդպես, տասնամյակների ընթացքում մեծ հայերգուն բացահայտվել է շերտ առ շերտ: Այսօր, երբ թվում է այլևս ասելիք չկա, գտնվում են նոր փաստեր, որոնք ստիպում են նույն ստեղծագործությունը կամ իրադարձությունը մեկնաբանել այլ լույսի ներքո: Բոլոր այդ ուսումնասիրությունների մեջ փորձենք առանձնացնել Վիեննայի Մխիթարյան միաբանների մոտեցումները

կամ գնահատումները, որոնք արտացոլվել են «Հանդես ամսօրեայ» ամսագրի մեջ: Ալիշանին տրված բոլոր գնահատականների մեջ Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամների արժևորումներն առանձնանում են հետևյալ պատճառներով.

1. Վիեննայի Մխիթարյան հայրերը «Ֆիզիկապես» անկախ էին Վենետիկի Մխիթարյան միաբանությունից: Այն շրջանում, երբ իր գործունեությունն էր ծավալում Ղևոնդ Ալիշանը, այս երկու կառույցները տարանջատված էին և գործում էին առանձին: Ինչպես գիտենք, 1772 թ. Մխիթարյան միաբանության կանոնադրության փոփոխման և այլ խնդիրների պատճառով տարաձայնություններ են առաջանում, ինչի հետևանքով 18 միաբան Տրիեստում ստեղծում են նոր կառույց, որը կոչվում է Մխիթարյան: Ավելի ուշ նրանք տեղափոխվում են Վիեննա՝ վերջնականապես հաստատվելով այնտեղ: Այն դառնում է գիտության, կրթության և մշակութային օջախ, որն իր անգնահատելի նպաստն է բերում հայ ժողովրդին¹:

2. Որքան էլ Պ. Գօճանեանը պնդում է², որ երկու կառույցներն ունեին նույն հիմնադիրը, նույն նպատակներն ու գաղափարները, այնուամենայնիվ տարբեր փաստեր վկայում են, որ նրանց միջև տարաձայնությունները եղել են շատ ավելի խորը, քան ներկայացվում է: Այդ տարաձայնությունները պատճառ են դարձել, որ երկար ժամանակ երկու միաբանությունների գործիչները, ովքեր մեծ ներդրում ունեն հայ գրականության, պատմության, մշակույթի մեջ, կամ անտեսում էին միմյանց, կամ անդրադառնում քննադատաբար: Նշենք նաև, որ այդ քննադատական մոտեցումը շահեկան է եղել հայ բանասիրության ու մշակույթի համար:

¹ Պօղոս Գօճանեան, Վիեննական Մխիթարեան միաբանություն (Պատմական ակնարկ), «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 2011, թ. 1-12, էջ 21-28; Ասատուր Փաշայան, Վիեննայի Մխիթարյանները գիտության և մշակույթի ջահակիրներ (Միաբանության 200-ամյակի առթիվ), «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2011, թ. 1, էջ 22-35:

² Տե՛ս նույն հոդվածը:

3. Վիեննայի Մխիթարյան միաբանության հայրերն իրենց համարել են ավելի ազատամիտ, առաջադեմ գաղափարների կրողներ, ավելի մեծ տեղ են հատկացրել մշակութային արժեքներին և վարել են նպատակային հայագիտական քաղաքականություն: Նրանք իրենց ավելի «բարձր են դասել» վենետիկյան հայրերից, ինչն էլ հիմք է հանդիսացել նրանց նկատմամբ քննադատական մոտեցման համար:

Վերը նշված պատճառները մասնակի անդրադարձել են նաև Ղևոնդ Ալիշանին: Մասնակի, որովհետև Վիեննայի Մխիթարյանները և՛ գնահատել են նրան, և՛ քննադատել: Մեծ բանաստեղծը վեր էր կանգնած գաղափարական կամ անձնային հարաբերություններից, ինչը ժամանակի ընթացքում հասկացան նաև Վիեննայի հայրերը: Վիեննայի հետ կապը երևում է և՛ ճանապարհորդություններից, և՛ նամակներից (որոնք թվով այնքան էլ շատ չեն), և՛ «Հանդես ամսօրեայ» ամսագրի նյութերից: Անդրադառնանք կետերով.

1. Որպես Մխիթարյան միաբանության անդամ՝ Ալիշանի գործունեությունը սկսվել է 1840 թվականից և շարունակվել մինչև կյանքի վերջ³: Իր գործունեության ընթացքում նա շատ է ճամփորդել, բազմաթիվ անգամներ եղել է Հռոմում, Փարիզում, Բեռլինում, Լոնդոնում, Գենտում, Միլանում և այլուր: Վիեննա այցելել է մեկ անգամ, Լոնդոնից վերադառնալու ճանապարհին, 1852 թ.⁴: Ս.

³ Սուրեն Շտիկյանն իր հոդվածներից մեկում այսպես է բնորոշում. «Վենետիկի Մխիթարյան միաբանություն» արտահայտությունը սոսկ աշխարհագրական հասկացողություն կամ անհատի՝ տվյալ կազմակերպությանը պատկանելը ցույց տվող ըմբռնում չէր, առավել ևս այն ժամանակաշրջանում, երբ ապրում ու գործում էր Ալիշանը: Ամենից առաջ դա նշանակում էր աշխարհայացքի և աշխարհընկալման որոշակի համակարգ, մտածողության առանձնահատուկ, ուրիշներից տարբերվող եղանակ»: Տե՛ս Ս. Շտիկյան, Ալիշանը հայ մտավորականների հուշերում, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1987, թ. 6, էջ 37:

⁴ Վիեննա կատարած այցի մասին տե՛ս Ս. Երեմեան, Կենսագրություն Հ. Ալիշանի, Վենետիկ, 1902, էջ 38; Հ. Ասմարյան, Ղևոնդ Ալիշանի ճանապարհորդական նոթերից, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2003, թ. 2, էջ 127-135:

Երեմյանը վկայում է, որ նա հանդիպել է Վիեննայի մատենադարանի դիվանապետ կոմս Այխենֆելդի հետ, որը նրան օգնել է հաճրնցի Սարգսի Աստվածաշունչը հայտնաբերելու հարցում: Վիեննայում գտնվելու ժամանակ նա այցելել է նաև Մխիթարյան վանքը, մի բան, որ եզակի երևույթ էր այդ շրջանում: Ավելին, նա շատ «ճոխ է գտել» նրանց Մատենադարանը, հայր Սիպիլեանի հետ երկար զրուցել է Ռուբինյան դրամների մասին, իսկ երկու օրից մեկնել Բեռլին: Այս եզակի այցելությունը փաստում է, որ Ղ. Ալիշանը բարեկամական վերաբերմունք է ունեցել Վիեննայի Մխիթարյանների նկատմամբ, վերջիններս էլ հարգել են նրա անձը՝ գնահատելով նրա մեջ մեծ մտածողին:

2. Վիեննայի Մխիթարյանների հետ բարեկամական վերաբերմունքն են փաստում նաև Ալիշանի գրած նամակները, որոնք մեզ են հասել Վիեննայի Մխիթարյան միաբանության աբբահայր գեր. Գրիգորիս Մանյանի պատրաստակամության և գրականագետ Մուրեն Շտիկյանի ջանքերի շնորհիվ⁵: Նամակները գրված են Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամներ Հակոբոս Պոզաճյանին, Վարդան Ըստկարյանին, Սիմոն Անտոնյանին, Արսեն Այտընյանին, 1856-1897 թթ. ժամանակահատվածում, Վենետիկից: Շուրջ երկու տասնյակ կազմող նամակները փաստում են, որ հայագիտական, բանասիրական որոնումները մերձեցրել են Ալիշանին Վիեննայի հայրերի հետ, որոնց հետ կապը պահպանել է գրեթե ողջ կյանքի ընթացքում: Մինչ այս նամակների հրապարակումը հաստատված չէր, որ նա շարունակական կապ է ունեցել Վիեննայի Մխիթարյան հայրերի հետ: Նամակների մեջ արտացոլվում են ինչպես անձնական, ընկերային հարաբերություններ, այնպես էլ գիտական հարցադրումներ, բանասիրական որոնումներ, տարաձայնությունների բացատրություններ: Այս ամենի շնորհիվ ուր-

⁵ Ս. Շտիկյան, Ղևոնդ Ալիշանի նորահայտ նամակները, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1977, թ. 7, էջ 95-106; «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1981, թ. 2, էջ 45-63:

վագծվում է այն ուղին, որն անցել է Ալիշանն իր աշխատությունները հրատարակելու և ընթերցողին մատուցելու համար: Նամակները փաստում են, որ կատարվել է մանրագնին աշխատանք, ուշադրություն է դարձվել ամեն մի մանրուքին, կրկնակի, եռակի ստուգվել են բոլոր փաստերը՝ նյութը կատարելության հասցնելու նպատակով:

3. Շատ կարևոր են «Հանդես ամսօրեայ» ամսագրում տպագրված տեղեկությունները կամ հոդվածները, որոնք ամբողջացնում են Ալիշանի և Վիեննայի Մխիթարյան հայրերի փոխհարաբերությունների խնդիրը: Նախ նշենք, որ Ալիշանի ստեղծագործություններն ու աշխատությունները տպագրվել և վերահրատարակվել են ոչ միայն Վենետիկում, այլև այլ աշխարհագրական վայրերում և՛ առանձին գրքերի ձևաչափով, և՛ հոդվածների: Բացառությամբ Վիեննայի: Վիեննայում, հատկապես Մխիթարյան տպարանում հրատարակված Ալիշանի որևէ գիրք կամ գրքի մատենագիտական որևէ տեղեկություն գտնելու մեր որոնումները հայտնվեցին փակուղում: Նրա ոչ մի ստեղծագործություն կամ աշխատություն այստեղ չի տպագրվել: Նամակագրության մեջ արտացոլված ջերմ հարաբերությունները սահմանափակվել են միայն նամակներում: «Հանդես ամսօրեայ» ամսագրում ևս Ալիշանի աշխատությունները կամ ստեղծագործությունները չեն տպագրվել ո՛չ իր կենդանության օրոք, ո՛չ էլ մահվանից հետո: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ լինելու գործոնն իր ազդեցությունն, այնուամենայնիվ, ունեցել է:

«Հանդես ամսօրեայ» ամսագրում Վիեննայի Մխիթարյան հայրերը անդրադարձել են միայն Ալիշանի կյանքին և գործունեությանը, աշխատություններին ու ստեղծագործություններին, այն էլ խիստ մասնակի և որոշակի ուղղվածությամբ: Քանակական առումով այդ հոդվածները (կամ անդրադարձները) շատ քիչ են, ընդամենը 15 հոդված կամ անդրադարձ: Իսկ եթե հաշվի առնենք, որ Նոբայր Բյուզանդացու՝ Ալիշանի «Հայրուսակ»-ին նվիրված քննադատությունը շարունակվում է 1921-1926 թթ. տպագրված համարներում, ապա այդ քանակն ավելի է սեղմվում:

Ղ. Ալիշանի բուռն գործունեությունը սկսվում է 19-րդ դարի առաջին կեսից: 1852 թ., ինչպես արդեն նշեցինք, որոշ ուսումնասիրություններ կատարելու նպատակով նա գնում է Վիեննա, և նրան սիրով տրվում են այդ տեղեկությունները: Վիեննայի հայրերին գրված նամակների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 1856 թվականից նա պարբերաբար գրել և համագործակցել է նրանց հետ, սակայն մինչև 1889 թ. տպագրված հանդեսի համարներում ոչ մի տեղեկություն Ալիշանի կյանքի, գործունեության մասին չկարողացանք գտնել: Ժամանակագրական առումով այդ հոդվածները թվագրվում են 1889-1926 թթ.՝ ընդգրկելով գիտնականի կյանքի վերջին շրջանը և մահվանը հաջորդող առաջին երկու տասնամյակը:

Ալիշանին նվիրված այդ անդրադարձները կարելի է պայմանականորեն բաժանել երկու մասի՝ նրա անձին, կյանքին ու գործունեությանը նվիրված տեղեկություններ և նրա աշխատությունների, գրքերի գրախոսություններ: Երկու դեպքում էլ որակումներն իրարամերժ են. Ալիշանին՝ որպես մեծ մտածողի, հայրենասերի, գիտնականի արժևորելով հանդերձ Վիեննայի Մխիթարյանները չեն խուսափել քննադատական վերաբերմունքից՝ մի անգամ ևս փաստելով, որ ինչքան էլ ջերմ լինեին նրանց հարաբերությունները, այնուամենայնիվ գաղափարական ընդհանուր հակասությունները երկու կառույցների միջև լուրջ դերակատարում ունեցել են այդ հարաբերությունների վրա: Ներկայացնենք նախ գրախոսությունները:

Առաջին անգամ ամսագիրը Ղևոնդ Ալիշանին անդրադարձել է 1889 թ. վերջին, երբ իր էջում տարածել է նրա «Այրարատ» գրքի տպագրության հայտարարությունը: Սա մի աննշան հատված է, որն ընդամենը տեղեկացնում է տպագրության մասին: Իսկ արդեն 1890 թ. հոկտեմբերին Հ.Յ.Տ.⁶ ստորագրությամբ տպագրվում է նույն

⁶ Հ.Յ.Տ.՝ Հայր Յակոբոս Տաշեան: Տե՛ս Հովակիմյան Բ., Հայոց ծածկանունների բառարան, Ե., 2005, էջ 228:

գրքի գրախոսությունը⁷: Բավական ընդարձակ գրախոսականում արժևորվում է Ալիշանը՝ որպես մտածող և նրա աշխատությունը՝ որպես «Հին Հայոց տեղագրութեանը» նվիրված երկ: Գրախոսը «Այրարատ»-ը համեմատում է «Միսուան» և «Շիրակ» երկերի հետ՝ ընդգծելով նրանում առկա ձեռքբերումներն ու թերությունները: Միանշանակ կարող ենք ասել, որ այս գրախոսությունը Ղևոնդ Ալիշանին նվիրված գովեստի ձևն չէ, քանի որ Հ. Տաշյանը դիպուկ փաստերով ցույց է տալիս թերությունները: Օրինակ՝ նա նշում է, որ գիրքը «չոր ու ցամաք» տեղագրություն է, շատ դեպքերում չեն նշված անգամ հեռավորության չափերը: Սա վերագրում է հեղինակի շտապողականությանը: Չեն հիշատակված այն նյութերի աղբյուրները, որոնցից օգտվել է Ալիշանը, մինչդեռ դա կարևոր նախապայման է այսպիսի աշխատությունների համար: Օրինակները շատ են և բազմապիսի: Գրախոսության վերջում, սակայն, Հ. Տաշյանն ավելացնում է. «Կը քննենք մեր համառօտ քննութիւնը՝ բաղձալով, որ նոյն արդիւնաւոր գրչէն շուտով լոյս տեսնեն միւս հատորներն ալ Հայոց աշխարհի այս համադրութեան»:

Մի տևական շրջան Վիեննայի Մխիթարյան հայրերը չեն անդրադառնում Ալիշանի ստեղծագործությանը: Տասը տարի հետո՝ 1899 թ. սեպտեմբերյան համարում, լույս է տեսնում «Միսուան» աշխատության ֆրանսերեն թարգմանության գրախոսությունը⁸ Հ.Յ.Տ. (Յակոբոս Տաշեան) ստորագրությամբ: Գրախոսը շեշտում է, որ Ալիշանի աշխատությունների շարքում սա ամենանշանավորն է, քանի որ այն ընդունվել է թե՛ հայ, թե՛ օտարազգի ուսումնասիրողների կողմից: Նա շեշտում է նաև, որ գրքի ֆրանսերեն թարգմանությունը Նուբար փաշայի երազանքն էր և ցանկությունը, սակայն այն լույս է տեսնում նրա մահվանից հետո: Նախքան այս գրքի տպագրությունը աշխատության մի հատվա-

⁷ Հ.Յ.Տ., Մատենախօսական, «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1890, թ. 10, Հոկտեմբեր, էջ 234-238:

⁸ Հ.Յ.Տ., P. Léonce M. Alishan, Sissouan ou l'Arméno-Cilicie, «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1889, թ. 9, Սեպտեմբեր, էջ 284-285:

ծը՝ «Լեւոն Մեծագործ» խորագրով, ֆրանսերեն տպագրվել էր 1888 թ.⁹։ Ըստ գրախոսի՝ ֆրանսերեն տարբերակը ավելի համառոտ է, քան հայերեն բնագիրը, փոխարենը պարունակում է ճշտված տեղեկություններ, ընդլայնված է պատմական բաժինը։ Ամբողջ գրախոսության մեջ թվարկվում են այն տարբերությունները, որոնք առկա են հայերեն և ֆրանսերեն բնագրերի մեջ, իսկ վերջում գրախոսը եզրակացնում է. «Գիրքն իւր արդի հանգամանաց մէջ կրնանք նոր խմբագրութիւն մը համարիլ «Սիսուանայ», աւելի համառօտ ընդհանրապէս, տեղ տեղ աւելի նոր տեղեկութիւններով ճոխացած»։ Առանձին քննության նյութ են դառնում աշխատության մեջ առկա գունավոր և մեծադիր պատկերները։ Ընդհանուր առմամբ ամբողջ գրախոսության մեջ արժևորվում է Ղևոնդ Ալիշան մտածողը և նրա գործը՝ հույսով, որ այս գիրքը պետք է եվրոպացի գիտնականներին մատակարարի «ճոխ ու հմտալից տեղեկութիւններ Կիլիկիոյ մասին»։

1904 թ. «Հանդես ամսօրեայ»-ի 1-4 համարներում շարունակաբար տպագրվում է Ալիշանի «Հայապատում» աշխատության գրախոսականը Հ. Համբ. ստորագրությամբ¹⁰։ Գրախոսության հեղինակը բավական ընդարձակ գրախոսությունը բաժանում է մասերի՝ ներկայացնելով աշխատության կառուցվածք, նպատակը, առավելություններն ու թերությունները։ Օրինակ՝ գրախոսության հեղինակը բարեխղճորեն արժևորում է Ալիշանի երկը՝ նշելով, որ սովորաձավալ այս աշխատությունն արդեն իսկ ձեռքբերում է իր մեծադիր ծավալով։ Գրքում աշխատասիրողը մանրամասն տեղեկություններ է հաղորդում օտար պատմիչների մասին, հատկապես կանգ առնելով Մար Աբաս Կատինայի վրա։ Սակայն արժևորելով հանդերձ այս աշխատությունը՝ գրախոսը ավելի մանրամասն շեշտում է առկա թերությունները։ Զուտ ծավալային տեսանկյունից, երբ համեմատում ենք առավելությունների և թերություն-

⁹ Léonce Alishan, Léon le Magnifique /Trad. Par G. Bayan Georges, Venise, 1888, XII, 392 p.

¹⁰ Հ. Համբ., Հայապատում, «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1904, թ. 1-2, Փետրուար, էջ 58-62, թ. 3, Մարտ, էջ 89-93, թ. 4, Ապրիլ, էջ 125-128:

ների հատվածները՝ նկատում ենք, որ թերությունների բաժինն ավելի ընդգրկում է: Նա թերություն է համարում այն, որ Ալիշանը փորձել է հայկական ավանդական գրույցներին հաղորդել պատմական ճշգրտություն: Նա մեկ առ մեկ ստուգաբանական քննության է ենթարկում Ալիշանի աշխատության մեջ գործածված մի շարք բառեր՝ նշելով այդ բառերի ծագման կամ ստուգաբանության հետ կապված թերությունները: Անհնար է անդրադառնալ գրախոսի բոլոր դիտողություններին: Նշենք միայն, որ այս քննադատական մոտեցումը բնավ չի նվազեցնում Ալիշանի աշխատության արժեքը, այլ նոր գույն է հաղորդում նրան՝ ընդգծելով. «Պարզ է հեղինակին ձգտումը, այսինքն պահպանել եւ պաշտպանել հայկական աւանդութիւնը»: Մյուս կողմից շեշտելով. «Եթէ մեծ հեղինակը իւր հմտալից ծանօթութեանց հետ քննադատութեան պարզած խնդիրներն ալ իւր մատենին մէջ հիւրընկալէր, կամ ինքնին քննադատէր մեր մատենագրութեան մութ կէտերը, այն ատեն իւր ընդարձակ երկասիրութիւնը անհամեմատ աւելի արժէք կունենար գիտական աշխարհին առջեւ»:

Հաջորդ ծավալուն գրախոսականը, որը հրատարակվում է «Հանդես ամսօրեայ» ամսագրի էջերում, Նորայր Բյուզանդացու «Քննադատութիւն Հայբոսակի» խորագրով ուսումնասիրությունն է, որը լույս է տեսնում հատվածաբար 1921-1925 թթ.¹¹, իսկ 1926 թ. հանդեսում լույս է տեսնում «Վերադարձութիւնք յիմ քննադատութիւն «Հայբոսակ»-ի» խորագրով ուսումնասիրությունը, որը կարելի է համարել նախորդի հավելվածը¹²: Հայագետ, բանասեր, Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ, Ալիշանի աշակերտնե-

¹¹ Նորայր Բյուզանդացի, Քննադատութիւն Հայբոսակի, «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1921, թ. 1-2, Յունուար-Փետրուար, էջ 97-108; 1923, թ. 1-2, Յունուար-Փետրուար, էջ 49-64, թ. 3-4, Մարտ-Ապրիլ, էջ 155-170, թ. 7-8, Յուլիս-Օգոստոս, էջ 341-349; 1924, թ. 1-2, Յունուար-Փետրուար, էջ 69-79, թ. 11-12, Նոյեմբեր-Դեկտեմբեր, էջ 545-552; 1925, թ. 5-6, Մայիս-Յունիս, էջ 301-303, թ. 7-8, Յուլիս-Օգոստոս, էջ 408-411

¹² Նորայր Բյուզանդացի, Վերադարձութիւնք յիմ քննադատութիւն Հայբոսակի, «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1926, թ. 1-2, Յունուար-Փետրուար, էջ 65-71:

րից Նորայր Բյուզանդացու այս քննադատությունը ոչ թե Ալիշանին ուղղված չարախոսություն է, այլ բանասիրական ուսումնասիրություն, որից շահում է թե՛ Ալիշանը, թե՛ բանասիրությունը:

Ղ. Ալիշանի «Հայբուսակ» աշխատությունը հատվածաբար լույս է տեսել նախ «Բազմավեպ»-ում, իսկ 1895 թ. առանձին գրքով: Այստեղ հեղինակը հավաքել է հայ հին և նոր գրականության մեջ արտացոլված բույսերի ծանոթ ու անծանոթ անունները՝ ծանոթագրություններով: Նման աշխատանքը չէր կարող լինել անթերի և ամբողջական՝ հաշվի առնելով նյութի հսկայածավալ լինելը: Այս գրքի շուրջ արված ցանկացած քննություն կամ նոր մոտեցում կարելի է դիտել որպես գրքի հավելված կամ լրացում: Նորայր Բյուզանդացին, լինելով Ալիշանի աշակերտներից, նույնպես զբաղվում էր բույսերի վերաբերյալ նյութերի հավաքագրմամբ ու ուսումնասիրությամբ: Նա անդրադարձել է մի շարք կետերի, որոնք սխալ էին մեկնաբանված, կամ պետք է լուսաբանվեին նորովի: Հենց սա էլ հիմք է հանդիսացել Ն. Բյուզանդացու համար՝ գրելու իր հայտնի Քննադատությունը: Այն գրվել է 1895 թ., 3 ամիսների ընթացքում: Նույն 1895 թ. նա հայտարարություն է տպագրում Կ. Պոլսի «Հայրենիք» լրագրում՝ Քննադատության ձեռագիրը 500 ֆրանկով վաճառելու մասին¹³, իսկ ավելի ուշ նույն լրագրում տպագրվում է մի առաջնորդող, որով ծանուցվում է Ալիշանի «Հայբուսակ» աշխատության տպագրությունը: Առաջնորդողի մեջ խոսվում է նաև Ն. Բյուզանդացու այս Քննադատության շուրջ՝ այն ներկայացնելով ոչ թե որպես գրախոսություն, այլ Ալիշանի գործի սրբագրություն¹⁴: Ն. Բյուզանդացու ուսումնասիրության ձեռագիրը գնում է իշխան Գվիդոն Լուսինյանը: Սակայն ձեռագիրը չի տպագրվում: Շարունակելով իր պրպտումները՝ Ն. Բյուզանդացին 1896 թ. Գվիդոն Լուսինյանին է ուղարկում իր քննադատության հավելվածը՝ տպագրությո-

¹³ «Հայրենիք», Կ. Պոլիս, 1895, թ. 1175, 31 մայիսի, էջ 3:

¹⁴ Տե՛ս Ա.Ա., Հ. Ալիշանի մեկ նոր գործը, «Հայրենիք», Կ. Պոլիս, 1895, թ. 1180, 5 յունիս, էջ 1:

յան դեպքում այն ևս ներառելու համար: 1897թ. իշխանը ձեռագիրն ու հավելվածը նվիրում է լեզվաբան, հայագետ, Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ Գաբրիել Մեննիշյանին: Այսպես վենետիկյան միաբանի աշխատությունը հայտնվում է Վիեննայի Մխիթարյանների Մատենադարանում: 1898 թ. 2 գրությամբ Նորայր Բյուզանդացին Արսեն Այտընյանին է ուղարկում ևս մի հավելված «Վերադարձութիւնք յիմ Քննադատութիւն Հայբուսակի»՝ նշելով, որ սրբագրել և լրացունել է կատարել նախորդ տեքստի մեջ: Հարգելով Ալիշանի համբավը՝ Վիեննայի Մխիթարյանները երկար ժամանակ չեն հրատարակում այն: 1911 թ. գտնելով, որ այս ձեռագրերը ոչ թե վնասում են Ալիշանին, այլ ընդհակառակը լրացնում և կատարելագործում են նրա աշխատանքը, «Հանդես ամսօրեայ»-ի խմբագրությունը դիմում է Ն. Բյուզանդացուն՝ տպագրության համար թույլտվություն ստանալու համար: Վերջինս տալիս է իր համաձայնությունը և խոստանում ուղարկել նոր հավելումներ: Սակայն հիվանդության պատճառով չի կարողանում իրականացնել խոստումը: Ձեռագիրն ու հավելվածը, սակայն տպագրվում են հանդեսում 1921-1926 թթ. ընթացքում, հատվածաբար:

Իսկապես, Ն. Բյուզանդացու Քննադատությունը մի առանձին ուսումնասիրություն է, որի հիմքում ընկած է Ալիշանի «Հայբուսակ»-ը: Այն բոլորովին չի նվաստացնում ուսուցչի վաստակն ու անունը, ընդհակառակը, երկու մեծ գիտնականների ուսումնասիրությունների, պրպտումների, տքնաջան աշխատանքի արդյունքում հայ բանասիրությունը հարստանում է նոր նյութերով:

«Հանդես ամսօրեայ» ամսագրում Ալիշանի աշխատությունների վերաբերյալ գրախոսությունները սահմանափակվում են այսքանով: 1926 թվականից հետո ամսագիրն այլևս չի անդրադարձել մեծ գիտնականին¹⁵:

¹⁵ «Հանդես ամսօրեայ»-ի յօդուածներու 100 տարուան մատենագիտական ցուցակ, 1887-1986, կազմ. Հ. Օգոստինոս վրդ. Մեքովեան Մխիթ. ուխտէն, Վիեննա, 1990:

Բացի գրախոսականներից, ամսագիրը պարբերաբար անդրադարձել է Ալիշանին՝ տեղեկություններ հաղորդելով նրա կյանքի, հոբելյանի, մահվան, պարգևատրման և այլ իրադարձությունների վերաբերյալ: 1890 թ. Ղ. Ալիշանի քահանայական և գրական գործունեության 50-ամյակի առթիվ «Հանդես ամսօրեայ»-ի խմբագրական կազմը տպագրում է շնորհավորական մի հոդված¹⁶, ուր հետևյալ բնորոշումներն են տրվում նրան. «Վենետիկյ մեծարգոյ Մխիթարեան միաբանութեան ամենանշանաւոր անդամոց մին», «Հռչակաւոր յոբելիւսաւորն պարծանքն է իւր քահանայական եւ կրօնաւորական վիճակի եւ Մեծ Միաբանութեան»: Շնորհավորական այս խոսքում գնահատվում է Ալիշանը՝ որպէս ուսուցիչ ու դաստիարակ, ուսումնասիրող և գիտնական, որի գրական ժառանգությունը հարգանք է վայելում հայ և եվրոպական իրականության մեջ: Շնորհավորական մի անդրադարձ տպագրվում է հանդեսի էջերում, երբ Ղ. Ալիշանը հնագիտական ընկերության 50-ամյա հոբելյանի հանդիսավոր նիստին ընտրվում է ընկերության պատվավոր անդամ¹⁷:

«Հանդես ամսօրեայ»-ի խմբագրականազմը ցավակցական հոդվածներ է տպագրում իր էջերում, երբ մահանում է Ալիշանը՝ գրելով. «Սրտի կսկիծով լսեցիքն, թէ իւր առաքինութիւններով եւ գրական գործերով անչափս հարուստ Ալիշանը մահացել է: Հայցելով միանգամայն հոգւոյն Սրբոյ մխիթարութիւն, կը մաղթենք նոր Ալիշաններու յարութիւն»¹⁸:

Բացի վերը նշվածներից, ամսագրում տպագրվել են ևս 2 հոդվածներ, որոնք, ճիշտ է, Ղ. Ալիշանին նվիրված չեն, սակայն անդ-

¹⁶ Յիսնամեակ Հ. Ղեւոնդ վարդապետի Ալիշան, «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1890, թ. 6, Յունիս, էջ 141:

¹⁷ Ազգային թերթերի ծաղկեփունջ, «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1897, թ. 2, Փետրուար, էջ 60:

¹⁸ Մահագոյժ, «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1901, թ. 12, Դեկտեմբեր, էջ 380: Ալիշանի մահվանը «Հանդես» անդարադարձել է նաև 1902 թ.: Տե՛ս Գրական կորուստներ, «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1902, թ. 3, Մարտ, էջ 93-94:

րադառնում են նրա գրական ժառանգությանը: Նրանցից առաջինը տպագրվել է 1904 թ. «Լեւոն Ե. թագավորի կնքոյն ուղիղ ընթերցումը» խորագրով¹⁹: Հոդվածը նվիրված է Վատիկանի դիվանատանը պահպանվող Լեւոն Ե. թագավորի ոսկյա կնիքի վրայի արձանագրությանը, որին ժամանակին անդրադարձել էր նաև Դ. Ալիշանը: Վերջինս իր «Սիսուան» աշխատության մեջ կնիքի վրայի արձանագրությունը մեկնել էր այսպես. «Լեւոն կամ Լեոն թագավոր հայոց, կարողութեամբ Աստուծոյ»²⁰: Մինչդեռ հոդվածագիրն ունի իր վարկած, որը փորձում է փաստերով հաստատել: Երկրորդ հոդվածը լույս է տեսնում 1905 թ. «Զարդանկարք Աւետարանի Մլքէ թագուհոյ» խորագրով, որն ունի փոքրիկ բնաբան. «Ըստ ըղձից Հ.Ղ.Վ.Ալիշանի հրատարակեալ հազարամեայ յոբելինի առթիւ»²¹: Ալիշանը նպատակ է ունեցել նմանատպոյթամբ հրատարակելու Մլքէ թագուհու Ավետարանի զարդանկարները՝ ընդգծելու համար հայ մանրանկարչության արվեստի մեծ դերն ու նշանակությունը, Սակայն մահվան պատճառով նրա գաղափարն ու աշխատանքը կիսատ են մնացել: Նրա սաներից Մ. Պոտուրյանը շարունակել է նրա գործը և հաջողությամբ պսակել այն:

Թե՛ նամակները, թե՛ «Հանդէս ամսօրեայ»-ում հրատարակված հոդվածներն ու անդրադարձները փաստում են, որ Դ. Ալիշանին, որպէս մեծ գիտնականի ու մտածողի, ընդունել և գնահատել են Վիեննայի Մխիթարյան միաբանությունում անգամ թե՛ նրա կենդանության օրոք, թե՛ նրա մահվանից հետո:

¹⁹ Տե՛ս Հ. Թովմ., Լեւոն Ե. Թագավորի կնքոյն ուղիղ ընթերցումը, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1904, թ. 8-9, Օգոստոս-Սեպտեմբեր, էջ 270-273:

²⁰ Դ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 481:

²¹ «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1905, թ. 2, Փետրուար, էջ 33-37:



ԶԻՆԱԻԴԱ ԲԱԼԱՅԱՆ

*Արցախի պետական համալսարանի
գրականության և լրագրության
ամբիոնի դոցենտ,
Բանասիրական
գիտությունների թեկնածու*

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԸ ԵՎ ԱՐՑԱԽԸ

Ղևոնդ Ալիշանը (Ալիշանյան Քերովբե Պետրոս-Մարգարի, գրական ծածկանունը՝ Նահապետ (06 (18).07.1820, Կ. Պոլիս-09 (22).11.1901, Ս. Ղազար, Վենետիկ) հայ գրականության, պատմագիտության, գրաքննական մտքի ականավոր գործիչներից է։ Վենետիկի Մխիթարյան միաբանությանը անդամակցել է 1838 թվականից։ «Բազմավեպ»-ը խմբագրել է 1849-1851 թթ.։

Անպարփակ մտքի տեր մեծանուն գիտնականը եղել է մի շարք երկրների ակադեմիաների պատվավոր անդամ, ինչպիսիք են՝ Ֆրանսիական ակադեմիայի Պատվո լեգեոնի դասիսեկիր (1866), Իտալիայի Ասիական ընկերության (1887), Մոսկվայի Հնագիտական ընկերության (1894), Վենետիկի ակադեմիայի (1896), Պետերբուրգի Հնագիտական ընկերության (1896) և Ենայի փիլիսոփայական ակադեմիայի (1897) պատվավոր անդամ։

Լայն և հզոր է Ղ. Ալիշանի բնատուր տաղանդի շրջանակը։ Գրական և մշակութային, հայագիտության, արցախագիտության երևելի գործիչը հանդես է եկել որպես քերթող, արձակագիր, բանասեր, պատմաբան, աշխարհագրագետ, թարգմանիչ, հրատարակիչ՝ ամենուր սկսած գործի հանդեպ դրսևորելով մեծ եռանդ ու պատասխանատվություն, մասնագիտական բարձր որակական իմացություն՝ քննվելիք հարցերի շուրջ ։

Բազմաժանր գրողի ու վաստակաշատ գիտնականի թողած գեղարվեստական, գրականագիտական, բանահյուսական, տեղագրական, բուսաբանական գիտական հարուստ ժառանգության մեջ իր բարձր արժեքով ու արդիական հարցադրումներով հայտնի է **«Հայաստանի տեղագրությունը»** կամ **«Տեղագիր Հայոց Մեծաց» (1855)** բազմահատոր գիրքը, **«Նշմարք հայկական» (1870)** երեք պրակից բաղկացած երկը, ինչպես նաև համաշխարհային քաղաքական աշխարհագրությանը վերաբերող **«Քաղաքական աշխարհագրություն» (1853)** գիրքը, որում անդրադարձ է կատարված նաև հայաբնակ գաղթավայրերին և այլն: Երբեք չլինելով Հայաստանում՝ իր ձեռք բերած հարուստ իմացությունների և պայծառ երևակայության շնորհիվ Ալիշանը հիացմունքի արժանի փաստացիությամբ է նկարագրել Մեծ Հայքի գավառներն ու բնակավայրերը՝ հարուստ պատմաաշխարհագրական բնութագրություններով հանդերձ, բացառությամբ շատ աննշան որոշ պատմական անդրադարձների:

Ալիշանի՝ Հայաստանի աշխարհագրական-պատմական վայրը ճոխ պատկերներով ու գունավոր քարտեզներով ներկայացնող **«Շիրակ» (1881)**, **«Միսուան» ((1885) Կիլիկյան Հայաստան)**, **«Այրարատ» (1890)** և **«Միսական» (1893) (Մեծ Հայք)** երկերը հայագիտության զանազանի չխամրող կոթողներից են:

Ալիշանը եղել է **աշխարհագրական ուղղության** (ընդգծ.՝ Ջ. Բ.) հետևորդ: Ըստ այդ ուղղության՝ մարդկային հասարակության զարգացման հիմնական գործոնը աշխարհագրական միջավայրն է՝ ի տարբերություն Հիպ. Թեևի նախանշած կուլտուր-պատմական ուղղության երեք գործոնի՝ ցեղ, կլիմա, աշխարհագրական տարածք:

Պատմաաշխարհագրական բնույթի կոթողային երկերում, այդ թվում նաև «Արցախ»-ում, հեղինակը հստորեն օգտագործել է հայ և օտար աշխարհագիրների, ճանապարհորդների բազմապիսի տեղեկությունները, պատմիչների, մատենագիրների հարուստ իմացությունները, վիճագրությունները, առանձին ուսումնասիրությունների կարևորագույն հատվածները՝ անխտիր կերպով հղում-

ներ, նշումներ, ծանոթագրություններ կատարելով՝ ըստ տեղի, ժամանակի, պահանջի:

«Արցախ»-ում Ալիշանը կառուցվածքային այլ մոտեցում է ցուցաբերել. թվանիշերով առանձնացրել է թե **աշխարհները (նահանգները)**, թե այդ նահանգների աշխարհագրական տարածքների մեջ մտնող գետերը (**մաս 89**), ապա **լեռները**՝ իրենց հատուկ բնական հատկանիշներով (**մաս 90**), հերթական կարգով՝ **բուսական աշխարհը**՝ ցույց տալու համար «Արցախ» տերմինի ստեղծաբանությունը, **գավառներն** իրենց ծագումնաբանությամբ, գրաված աշխարհագրական դիրքով, նշանավոր սրբավայրերով, հայտնի և անհայտության եզրին գտնվող հրաշափառ կոթողները, հանճարի ցուանքներն իրենց վարքերին դաջված **հոգևոր և աշխարհիկ անձերը, իշխանները (մաս 91-92՝ ա-ժգ կետերով)**, **գավառների անուններն ու տրոհումները (մաս 93)**, Արցախի հնուց եկող անվանակոչումները (**մաս 94**) և առանձին գավառներն իրենց համակողմանի նկարագրերով (**մաս 95-ից սկսած** (ընդգծ.՝ Ջ.Բ.))՝ հեշտացնելով և տեսանելի, ուսանելի դարձնելով ներկայացված գիտական բազմաբնույթ նյութը:

Ի տարբերություն Առաքել Կոստանդյանցի, Մ. Թադիադյանի, Ս. Ջալալյանցի, Մ. Բարխուդարյանի, որոնք Արցախի մասին իրենց պատմությունները հյուսել են իրենց իսկ ձեռնարկած ճանապարհորդությունների ընթացքում հավաքած և ի մի բերած հարուստ ու փաստացի նյութերի հիման վրա՝ ականատեսի ու ականջալուրի, ակտիվ հետազոտողի, երևույթները անմիջական քննողի նկարագրով, Ալիշանն Արցախի, ընդհանրության մեջ՝ Հայաստանի մասին իր բազմաբովանդակ նկարագրությունները, գրական, պատմաաշխարհագրական ընդհանրացումները կատարել է՝ հիմնվելով բացառապես ձեռք բերած հսկայական գիտելիքների, խորը իմացությունների, բազմապիսի գիտական ուսումնասիրություններից, պատմիչներից քաղած անհերքելի փաստարկների հիման վրա՝ շատ աննշան դեպքերում որոշ անհամաձայնությունների տեղիք տալով:

«Արցախ» ուսումնասիրության մեջ **մեկից ութսունութերորդ** մասերը ներկայացնում են **Ուտիքի պատմությունը**, իսկ Արցախին վերաբերող բաժինը սկսվում է **ութսունիններորդ** մասից մինչև **հարյուր վաթսունվեցը**:

ԵՊՀ հայագիտական կենտրոնը երաշխավորել է հրատարակել Ղ. Ալիշանի «Արցախ» գիրքը: Այն լույս է ընծայել Երևանի համալսարանի հրատարակչությունը 1993 թ.: «Արցախ»-ի գրաբարից աշխարհաբար փոխադրությունը (թարգմանությունը) կատարել և մուտքի խոսքը գրել է Գ.Բ. Թուսունյանը:

Ալիշանը ցավ հայտնելով իր չիմացած գավառների նոր անունների մասին, արժևորելով պատմական փաստացիությունը՝ գրում է հետևյալը. «...Հիշելով այն, ինչ որ հին ժամանակներում իմացանք գավառների և իշխանությունների մասին, մեզ ցավ է պատճառում երկու-երեք գավառների և իշխանությունների նոր անունների չիմանալը, որի պատճառով մեր աշխարհագրության մեջ Արցախը ստիպված տրոհում ենք ավելի փոքր և ավելի մեծ մասերի ու նրանց հետ ավանդում: Եվ ինչքան որ մեզ ծանոթ է և մեր ձեռքի տակ է հին գավառների դասակարգումը, մեր աշխարհագրության մեջ, ըստ մեր կարողության, դնում ենք հին, միջին և նոր գավառներն ու բնակավայրերը...»¹:

Ալիշանը հաճախ հետաքրքիր երանգներով, վիպական շնչով անձնավորում է Արցախի հատուկ և հասարակ անունները, երևույթները՝ դրանց շատ կարևոր դերակատարություն վերապահելով, տեսակը տարբերակելով, ինչպիսիք են. **լեռները՝ Մռով-Մռավ, Քիրս, Գյուլիստան, Գանձասար, Շանթախտ, Դիզապայտ, լեռնաշղթաները՝ Քիրսի պար, Գեղամա լեռներ, գետերը՝ Թարթառ-Տրտու, Քուռ-Կուր, Արաքս-Երասխ, Հազարի, Գարգար-Կարկառ, Չորագետ, Քոնդալան--Քենտիլան** (ընդգծ.՝ Զ.Բ.), եկեղեցիները, մատուռները, սրբավայրերը,

¹ Ղևոնդ Ալիշան, Արցախ, Երևան, 1993 (այսուհետև՝ Ղևոնդ Ալիշան, Արցախ), էջ 13-14:

քաղաքները, գավառները, գյուղերը և այլն: Դրանք բոլորն էլ ազգային հոգևոր մշակույթի տարրերն են հանդիսանում...

Նույն մոտեցումը տեսնում ենք «Արցախ» աշխատության հետ նմանության եզրեր ունեցող **«Տեղագիր Հայոց Մեծաց»** գրքում, որը հրատարակվել է Վենետիկում 1855 թ., գրաքննադատների և ընթերցողների շրջանում մեծ գնահատության արժանացել:

Գրքի շարադրանքից զգացվում է հեղինակի քնարական ոգին, անթաքույց սերն ու ուսումնասիրողի հետաքրքրությունը արցախահայության վարք ու բարքի, արարչագործ ու ազատատենչ ոգու, Արցախ աշխարհի ու նրա հիշատակներով, ավանդապատումներով, վիպական անդրադարձներով հարուստ պատմության, աշխարհագրության, ազգագրության, ավանդությունների հանդեպ:

Որոշ դեպքերում ընթացս շարադրանքի հեղինակը գիտական համեստությամբ ու իրեն հատուկ մեծ բարեխղճությամբ իր կարծիքը հայտնում է վերապահությամբ: Այսպես, օրինակ՝ **ինձ թվում է (էջ 10), անհարմար չի լինի կարծել (էջ 7), ես կարծում եմ- կարծում եմ (էջ 12, 70), թվում է՝ սա պետք է լինի (էջ 18), այս ամենից ենթադրում եմ (էջ 18), իմ կարծիքով, չենք կարծում (էջ 26), սակայն կարծում եմ (էջ 27), ինձ թվում է (էջ 37), ես գտնում եմ, իմացածի համաձայն, ես չգիտեմ և այլն (ընդգծ.՝ Զ. Բ.):**

Ալիշանի մյուս աշխատությունների նման այս աշխատությունն էլ չի կորցրել իր ճանաչողական մեծ նշանակությունն ու արդիական արժեքը, սկզբնաղբյուր լինելու դերը: Հեղինակի վիպական, պատմաաշխարհագրական հետազոտությունները, երկերը փաստական հարուստ նյութ են պարունակում Հայաստանի աշխարհագրության, ավանդույթների և հայ ժողովրդի նկարագրի, պատմական անցյալի գրեթե բոլոր շրջանների ու տարբեր բնագավառների վերաբերյալ:

Հեղինակը Արցախի լեռներից թվարկում է **Աստղաբլուրը, Դիզափայտը, Չլբերդը (հավանաբար նկատի ունի Չարաբերդը կամ Չլաբերդը, ընդգծ.՝ Զ. Բ.), Գյուլիստանը, Ուտիքի և Արցախի միջև լարաբաժան**

Մարիալը, Մոսկը, ապա՝ Ուլուխանը, Գըրք-Կոզը, դրան շարունակող Գանձասարը և Շահթախտը (վերջիններից սկիզբ են առնում Խաչենագետի աղբյուրները), Քիրիզը (հավանաբար՝ Քիրսը, ընդգծ.՝ Զ. Բ.), Զիարեղը, բրգաձեն Կուրիանը, ապա նաև Քարախունը, որն ըստ Խորենացու Կողթն (հավանաբար՝ Կողթն, ընդգծ.՝ Զ. Բ.) գավառում պետք է լինի:

Հետաքրքիր աշխարհագրական և պատմական անդրադարձներ կատարելով՝ հեղինակը Կողթի և Բերդաձորի նկարագրությունից հետո անդրադառնում է Արցախի երրորդ՝ Վայկունիք գավառի նկարագրությանը, վիպական շնչով կերպավորում բնության երևույթները, երկրի գեղատեսիլ կերպը. «Արցախի երրորդ գավառը, Կողթից և Բերդաձորից հետո.... Վայկունիքն է, որը պարզ կերպով առանձնացված է մյուս մասերից, որոնցից ավելի արևմուտք լինելով, երկու կողմից սահմանակից է Սյունիքին, արևմուտքից՝ Սողք գավառին, որից անջատվում է արցախական Թարթառի և Գեղամա ծովի ավազանների բարձր լեռների անջրպետով, հարավից՝ Հաբանդով կամ այժմյան Զանգեզուրով, իսկ սահմանի ելքից՝ Արցախի Չլաբերդ գավառով, հյուսիսից՝ նեղ Քունկուր լեռով, որտեղ վերջանում է Այրում գավառը:

Երկիրը հարուստ է բարձրավանդակներով և լեռնաճեղքերով, ջրարբի է, օժտված բնության զանազան գեղեցկություններով, քանի որ ճանապարհորդները այդտեղով առանց հետաքրքրության չեն անցել»: Հեղինակը կարևորում է **Արցախի մայր գետի՝ ստնտու Թարթառի՝ Տրտուի** մեծ դերը, գեղարվեստական երանգներ տալիս ասելիքին՝ ընդգծելով հետևյալը. «Լեռներից ու բլուրներից բխում են շատ աղբյուրներ ու առվակներ, որոնք հավաքվում են երեք գետակների մեջ, որոնք էլ արևելյան սահմանում միանալով իրար, կազմում են Թարթառ մեծ գետը: Միջին գետը հենց Թարթառն է, որը բխում է գավառի հարավարևմտյան ծայրից, Արցախի ամենա-

հեռավոր մասից՝ **Մառյալ-Սըռչալ լեռից և, իր մեջ առնելով մանր վտակներ, իջնում է դեպի հյուսիս ու թեքվում դեպի արևելք»² :**

Աղբյուր ունենալով պատմահայր Խորենացուն՝ Ալիշանը վիպական երանգներով շարադրում է Վայկունիք գավառի պատմությունը՝ վկայակոչելով նրա անվան ծագման հետ կապված ավանդությունը. «Վայունիք և Վայկունիք մեզ է հասցրել մեր վիպահայր Մովսես Խորենացին: Նա նշում է նաև ժամանակը՝ Փրկչի ծննդից 40 տարով առաջ. երբ Տիգրանն ու Արտավազդը կռվում էին պաղեստինցիների դեմ, «Վայկուն անունով մի ավագակ խռովություն է բարձրացնում Հայաստանում և գրավում Ամուր լեռը, և այժմ այդ ավագակի անունով լեռը կոչվում է **Վայկունիք**³, որի պատճառով արքան շտապեց վերադառնալ Հայաստան և երկիրն ազատել ավագակի ձեռքից, որը Կովկասի այն կողմերից էր, թե՛ հայոց նախնիներից (**կարծում ենք, հեղինակի վերջին ենթադրությունը ավելի հավանական է. օտար ավագակի անունով հնարավոր չէ երկիր անվանակոչել, ընդգծ.՝ Ջ. Բ.), հայտնի չէ: Ըստ երևույթին, նա երկար ժամանակ տիրել է այդ երկրամասին, և այն կոչվել է նրա անունով, իսկ առաջնեքում, ինչպես ցույց է տալիս պատմիչը, այդ լեռները, իրենց բնության համաձայն, կոչվել են Ամուր»: Քննաբանը իր միտքը, եզրահանգումը հաստատելու համար, մի քանի աղբյուրներից է հղումներ կատարում, այսպիսով, փորձում հնարավորինս ճիշտ մեկնաբանումներ կատարել: Շարունակելով իր մտորումները՝ եզրահանգում է. «Գավառի առանձին բաժանման պատճառով Թ դարի Աղվանից պատմիչը-Կաղանկատվացին, այն կոչում է **Վերին Վայկունիք**, որը 830 թ. նվաճեցին բաղանիկեցիք կամ բաղանակացիք, որոնք տասնհինգ տարի ասպատակեցին Բերձորն ու շրջակա գավառները, և նրանց դուրս վռնդեց քաջ Ապոմուսեն: Սա հիշատակվում է Բերձոր և Սիսական գավառների միջև, հյուսիսից դեպի հարավ»⁴:**

² Նույն տեղում, էջ 14-15:

³ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 129:

⁴ Ղևոնդ Ալիշան, Արցախ, էջ 15:

Ականա, Ծար, Հանդաբերդ

Գեղարվեստական շնչավորմամբ է տրված Ծարում գտնվող Սուրբ Հակոբի տաճարի նկարագիրն իր վայելչագեղ տեսքով, որի ամբողջ գույքը կատարյալ պատկեր ուներ՝ տախտակները, խոյակները, պուների պատվանդանները, գլուխները, դռներն ու սեմերը, հատակը, որոնք պատրաստված էին գեղատեսիլ գիհի ծառից: Ալիշանը, վկայակոչելով Գր. Մագիստրոսի թղթերը, հաղորդում է, որ Խաչենի իշխան Գրիգորի և Դովի որդի Հասանի ստեղծագործ ոգու ու արարող ձեռքի արդյունքն էր այն բազմաթիվ գեղեցիկ շինությունների առկայությունը, որ կային Խաչենի տարածքում, մանավանդ Ծարում, որին Մագիստրոսը թագավորական քաղաք է անվանում⁵, որը Հասանի (Խաչենի իշխան Հասան Ջալալի) սիրած վայրն էր և որը, «լինելով այդ կողմերի և բազմաթիվ այլ գավառների իշխանը, ամենից շատ սիրում էր Ծար գյուղը՝ քաջ հայրենիքն ու պարգևները, որոնք արյան գինն են՝ տրված հայոց թագավորների կողմից»: Ամբողջացնելով իշխանի նկարագիրը՝ Ալիշանը խոսում է նաև նրա եղբոր մասին: «Պետք է ասել, որ նա այն ոչ միայն սիրում էր, այլև գեղեցկացնում էր շինություններով՝ իրեն գործակից ու եղբայր ունենալով Հովհաննես արքեպիսկոպոսին, որը Հաղպատի առաջնորդն էր և շատ շենքեր էր կառուցել այնտեղ»⁶:

Քանի որ Ծարը գտնվում էր Տրտու գետի միջնամասում, ուստի նրան, իր դիրքի համաձայն՝ ըստ արձանագրությունների, նաև **Գետամեջ** անունն էին տալիս: Տեղեկություն հաղորդելով տաճարի մասին՝ Ալիշանը ընդգծում է նաև XIII դարում Հայոց աշխարհին հասած աշխարհասասան մեծ պատուհասի, նետողաց ազգի՝ թաթարների արշավանքների սուր պատկերը՝ նշելով հետևյալը.

99. «Ըստ Թադեի վանքի արձանագրությունների «շինեց Գետամեջ սուրբ վանքը», որը նույն Ծարի վանքն է ավանի հարավում՝ գե-

⁵ Գրիգոր Մագիստրոս, Թղթերը, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 221:

⁶ Ղևոնդ Ալիշան, Արցախ, էջ 20:

դեցիկ մեծ եկեղեցով, որը շատ հին է, և նրա տեղի ու շինության մասին վկայում է արձանագրությունը. «Այն ժամանակ, երբ թաթարները տիրել էին շատ երկրների, մինչև օվկիանոս մեծ ծովն ու Ստամբուլը, Պոնտոսից մինչև Եփրատ գետը տիրելով գոռոզաբար, մեծ հարկեր էին պահանջում՝ նեղություն պատճառելով բոլորովին, մեծերին ու փոքրերին մատնելով մահվան ու գերության....»⁷:

100-րդ մասում հեղինակը կարևորում է նաև գրական գործիչների կատարած աշխատանքները, ընդգծում նրանց ունեցած լուսավորական ծրագրերը, տալիս երևելի մատենագիրների անուններ, որպիսիք են ԺԶ դարում Ծարում հանդես եկող Հովհաննես Վարդապետը, վերջինիս անվանակից և ժամանակակից Հովհաննես Վարդապետ Ծաբեցի պատմիչը, «Մատթեոս Սարկավագը՝ հայկական տպագրության հաստատման համար քրտնաջան վաստակավորներից մեկը, ԺԷ դարի կեսին, 1655 թ. գալով Եվրոպա և դեգերելով Վենետիկում ու Հռոմում, ձեռնադրվում ու Ամստերդամում կառուցում է տպարան, որը բարգավաճման հասցրին Ոսկանյանները, որովհետև մահանում է Մատթեոսը, 1660-ին»⁸ :

Այլշանք, քննելով Տուղխտ գետակի ընդարձակ հովտում, հարավարևմտյան կողմերում և շրջակա աղբյուրների մոտ գտնվող Հանդաբերդի պատմությունը, թվարկելով աշխարհագրական այդ տարածքում տարածված բնակավայրերը (**Պաշդիպե, Շեքերեմ, Գալապուն, Իրգա կամ Իրծա, Հիրխիջևան, Ասերիխ, Քյապեպաշի, Հաճիսումլու ցուղերը**), նշում է նաև հանքային ջրավազանի մասին՝ վկայակոչելով պատմական աղբյուրներ.

«102. Սրանց մոտ են գտնվում տաք ջրերի անվանի բաղանիքները, որոնք նշում է Ապիքերմ (ջերմաջրեր) անունով պարսիկ ոմն աշխարհագիր. Դրանց տեղը նշում է Կիրակոսը Դավիթ Խաբե-

⁷ Նույն տեղում, էջ 20:

⁸ Նույն տեղում, էջ 22:

բայի պատմության մեջ, երբ Ծարի մասին ասում է, թե այն պետք է լինի «Հանդաբերդի մոտ, որտեղ Ջերմուկն է»⁹:

Բերձոր, Զավե, Քուստի-Փառնես,

Փառիստս գավառները, Ջնա բնակավայրը (վիճակ)

Ալիշանը փորձելով ներկայացնել Բերձոր և Բերդաձոր հին գավառների անվան բացատրությունները, ելնելով նրանց թե՞ աշխարհագրական դիրքից ու բնույթից և թե՞ բնական վիճակից, վկայակոչելով Խորենացուն և Կաղանկատվացուն՝ գրում է.

103. «Կուրանի ձորահովտի արևմտյան կողմի՝ Կուրակի պատսպարանը, որը կազմում է Մոռավ լեռան արևելյան կողմը կամ Այրում և Չլաբերդ գավառների անջրպետը, **իմ կարծիքով**, հին **Բերդաձոր** գավառն է, թեև բազմիցս ասացինք, որ Այրումի մեջ է մտնում, **բայց չենք կարծում, թե** նա ամբողջովին ամփոփվում է նրանում, քանի որ Արցախի ոչ մի այլ գավառի մեջ հնարավոր չէ այն տեղադրել, քան **Բերդաձորի**, որի անունն էլ պետք է բխեցնել տեղի բնությունից, բազմաթիվ ամրոցների ու խոր ձորերի քարափների առկայությունից, բայց աշխարհագրի ¹⁰ օրինակներում և պատմիչների մոտ **Բերձոր** է անվանված, որն այլ իմաստ է տալիս՝ արգավանդություն: Սակայն կարծում եմ, որ այն հնչյունական կամ բարբառային աղավաղման արդյունք է:

Ըստ Խորենացու՝ այն պետք է լինի Վայկունիքի մոտ.... Այդ նույն բանը հաստատում է նաև Աղվանքի Պատմիչը՝ այն դասելով բաղանիկեցիների կողմից նվաճված գավառների շարքը....»¹¹:

Կարևորելով այն հանգամանքը, որ իր ապրած ժամանակաշրջանում **Քուստի-Փառնես (հին ժամանակներում՝ Զավե-Ալիշան) փոքր գավառը՝ ինչպես հնում, այդպես էլ ընկած է նեղ շերտով, ուստի**

⁹ Նույն տեղում, էջ 25, տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 322:

¹⁰ Հմմտ. Մովսես Խորենացի, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1843, էջ 609:

¹¹ Ղևոնդ Ալիշան, Արցախ, էջ 26-27, տե՛ս Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, էջ 327:

հեղինակը հիմնավորում է փաստը, ըստ որի՝ այն Քուստի-Փառնես մեծ գավառի մասն է կազմել:

104-րդ մասում նա գրում է. «.... Այն Խորենացին չի հիշատակում, այլ տեղադրում է Աղվանքում, միացնելով Հայաստանից, Ուտիքից, Արցախից գրաված քսան կամ քսանչորս գավառներին....այն մինչև այժմ հայտնի է Զեյվա անունով և պետք է լինի նույն կողմում, Ղարա-չայ կամ Կուրան գետի մոտ»¹²:

Ժ դարում Սահակ Սևադան տիրել է Գարդման, Քուստի-Փառնես, Գանձակ գավառներին... Մեծ Կողմանքի ու Քուստի-Փառնես նահանգի՝ որպես մեկ ամբողջության հոգևոր առաջնորդն էր Միսայել եպիսկոպոս: Ժ և ԺԳ դարերում գավառն ավելի է ծաղկում ու հռչակվում, բայց ոչ Քուստի-Փառնես, այլ Փառիսոս անունով:

Վերոդիտված գավառների մեջ Փառիսոսի փառքն ու անունը ավելի հին է:

Այս և այլ պատմաաշխարհագրական վայրերի ու նրանց պատմության մանրակերտ շարադրանքը, հոգևոր կենտրոնների, սրբավայրերի, վիպական ու պատմական, հոգևոր գործիչների մասին վերլուծությունները տեսնում ենք Ալիշանի մեկնադաշտում, որը դրանք ներկայացնում է պատմական, վիպական բազմապիսի աղբյուրների համադրմամբ, նրանցում առկա զրույցների, ավանդապատումների զուգահեռմամբ, որոնք վիպապատմական ուղեծիրում ներկայացնում են Արցախի գավառներում գործող իշխանների, ընդհանրության մեջ՝ հերոսների, արցախահայության կերպարների համակարգը:

Այս տեսանկյունից հետաքրքիր է **Աղվանից արքա, օրենսդիր Վաչագան Բարեպաշտի (թագավորել է 480 թ. կեսերից մինչև մոտ. 510 թ., ընդգծ.՝ Զ. Բ.) կողմից ստեղծված և Աղվենի ժողովում հաստատված Կանոնական Սահմանադրությունը, որն ամբողջությամբ**

¹² Նույն տեղում, էջ 26-27:

գետեղված է Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկասիրության առաջին գրքի ԻԶ գլխի մեջ:

Փառիստսի հյուսիսային կողմում՝ Քուրակ գետի մոտ փնտրվող Զարդունի դաշտակում նահատակվեց Ս. Եղիշե առաքյալը՝ Գիսից գալու ճանապարհին, որի նշխարների ճակատագրի մասին տեղեկությունները այլևայլ են: Ալիշանը, այս կարևոր հարցում պարզաբանում մտցնելու նախանձախնդությամբ, դիմում է Մ. Կաղանկատվացուն՝ մեջբերելով հետևյալը. «Տեսիլքով հայտնված սուրբ Եղիշայի նշխարքները տարան, տեղավորեցին Ուռեկան (Հոռեկա, ընդգծ.՝ Զ. Բ.) ավանում, որտեղ դրվեց նրա զուխը սուրբ քահանա Ստեփանոսի ձեռքով: Այնուհետև այնտեղից տեղափոխեցին Ներս-Միհրի սուրբ վանքը (Ուխտ), որն այժմ կոչվում է Զրվշտիկ, որը նույն ինքը Եղիշա առաքյալն է՝ ի փառս ամենակալ տեր Աստծու: Երկար ժամանակ անցնելուց հետո բարեպաշտ Վաչագանը Եղիշայի նահատակության փոսի վրա հուշասյուն կանգնեցրեց: Եվ արքայի սենեկապանը, առանձնանալով այնտեղ, իր կյանքին վերջ տվեց այդ հուշասյան վրա, ընդգծ.՝ Զ.Բ.»¹³:

Հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Ալիշանը Արցախի վանական համալիրների՝ սուրբ Եղիշեի և Զրվշտիկի, Հոռեկայի մասին՝ ընդգծելով նրանց պատմությանը առնչվող Վաչագան արքայի անունը, հատկանշելով սուրբ Եղիշեի՝ անդնդախոր ձորերով, կուսական անանցանելի անտառների հարևանությամբ վեր սլացող, բարձրադիր տեղանքում տարածված սրբավայրի ու նրա նախնական պատկանելության մասին՝ վիպական անդրադարձներով գրելով հետևյալը .

109. «Գտավանքից պակաս չէ նաև Ներս-Միհրի վանքը, որը կոչվում է Ներսմիհրական միաբանություն, որտեղ Վաչագանը տեղափոխեց սրբի նշխարքները, որի հետևանքով էլ նրա անունը ընդհանրապես Ս. Եղիշե է կոչվում....

¹³ Մովսես Կաղանկատվացի, էջ 11-12:

....Ներս-Միհրի վանահայր սրբազան Քշիկը գրել է, թե աղվանից իշխան Վարազ Տրդատը մի փոքրիկ գյուղակ է տվել սուրբ Խաչիս՝ սպասավորելու իր հոգու փրկության համար, իսկ այժմ Փուսան-Վեհ անունով հեծյալը, անառակ կյանք վարելով, գրածը մեջտեղ է բերում, թե Աղվանքի իշխանը իրեն է տվել այդ եկեղեցին վանականությամբ, որպեսզի ինքը հոգ տանի... :

....Շատ է հին վանքի **Ջրվշտիկ** անունը, որով և մինչև օրս կոչվում է: Այն գտնվում է նույն Հռոմիկի արևմտյան կողմում, դժվարանցանելի ձորամիջում, որի պատճառով էլ անապատ է կոչվում: Այդ վանքում, ասվում է մի հիշատակարանում, գտնվել է Տիրամոր վերափոխման պատմությունը, որը Քերթողահայրը և Մանդակունին հրատարակեցին»¹⁴:

Մեր ժամանակներում էլ այդ վայրը աստվածամերձ է, սքանչելի ու արքայական՝ խորհրդավոր անդորրով շրջապատված: Ս. Եղիշե առաքյալի մատուռի հարևանությամբ կառուցված է եկեղեցի՝ զմբեթագարդ կաթողիկեով, որի մոտ է գտնվում Աղվանից աշխարհի արքա, Կանոնական Սահմանադրության՝ օրենքների օրենսդիր, տարվա օրերի թվով եկեղեցիներ կառուցած, սքանչելագործ Վաչագան Բարեպաշտի սրբավայր գերեզմանը-դամբարանը:

Հիշատակելի է այն փաստը, Սարգիս Ջալալյանցն իր «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» արժեքավոր գրքում Աղվանից Բարեպաշտ արքայի անունը հիշատակելիս՝ երկու, երեք անգամ է **Վաչագան** ձևը նշում, մնացած տեղերում հիշատակում է Վաչական ձևը: Սարգիս Ջալալյանցի «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան»-ը որպես սկզբնաղբյուր օգտագործելով՝ Բակուր Կարապետյանն իր նոր պատմավեպն անվանել է **«Վաչական»** :

«Արցախ»-ում հեղինակը մեծ պատասխանատվությամբ և տեղագրական, պատմաաշխարհագրական, ժողովրդագիտական փաստացիությամբ է քննաբանում Մեծ Հայքի տասնհինգ նահանգներից

¹⁴ Նույն տեղում, էջ 34-35:

տասներորդը՝ Արևելից կողմանքը՝ Արցախը, նրա տասներեք գավառները՝ Կողթը, Բերդաձորը, Վայկունիքը, Միսական ուտանը, Մեծկունիքը, Մեծիրանքը, Փառնեսը, Մյուս Հաբանդը, Պարզկանքը, Մուխանքը, Հարժանքը, Պիանքը, Քոտակը: «Հայոց նախնիների իշխանության ժամանակ Արցախը տասներկու կամ ավելի գավառների էր բաժանվել...»¹⁵, - լուսաբանում է Ալիշանը:

Մեկնաբանը Արցախի գավառների խնդրահարույց հարցի՝ թվաքանակի մասին անդրադառնալով՝ նշում է, թե պատմահայր Խորենացին 12 գավառներ է նշում, իսկ ըստ այլ օրինակների՝ դրանք 13 կամ 14-ն են:

Ղևոնդ Ալիշանի մեծարժեք «Արցախ» գիրքը առաջինը մենք ենք հայ գրականության մեջ գրականագիտական հիմնարար վերլուծության ենթարկում:

Ալիշանը, ինչպես իր մնացած տարաբնույթ գիտական աշխատանքներն ու ուսումնասիրությունները, նույնպես՝ «Արցախ»-ը, գրել է Հայոց երկրի տասներորդ նահանգի՝ Արցախի համապարփակ կյանքն ամբողջությամբ ու համապատասխան ժամանակագրական կարգով հնարավորինս ճիշտ ներկայացնելու մտահոգությամբ լի, ինչը նրան մեծապես հաջողվել է :

¹⁵ Ղևոնդ Ալիշան, Արցախ, էջ 9:



ՆՈՒՆԵ ՍԱՐՈՒՄՅԱՆ

*Արցախի պետական
համալսարանի պատմության և
քաղաքագիտության ամբիոնի դոցենտ,
Պատմական
գիտությունների թեկնածու*



ՎԱՐԴԳԵՍ ՍԱՖԱՐՅԱՆ

*Արցախի պետական
համալսարանի պատմության և
քաղաքագիտության ամբիոնի դոցենտ,
Պատմական
գիտությունների թեկնածու*

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

16-18-րդ դարերում՝ թուրք-պարսկական տիրապետության ժամանակաշրջանում Հայաստանի ազգաբնակչությունը զրկված էր տնտեսական ու քաղաքական այն պայմաններից, որոնք անհրաժեշտ էին մշակույթի զարգացման համար: Այդ իսկ առումով էլ պատահական չէ ամենևին, որ 18-րդ դարի վերջին տասնամյակներին և 19-րդ դարի արշալույսին հայոց քաղաքական, ազգային ու հասարակական կյանքում տեղի ունեցած էական տեղաշարժերն իրենց կնիքն են դնում հայկական մշակույթի առաջընթացի վրա, պայմա-

նավորում հոգևոր-մտավոր աշխուժացումը ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ Մայր հայրենիքից հեռու հայ գաղութներում, Ռուսաստանի և Անդրկովկասի հայաբնակ վայրերում:

Մշակութային այդ զարթոնքը նպատակ էր հետապնդում քաղաքական ինքնագիտակցություն ու ազատագրական մղումներ ներարկել աշխարհասփյուռ հայությանը¹, և դրանք ծառայեցնել համազգային գաղափարների մշակմանը, դրանց շուրջ ազգային կենսունակ ուժերի համախմբմանը, տարբեր երկրներում բնակություն հաստատած ու միմյանցից անջրպետված հայության զանազան հատվածների միջև մերձեցման և համագործակցության հաստատմանը:

XIX դարի երկրորդ կեսին և XX դարի առաջին քսանամյակում հայ պատմագիտական միտքն աննախընթաց առաջընթաց ապրեց: Բուրժուական պատմագիտության զարգացումը Եվրոպայում և Ռուսաստանում, Ռուսաստանին միացման հետևանքով Արևելյան Հայաստանում տնտեսական և հասարակական կյանքի դրական տեղաշարժերը, Ռուսական կայսրության դեմոկրատական բարեփոխմանը միտված 1850-1860-ական թվականների հասարակական կյանքի վերելքը, ասել է թե՛ մտավոր հեղաբեկումները, բուրժուական հարաբերությունների մուտքը հայ իրականությունը զգալիորեն նպաստեցին անցյալում գերիշխող կղերաֆեոդալական մտածողության և իդեալիստական պատմահայեցողության կաշկանդող դրույթների վերանայմանն ու հաղթահարմանը²:

Եվ եթե մինչ այդ հրապարակի վրա մեծ ազդեցություն ուներ Մ. Չամչյանի պատմահայեցողությունը, որի սկզբունքներն արդարացնում էին հին և միջնադարյան Հայաստանի արտադրահարաբերությունների ամբողջական համալիրը, փառաբանում թագավորների, կաթողիկոսների և այլևայլ դեմքերի գործունեությունը, ապա հայ նորդարյան պատմության մեջ առաջինը Խ. Աբովյանն էր,

¹ Հայոց պատմություն, խմբ.՝ Հր. Ռ. Միմոնյանի, Երևան, 2012, էջ 474:

² Հայոց պատմություն, հտ. 3, գ. 2-րդ, Երևան, 2015, էջ 163: Տե՛ս նաև Հայ ժողովրդի պատմություն, հտ. 6, Երևան, 1981, էջ 882:

ապա՝ Մ. Նալբանդյանը³, որ ըմբոստացան պատմությունը նշանավոր մարդկանց գործունեության գովազդ ներկայացնող միջնադարյան պատմագիտության սահմանափակության դեմ և առաջադրեցին գիտական պատմություն ստեղծելու պահանջը, որում հասարակական կենսագործունեության ապահովման գլխավոր դերակատարն ու գործուն ուժը պետք է լինեի ժողովուրդը, առաջին հերթին՝ նրա արարող աշխատավոր զանգվածը:

Պատմագիտության զարգացմանը նպաստեցին նրան օժանդակող գիտաճյուղերի՝ աղբյուրագիտության, մատենագիտության, ազգագրության, հնագիտության, դրամագիտության ձեռքբերումները:

Հայ հին և միջնադարյան պատմագրության քննական ուսումնասիրությունը, պատմիչների ստեղծագործությունների ինչպես հայերեն, այնպես էլ ռուսերեն ու եվրոպական լեզուներով բազմաթիվ հրատարակությունները կարևոր դեր խաղացին հետագա առաջընթացի ճանապարհին: Աստիճանաբար ասպարեզ եկան մասնագիտական կրթություն ստացած և դարաշրջանի առաջադիմական գաղափարներով տոգորված ուսումնասիրողներ, որոնք աստիճանաբար խլելով առաջնությունը եկեղեցական պատմագետների ձեռքից՝ ջանացին բուրժուական պատմագիտության հայեցակետով լուսաբանել հայ ժողովրդի պատմության հիմնախնդիրները:

19-րդ դարի երրորդ քառորդից բուրժուական պատմագիտական միտքը աստիճանաբար տիրապետող դարձավ հայ իրականության մեջ և նշանակալի առաջադիմական դեր խաղաց հայոց պատմության կրոնաաստվածաբանական մեկնաբանումները հաղթահարելու գործում: Անգամ հին մեթոդաբանությամբ և ոճով ստեղծագործողներից ոմանք բուրժուական գաղափարախոսության ներգործությամբ հարկադրված էին վերանայելու իրենց նախկին մեկնաբանությունները⁴:

³ Նույն տեղում:

⁴ Հայոց պատմություն, հտ. 3, գ. 2-րդ, էջ 164:

Հայ բուրժուական պատմագիտությունը վաղ շրջանում, այսինքն 1860-1870-ական թվականներին, ավելի շատ պահպանողական ուղղություն ուներ և ինչ-որ չափով արձագանքում էր հին պատմագիտությանը: Պահպանողական պատմաբանները մեծ մասամբ զբաղվում էին Հայաստանի հին և միջնադարյան պատմության ուսումնասիրությամբ՝ հատկապես կարևորելով Հայաստանի պետականության գոյության շրջանները և Հայ Առաքելական եկեղեցու պատմությունը: Դրանով այդ պատմագիտությունը ձգտում էր ազգային ինքնագիտակցության եկող հայ ժողովրդի մեջ հետաքրքրություն առաջացնել անցյալի արժանահիշատակ պատմական իրողությունների հանդեպ և բորբոքել հայրենասիրական ոգին: Այդ պատճառով էլ հատուկ ուշադրություն էր դարձվում սկանավոր պատմական դեմքերի՝ թագավորների, զորավարների, կաթողիկոսների գործունեության լուսաբանմանը և անտեսվում էին սոցիալ-տնտեսական հարցերը:

Հաջորդ տասնամյակներում՝ 19-րդ դարի 80-90-ական թվականներին, ավելի ակնառու դարձավ լիբերալ-բուրժուական պատմագիտությունը: Արձագանքելով ժամանակի թելադրանքներին, հայ ժողովրդի վերընթաց ապրող ազգային-ազատագրական շարժումներին՝ լիբերալ-բուրժուական պատմաբանները սկսեցին քննադատական մոտեցում ցուցաբերել հին հայկական աղբյուրագիտական արժեքներին և ջանում էին նորովի վերլուծել պատմական իրադարձություններն ու երևույթները՝ ուշադրություն դարձնելով նաև սոցիալական հարաբերությունների ու ազատագրական շարժումների, հասարակական մտքի և մշակույթի զարգացման հարցերի վրա: Փորձեր արվեցին ստեղծելու հայ ժողովրդի ամբողջական քննական պատմությունը:

Թեև բուրժուական պատմագիտությունը զգալի գործ կատարեց նյութի կուտակման, հայ ժողովրդի պատմության առանձին հիմնախնդիրների մշակման ու լուսաբանման ուղղությամբ, այնուամենայնիվ, այդ պատմագիտությունը չկարողացավ գիտական բացատրություն տալ հասարակական զարգացման ընթացքին, չտեսավ կամ չցանկա-

ցավ տեսնել պատմության հիմնական շարժիչ ուժի՝ ժողովրդական զանգվածների դերը, անտեսեց տնտեսական զարգացումը, դասակարգերի գոյությունն ու նրանց միջև տեղի ունեցող պայքարը⁵:

Սակայն պետք է ընդգծել, որ նույնիսկ այն պատմաբանները, ովքեր այս կամ այն ձևով նկատեցին դասակարգերի գոյությունն ու նրանց հակամարտությունը, այդ երևույթը տարածեցին միայն նախակապիտալիստական հասարակության վրա՝ բուրժուական ապրելակերպը համարելով մարդկության զարգացման մշտամնա բարձրակետ:

19-րդ դարի երկրորդ կեսի հայ պատմագիտության մեծանուն դեմքերից էր Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ (1838 թ.), բանասեր ու պատմաբան, աշխարհագրագետ, բանաստեղծ ու թարգմանիչ Քերովբե Պետրոս-Մարգարի Ալիշանյանը՝ Ղևոնդ Ալիշանը (1820-1901 թթ.), գրական ծածկանունը՝ Նահապետ: Ծնվել է 1820 թ. հուլիսի 6 (18)-ին Կ. Պոլսում⁶ հայտնի դրամագետ-հնահավաք Մարգար Ալիշանյանի ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է տեղի Չայլիսյան վարժարանում (1830-1832), ավարտել է այն բարձր առաջադիմությամբ: 1832 թ. մայիսի 9-ին իր եղբոր՝ Սերոբի և 9-ը այլ պատանիների հետ Մխիթարյան միաբանության բազմադրոյունք անդամ Հ. Մկրտիչ Վ. Ավգերյանի առաջնորդությամբ տեղափոխվել է Վենետիկ, ուսումը շարունակել Մխիթարյան միաբանության վարժարանում⁷ (1832-1841 թթ.): Տասներկու տարեկան էր, որ սկսեց ուսանել (1832 թ.) Վենետիկի Ս. Ղազար վանքի դպրոցում («Ընծայարան»), ուր չորս տարի ուսանելուց հետո փոխադրվում է «Բարձրագույն կրթարանը» (Լորենծայարան, որտեղ սովորեց 5 տարի⁸): Այստեղ էլ նա սկսում է գրական իր առաջին փորձերը⁹:

⁵ Հայ ժողովրդի պատմություն, հտ. 6, էջ 883:

⁶ Միմոն Երեմյան, Կենսագրություն Հ. Ալիշանի, Վենետիկ, Ս. Ղազար, 1902, էջ 14:

⁷ Նույն տեղում, էջ 17(4):

⁸ Նույն տեղում, էջ 21(8):

⁹ <https://lib.armedu.am/resource/425>

1836 թ. ապրիլի 20-ին տեղի է ունենում պատանի Ալիշանի կրոնական ձեռնադրությունը (փիլոնառություն)¹⁰, որի ժամանակ նա ստանում է Ղևոնդ անվանումը¹¹: Իսկ դրանից երկու տարի անց՝ 1838 թ. հունվարի 28-ին, կրոնական հատուկ՝ «Ուխտադրություն» արարողակարգով դառնում է Մխիթարյան միաբանության անդամ¹²: 1840 թ. հունիսի 7-ին ձեռնադրվում է քահանա¹³:

1841 թ. Ալիշանը նշանակվում է ուսուցիչ Վենետիկի Ռափայելյան վարժարանում: Դասավանդմանը զուգընթաց՝ նա աշխատակցում է «Բազմավեպ» հանդեսին, որը լույս էր տեսնում 1843 թվականից: 1848 թ. նա նշանակվում է հիշյալ վարժարանի տեսուչ: 1849-1851 թթ. խմբագրում է «Բազմավեպ» հանդեսը:

1850-1853 թթ. զանազան առիթներով Ալիշանը լինում է Հռոմում, Լոնդոնում, Փարիզում, Բեռլինում, Վիեննայում, ուր ուսումնասիրում է հայկական գրչագիր մատյանները, նյութական ու հոգևոր կուլտուրայի հուշարձանները, նյութեր է հավաքում հայագիտական իր ուսումնասիրությունների համար: Կուսակրոն քահանա ձեռնադրվելուց հետո վարդապետը ուղևորվում է Փարիզ, 1858-1861 թթ. վարում է Փարիզի Մուրադյան վարժարանի տեսուչի պաշտոնը¹⁴: 1861 թ. նոյեմբերին, թողնելով Փարիզի Մուրադյան վարժարանի տեսուչի պաշտոնը, Ալիշանը վերադառնում է Ս. Ղազար կղզի: 1866 թ. նա կրկին նշանակվում է Վենետիկի Ռափայելյան վարժարանի տեսուչ: Այդ պաշտոնը նա շարունակում է վարել մինչև 1872 թ., որից հետո ընդմիջտ թողնում է մանկավարժական

¹⁰ Կենսագրություն Հ.Ալիշանի, էջ 21(8):

¹¹ Նա վերցրել է Ավարայրի (451 թ. մայիսի 26)՝ հայ ժողովրդի ազգային-ազատագրական ճակատամարտի պատմիչի՝ Ղևոնդի անունը, որն էլ նրան ուղեկցեց ամբողջ կյանքում: Տե՛ս Հ.Ա. Ասմարյան, Ղևոնդ Ալիշանի ճամփորդական նոթերից, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2003, թ. 2, էջ 127:

¹² Նույն տեղում, էջ 22(9):

¹³ Նույն տեղում, էջ 23(10):

¹⁴ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. I, Երևան, 1979, էջ 430:

ասպարեզը և ամբողջությամբ, մինչև իր մահը (1901 թ. նոյեմբերի 22), նվիրվում է հայագիտությանը¹⁵:

Նա մինչև իր կյանքի վերջը գրական, մանկավարժական ու գիտական գործունեություն է ծավալել միաբանությունում:

Հայագիտության և հայ գրականության պատմության մեջ Ղևոնդ Ալիշանը գրավում է նշանակալից տեղ: Նրա գրչին են պատկանում հայոց պատմության, հնագիտության, աշխարհագրության վերաբերյալ բազմաթիվ սովորածավալ աշխատություններ:

Գրեթե անընդգրկելի են Ղ. Ալիշանի մտավոր գործունեության ոլորտները՝ բանաստեղծություն, արձակ, բանասիրություն, հրապարակախոսություն, թարգմանություն, պատմագրություն, տեղագրություն, աշխարհագրություն և այլն, որոնք կազմում են մի ամբողջ մատենաշար՝ «Քաղաքական աշխարհագրութիւն նկարացոյց պատկերօք, հաւաքեաց Հ. Ղևոնդ Մարգ. Ալիշանեան» (1853 թ., Վենետիկ), «Տեղեկագիր հայոց մեծաց կամ աշխարհագրութիւն Հայաստանի» (1853 թ., Վենետիկ), «Հայկական աշխարհագիտութիւն յարաբերութեամբ Աշխարհագրական համագային երրորդ ժողովոյն եւ հանդիսին որ ի Վենետիկ» (1881 թ., Վենետիկ), «Հայ-Վենետ, կամ յարընչութիւնք հայոց եւ վենետաց ի ԺԳ-Դ եւ ԺԵ-Զ դարս» (1896 թ., Վենետիկ), «Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց» (1855 թ., Վենետիկ, նաև 1910 թ.), «Հայապատում. պատմիչք եւ պատմութիւնք Հայոց, (1901, Վենետիկ, հտ. Ա, Բ, Գ)», «Շնորհալի և պարագա իւր» (1873 թ., Վենետիկ), «Ընդ եղեղեալ», «Հայ-բուսակ կամ Հայկական բուսաբանութիւն» (1895 թ., Վենետիկ), «Շիրակ. Տեղագրութիւն պատկերացոյց» (1881 թ., Վենետիկ), «Միստուան» (1885 թ., Վենետիկ), «Այրարատ. Բնաշխարհ Հայաստանեայց» (1890 թ., Վենետիկ), «Միսական. Տեղագրութիւն Միւնեաց աշխարհի» (1893 թ., Վենետիկ), «Յուշիկք հայրենեաց հայոց» (1869-1870 թթ., Վենետիկ, հտ. Ա-Բ), «Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան» (1904 թ., Վենետիկ), «Արցախ» (1993 թ., Երևան) և այլն¹⁶, որոնք փաստական հսկայական

¹⁵ «Բազմավեկ», Վենետիկ, 1845, թ. 7, 1 ապրիլի, էջ 109-111:

¹⁶Տե՛ս՝ armscoop.com

նյութ են պարունակում մեր ժողովրդի պատմական անցյալի համարյա բոլոր շրջանների և գրեթե բոլոր բնագավառների վերաբերյալ:

Հայագիտության համար խիստ արժեքավոր են Ղևոնդ Ալիշանի ճամփորդական նոթերը, հատկապես այն իմաստով, որ նա ո՛չ միայն սովորական ճանապարհորդ էր, այլև հմուտ մասնագետ՝ պատմաբան, աշխարհագրագետ, հնագետ, ազգագրագետ և այդ ընթացքում բավականին հետազոտություններ է կատարել, որոնք աղբյուրագիտական հենք են ծառայել իր աշխատությունների համար: Դրանք հայագիտական մնայուն արժեքներ են:

Նա հայագիտական ուսումնասիրություններ գրելուց առաջ, նյութեր հավաքելու նպատակով, սկսեց իր ուղևորությունը հիմնականում եվրոպական երկրներում, որոնց քաղաքակրթության հետ շփումներից շատ բան իմացավ մեծ մտածողն ու հայագետը և աշխատեց դասեր քաղել հայ ժողովրդի համար:

Ղ. Ալիշանի ճամփորդական նոթերն ունեն գիտական բացառիկ արժեք. թեպետ նա Հայաստանում ընդհանրապես չի եղել, բայց նրա աշխատությունները հանգամանալից տեղեկություններ են պարունակում հայկական տարբեր շրջանների մասին:

Ղ. Ալիշանի ճանապարհորդությունը կարճ ժամանակաշրջան է ընդգրկել (1850-1853), բայց եղել է բովանդակալից և արդյունավետ: Գնահատականների ժամանակ ի՞նչ հարցեր էին հետաքրքրում Ալիշանին, և ինչո՞վ էր նա զբաղված: Վենետիկից նա անցավ Իտալիայի մյուս քաղաքները (Հռոմ, Վատիկան, Անկոնա, Մանտուա, Ջենովա և այլուր), եղավ Լոնդոնում, Վիեննայում, Փարիզում, Կանտոնում, Բրյուսելում, Բեռլինում, Ժնևում և այլն¹⁷: Գնահատականներից հետո հայագիտական անհրաժեշտ նյութեր հավաքել տարբեր մատենադարաններում և գրադարաններում պահվող ձեռագրերից, հիշատակարաններից, լատիներեն գրչագրերից: Գիտնականը ուսումնա-

¹⁷ Հ.Ա. Ասմարյան, Ղևոնդ Ալիշանի ճամփորդական նոթերից, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2003, թ. 2, էջ 128:

սիրում էր նաև այդ երկրների ճարտարապետական հուշարձանները և կոթողները, հնությունները, դրամները, ընդհանրապես հնագիտությունը և ազգագրությունը, որոնք նոր նյութեր տվեցին իր աշխատություններին՝ «Միսուանը», «Այրարատը» և մյուսները գրելու համար: Օտար գրադարաններում ուսումնասիրում էր և հայտնաբերում նոր ձեռագրեր, հիշատակարաններ, պրպտում-գտնում հայոց ազգի պատմության, ճարտարապետության, աշխարհագրության, հնագիտության, դրամագիտության և այլ բնագավառների վերաբերյալ նյութեր: Նրան հետաքրքրում էին հայկազուն սրբերը և նրանց կյանքը (սուրբ Մեմեովն, սուրբ Ներսես Լամբրոնացի), Ս. Գրիգոր Հայկազնի տաճարում հայտնաբերում է սուրբ Մակարա նշխարները և այլն: Ալիշանի հայագիտական ուսումնասիրություններն ու հոդվածները մեծ մասամբ տպագրվում են «Բազմավեպ» հանդեսում:

Ղ. Ալիշանը եվրոպական ճանաչման արժանացած գիտնական էր, Իտալիայի ասիական, Մոսկվայի հնեաբանական, Պետերբուրգի հնախոսական ընկերությունների և Ենայի փիլիսոփայական ակադեմիայի անդամ¹⁸, ստացել է Իտալիայի Գիտությունների ակադեմիայի պատվավոր դոկտորի կոչում: Անդամ է եղել Փարիզի, Հռոմի, Վիեննայի, Մյունխենի Գիտությունների ակադեմիաների:

Իր գրական լավագույն ստեղծագործություններով Ղ. Ալիշանը հաղթահարել է կլասիցիզմը և ուղի հարթել ռոմանտիզմի համար՝ դառնալով այդ ուղղության հիմնադիրներից մեկը հայ գրականության մեջ: Ռոմանտիզմի ոգով են ներծծված նաև նրա պատմագիտական ուսումնասիրությունները: Կոչ անելով հայությանը «զենքն ի ձեռին» ազատագրել հայրենիքը, պայքարով ձեռք բերել ազատություն և անկախություն՝ Ղ. Ալիշանը ապագա Հայաստանի հասարակական-քաղաքական կառուցվածքը պատկերացրել է որպես լուսավորյալ միապետություն¹⁹:

Գիտական հոդվածներով Ալիշանը հանդես է եկել 1843 թվականից՝ «Բազմավեպ»-ի էջերում: «Տեղագիր Հայոց Մեծաց» (1855) աշխա-

¹⁸ Հայոց պատմություն, հտ. 3, գ. 2-րդ, Երևան, 2015, էջ 165:

¹⁹ Ղ. Ալիշան, Տեղագիր հայոց մեծաց, Վենետիկ, 1855, 105 էջ:

տության մեջ տեղագրել է պատմական Հայաստանի գավառները, տվել նրանց համապատասխան գիտաաշխարհագրական բնութագրությունը: Ալիշանը նախատեսել էր գրել պատմական Հայաստանի բոլոր 15 նահանգների մասին պատմաաշխարհագրական բնույթի աշխատություններ, որոնք պետք է գետեղվեին 20-22 մեծադիր հատորներում: Շարքի առաջին գործն է «Շիրակ»-ը (1881), որտեղ Ալիշանը, բնավ Հայաստանում եղած չլինելով, հանգամանալից քննության է ենթարկել այդ գավառի պատմությունն ու աշխարհագրությունը: Այնուհետև իրար են հաջորդել «Միսուան» (1885), «Այրարատ» (1890) և «Միսական» (1893) աշխատությունները, որոնք չհնացող կոթողներ են հայագիտության գանձարանում:

Ղ. Ալիշանի պատմագիտական ժառանգությունն ամփոփում են 1855 թ. Վենետիկում լույս տեսած «Տեղագիր հայոց մեծաց», «Հին հաւատք հայոց» աշխատությունները: Նրա գիտական աշխատությունների շարքում իր արժեքն ու արդիականությունը չի կորցրել «Հայաստանի տեղագրությունը» («Հայաստանի աշխարհագրությունը») բազմահատոր աշխատությունը:

Իր աշխատություններում Ալիշանը համակողմանի քննության է ենթարկում պատմությունն ու աշխարհագրությունն իրար հետ զուգորդված: Նա առաջինը պատմագրության մեջ մտցրեց և կարևորեց պատմական աշխարհագրությունը՝ գտնելով, որ չկա պատմություն աշխարհագրությունից դուրս: Ըստ Ալիշանի՝ ժողովրդի կենցաղը, սովորույթները, հավատալիքները կապված են նրա աշխարհագրական միջավայրի հետ:

Եթե անընդունելի էր Ալիշանի պատմահայեցողությունը որպես Հայաստանի անցյալը իդեալականացնողի և նրա ապագան լուսավոր միապետության ձևով պատկերացնողի, ապա նրա ժողոված ու լույս աշխարհի հանած հսկայական նյութն այսօր էլ չի կորցրել իր գիտական - ճանաչողական մեծ արժեքը:

Ալիշանի երազանքն է եղել Մեծ Հայքի 15 աշխարհների պատմության վերաբերյալ աշխատությունների հրատարակումը: Նա բացա-

ռիկ խորը գիտականությամբ տեղագրել է պատմական Հայաստանի գավառները, տվել նրանց համապատասխան գիտապատմական և աշխարհագրական բութագրությունը: Դրանք պատմաաշխարհագրական, տեղեկագրական բնույթի գործեր էին, որոնցից հասցրեց հրատարակել միայն չորս հատոր՝ «Միսու(վ)ան» (1885 թ.), «Այրարատ» (1890 թ.), «Միսական» (1893 թ.), գրեց, բայց չհրատարակեց «Աղվանքը»: 1881 թ. առաջինը լույս է տեսնում «Շիրակը»: Կյանքի վերջին տասնամյակները գիտությանը նվիրած հայագետը, որ երբեք չէր եղել Հայաստանում, ստեղծեց այդ կապիտալ աշխատությունները, որոնցում ամենայն մանրակրկտությամբ ու հայրենասիրական կրքով նկարագրեց պատմական Հայաստանի աշխարհագրական միջավայրը, նյութական մշակույթի բազմաթիվ հուշարձանները, «աշխարհագրական ուղղության» սկզբունքներով ներկայացրեց հին Հայաստանի պատմությունը: Այս աշխատությունները ստեղծելու համար նա հրաժարվում է Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի տեսուչի պաշտոնից, ընդհանրապես բոլոր պաշտոններից, որպեսզի ամբողջ ժամանակը նվիրի գիտական գործունեությանը:

Այդ գործերում Ալիշանը մասնագիտական մանրակրկտությամբ տեղագրել է Հայաստանի պատմական նահանգների լեռները, գետերը, լճերը, ձորերը, արժեքավոր տեղեկություններ հաղորդել քաղաքներում, շենքերում ու գյուղերում եղած մեծ ու փոքր պատմական հուշարձանների մասին: Նրա տեղագրական երկերում հավաքված են բազմաթիվ մեծարժեք նյութեր հայկական վանքերի, զանազան հուշարձանների վրա եղած արձանագրություններից, ամփոփված են իր նկարագրված բոլոր արձանագրությունները:

Ալիշանը բնավ չլիներ ձգտում հարուստ գիտելիքների և վառ երևակայության շնորհիվ մեծ ճշգրտությամբ է նկարագրել Մեծ Հայքի գավառները, ինչը մասնագետների հիացմունքն է առաջացրել:

Պատմաաշխարհագրական բնույթի նրա աշխատությունների շարքի առաջին գործում՝ «Շիրակ»-ում, հանգամանալից քննության է ենթարկել այդ գավառի պատմությունն ու աշխարհագրությունը:

Այնուհետև իրար են հաջորդել «Միսուն», «Այրարատ» և «Միսական» աշխատությունները, որոնք անանց կոթողներ են հայագիտության գանձարանում:

Ալիշանը հետևել է ժամանակին լայն տարածում ստացած «աշխարհագրական ուղղությանը», ըստ որի մարդկային հասարակության զարգացման հիմնական ազդակը աշխարհագրական միջավայրն է: Նրանով են պայմանավորվում երկրների ու ժողովուրդների միջև եղած տարբերությունները:

«Բազմավեպ» հանդեսը 1988-1989 թթ. իր համարներում առաջին անգամ բնագրով հրատարակեց Ալիշանի «Արցախ» պատմա-աշխարհագրական ուսումնասիրությունը, որը գրված է ընտիր գրաբարով, ընդհանուր ծավալով՝ 124 էջ: «Արցախն» սկսվում է 89-րդ պարագրաֆով, իսկ 1-88-րդ պարագրաֆները հատկացված են Ուտիքի ուսումնասիրությանը:

«Արցախ» ուսումնասիրության մեջ Ալիշանը մանրամասնորեն նկարագրում է Մեծ Հայքի տասնհինգ նահանգներից («աշխարհներից») մեկը՝ Արցախը, նրա տասներեք գավառները՝ Կողթը, Բերդաձորը, Վայկունիքը, Միսական ոստանը, Մեծկունիքը, Մեծիրանքը, Փառնեսը, Մյուս Հաբանդը, Պարզկանքը, Մուխանքը, Հարճլանքը, Պիանքը, Քուստակը²⁰: Գիտնականը, մասնավորապես, անդրադառնում է Արցախի քաղաքներին, ավաններին, լեռներին, դաշտերին, գետերին, բերդերին, եկեղեցիներին և այլն՝ ամենուրեք Արցախի աշխարհագրության նկարագրությունը սերտորեն միահյուսելով հայ ժողովրդի պատմության հետ:

Առանձին դեպքերում նա իրեն հատուկ գիտական մեծ բարեխղճությամբ կարծիքը հայտնում է վերապահությամբ, օրինակ՝ «ինձ թվում է, ես կարծում եմ, ես գտնում եմ, իմ իմացածի համաձայն, ես չգիտեմ» և այլն:

Ալիշանի մյուս աշխարհագրական աշխատությունների նման «Արցախն» էլ չի կորցրել իր ճանաչողական արժեքն ու սկզբնաղբ-

²⁰ Ղ. Ալիշան, Արցախ, Երևան, 1993, էջ 3:

յուրի դերը: Նրա աշխարհագրական հետազոտությունները փաստական հարուստ նյութ են պարունակում Հայաստանի աշխարհագրության և հայ ժողովրդի պատմական անցյալի գրեթե բոլոր շրջանների ու տարբեր բնագավառների վերաբերյալ: Օրինակ՝ «Արցախ» աշխատության միջոցով կարելի է իմանալ, թե մինչև 19-րդ դարի վերջերը Արցախի նահանգում ինչ բնակավայրեր, բերդեր, եկեղեցիներ, պատմական հուշարձաններ են պահպանվել, որոնք են վերացել երկրի երեսից, ինչպես և ինչու:

Եվրոպական մի շարք գիտական ընկերությունների անդամ, միջազգային ճանաչման արժանացած Ալիշանը թողել է նաև բազմաթիվ այլ հայագիտական գործեր՝ նվիրված հին Հայաստանի պատմության ու մշակույթի այլևայլ հարցերին, հրատարակել է միջնադարյան պատմիչների մի շարք ստեղծագործություններ:

Ղևոնդ Ալիշանը, ուսումնասիրելով նաև հայկական գաղթավայրերի պատմությունը, գրել է «Կամենից», «Հայ-Վենետ» աշխատությունները: Ալիշանն անդրադարձել է կառավարման ձևերի վերլուծությանը՝ տեղ տալով լուսավորյալ միապետությանը: Իր փիլիսոփայական հայացքներով օբյեկտիվ իդեալիստ էր, գտնում էր, որ բանականությունից դուրս գտնվում է ինքնաբավ սուբստանց, Աստված ստեղծել է ամեն ինչ, բայց թողել է, որ աշխարհը զարգանա ինքն իրեն:

Կյանքի վերջին տարիներին Ալիշանը հրատարակության պատրաստեց «Հայապատում» երկհատոր ծավալուն աշխատությունը, որը խոշոր ներդրում է հայ միջնադարյան պատմագրության հետազոտության բնագավառում²¹:

1881 թ. Վենետիկում կայացած աշխարհագրագետների համաշխարհային երրորդ կոնգրեսում Ալիշանը կարողացել է «Հայկական աշխարհագիտություն» թեմայով զեկուցում, որտեղ, ի թիվս Հայաստանի աշխարհագրության հետ առնչվող բազում հարցերի, պաշտպանել է այդ տեսությունը:

²¹ Հայոց պատմություն, խմբ. Հր. Ռ. Սիմոնյանի, Երևան, 2012, էջ 482:

Ալիշանը կարևոր ներդրում ունի մի շարք հայ պատմիչների գործերի գիտական հրատարակման բնագավառում: Դրանցից են՝ Կիրակոս Գանձակեցու «Համառոտ պատմութիւն ի սրբոյն Գրիգորէ» (1865), Լաբուրնա Ասորի մատենագրի «Թուղթ Արգարու...», Խոսրով Անձևացու «Մեկնութիւն աղօթից պատարագին» (1869), «Կամենից, Տարեգիրք հայոց Լեհաստանի և Ռումենիոյ» (1896) երկերը, «Սովերք հայկականք» մատենաշարի 22 հատորիկները (1853-1861), Սմբատ Գունդստաբլի «Անգիսք Անտիոքայ» (հայերեն բնագրով և ֆրանսերեն թարգմանությամբ, 1876 թ.) և այլն:

Ուշագրավ է Ալիշանի «Հայբուսակ կամ հայկական բուսաբանութիւն» (1895) աշխատությունը, ուր հավաքել, դաստիարակել և գիտականորեն բնութագրել է հայկական բնաշխարհի ավելի քան 3400 բույսեր ու ծաղկատեսակներ:

Ուշադրության է արժանի նաև Ալիշանի «Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց» (1895թ.) աշխատությունը, որում գիտնականը քննել է հայկական հեթանոսության ծագումնաբանական ակունքները:

Ընդհանուր թվով Ղևոնդ Ալիշանը թողեց 45 հատոր աշխատանք²²:

Հայոց պատմության, լեզվի, մատենագրության, Հայաստանի պատմական աշխարհագրության հետազոտության ասպարեզում ամենակարևոր ձեռքբերումները երկար ժամանակ կապված էին Մխիթարյան միաբանության արդյունավետ գործունեության հետ: Ալիշանը Մխիթարյանների մեջ եզակի դեմքերից էր, ով Մ. Չամչյանի և Արսեն Բագրատունուց հետո արժանացել է իր հուշասենյակն ունենալու պատվին: Իր գիտական հսկայական ժառանգությամբ Ալիշանը մեծապես նպաստել է հայրենական գիտության զարգացմանը: Նրա գործերից շատերն այսօր էլ ունեն ճանաչողական արժեք և սկզբնաղբյուրի նշանակություն:

²² Ա. Մելքոնյան, Հայոց պատմություն: Դասախոսությունների ձեռնարկ, Երևան, 1998, էջ 165:

Լավ քաղաքացի լինելու համար լավ պետք է ճանաչել հայրենիքը, քննել, ուսումնասիրել նրա անցյալն ու ներկան: Այս համոզմունքով էլ Ալիշանը գրել է Հայաստանի պատմությանը և աշխարհագրությանը նվիրված իր նշանավոր երկերը, որոնք ոչ նվազ, քան «Նահապետի երգերը», տոգորված են ջերմ հայրենասիրությամբ:

Խոսելով ազգային-պատմական հուշարձանների մասին՝ Ալիշանը նկատում է, «Ո՛հ, երբ այսպիսի հիշատակաց վրա շարժի գրիչն չի կրնար գոնե կարծեր չցատքեցնել. պատմիչն հանկարծ վիպասան կըլլա, բանադատն՝ բանաստեղծ...»²³: Եվ իրոք, հայագիտական իր աշխատություններում պատմիչ ու «բանադատ» Ալիշանը երբեմն դառնում է վիպասան ու բանաստեղծ:

Անկասկած, Ալիշանի գրական ժառանգության ստվարածավալ հատորների ժամանակակից ընթերցողը հեշտությամբ կնկատի վանական միջավայրի և կրոնական աշխարհայացքի դրոշմը նրա ինչպես հայագիտական, այնպես էլ գեղարվեստական երկերի վրա: Ալիշանը կանգնած էր իդեալիստական պատմահայեցողության դիրքերի վրա: Բավական է ասել, որ հայ ժողովրդի պետական անկախության կորուստը նա լրջորեն համարում էր «աստվածային պատիժ» և հավատում էր, որ «աստծու կամքով» կործանված հայ պետականությունը նույն «աստծու կամքով» էլ կվերականգնվի: Վճռականորեն մերժելով Ալիշանի աշխարհայացքի ռեակցիոն կողմերը՝ հայ ժողովուրդը ըստ արժանվույն գնահատում է ականավոր գիտնական բանաստեղծի խոշոր ավանդը, որ թողել է նա մեր կուլտուրայի գանձարանում:

Այսօր էլ սերունդները բարձր են գնահատում Ղևոնդ Ալիշանի վաստակն ու անմնացորդ նվիրումը հայ մշակույթին և գիտությանը:

²³ Մ. Դումիկյան, Ղ. Ալիշան. կենսագրություն և բանաստեղծություններ, ՏԵՍ՝ <https://lib.amedu.am/resource/425>



ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐԳՍՅԱՆ

Խ. Արևիկյանի անվան ՀՊՄՀ
բանասիրական ֆակուլտետի մագիստրոս

ԱԼԻՇԱՆԸ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՄԱՍԻՆ

Պատմահայր Մովսես Խորենացու կյանքի ու գործունեության, «Հայոց պատմություն» աշխատության և մյուս արժեքավոր գործերի մասին հարյուրավոր հետազոտություններ են հայտնի: Նրա մասին իրենց հեղինակավոր կարծիքն են հայտնել ինչպես հայ, այնպես էլ օտարազգի բազմաթիվ գիտնականներ: Ապրելով և գործունեություն ծավալելով 5-րդ դարում՝ Մովսես Խորենացին այնպիսի ժառանգություն թողեց, ի դեմս «Հայոց պատմություն» աշխատության, որը դարեր շարունակ ծառայեց որպես հայ ժողովրդի ծննդաբանության, պատմական ընթացքի ամբողջական ու միակ փաստացի աղբյուր և դասագիրք:

19-րդ դարի հայ ականավոր բանաստեղծ, տեղագիր-պատմաբան, թարգմանիչ ու հրապարակախոս, մեծ գիտնական Ղևոնդ Ալիշանը ստեղծագործական ողջ գործունեության ընթացքում հիացմունքով է խոսել Մովսես Խորենացու մասին՝ նրան նվիրելով երեք ընդգրկուն հոդված, իսկ իր մի շարք աշխատություններում բազմիցս հիշատակել է պատմահոր անունը՝ չզլանալով գովասանքի խոսքերով փառաբանել նրան: Ալիշանի պոեզիան սնող հիմնական ակունքներից մեկը հայկական ժողովրդական բանահյուսությունն է, իսկ ով, եթե ոչ Խորենացին, պետք է սկզբնաղբյուր լիներ նրա համար: Ալիշան-հայագետի դերը Մովսես Խորենացուն գնահատելու առումով անգնահատելի է: Նրա ողջ գրական ժառանգության մեջ Խորենացուն նվիրված

հատվածների ու գրվածքների խորագնին ուսումնասիրությունը բազմահատոր գիտական աշխատության նյութ կարող է դառնալ, այնպես որ սույն հոդվածի շրջանակում կանդրադառնանք միայն երեք-չորս աշխատության քննարկմանը:

18-րդ դարի վերջերից սկսած Պատմահայրը ենթարկվում էր եվրոպացի տարբեր հայագետների քննադատությանը, որոնք փորձում էին ապացուցել, թե Խորենացին դիտմամբ կեղծել է իր օգտագործած աղբյուրները, այսինքն՝ հորինել է գոյություն չունեցող հնամենի աղբյուրներ՝ իր «Պատմությունը» «ավելի հավաստի ներկայացնելու համար, յուրացրել է իրենից առաջ եղած հայ պատմիչների ամբողջ գլուխներ և, հյուսելով իր «Պատմության» մեջ, ներկայացրել է որպես սեփականը: «Խորենացին դիտավորյալ կերպով լռության է մատնել, կամ փոխված է ներկայացրել պատմական մի շարք անձանց գործն ու հասարակական-քաղաքական նշանավոր իրադարձությունները, հետևաբար և նրա երկասիրության գիտական հավաստիությունը լուրջ կասկած է ներշնչում»¹: Հայ բանասերներից Ղևոնդ Ալիշանն առաջիններից մեկն էր, եթե ոչ առաջինը, որ իր գործունեությամբ ձայն բարձրացրեց՝ ի պաշտպանություն Մովսես Խորենացու: «Մովսես Խորենացի և իր Հայոց Պատմութիւնը», «Մովսես Քերթոզահայր հայոց», «Յաղագս Մովսիսի Խորենացոյ Դ. անուանեալ գրոցն պատմութեան» և այլ հոդվածներով Ալիշանը՝ որպես հմուտ բանասեր, հիմնավորեց Խորենացու մեծ դերը հայ ժողովրդի մտավոր կյանքում: Վենետիկի Մխիթարյան միաբանության հարուստ մատենադարանում ջանասիրաբար աշխատելով՝ Ալիշանը կարողացել է մեկը մյուսից ուշագրավ հոդվածներ գրել՝ նվիրված Պատմահորը: Այս հոդվածներում հայոց լեզվի հարուստ բառապաշարով՝ մակդիրներով, համեմատություններով լի տողեր է նվիրել Ոսկեդարի հայ նշանավոր պատմիչին:

¹ Ղևոնդ Ալիշան, Երկեր, Երևան, 1981, էջ 10:

«Բազմավեպ» պարբերականի 1847 թ. № 10-ում առաջին անգամ տպագրված «Մովսես Խորենացի և իր Հայոց Պատմութիւնը» հոդվածի առաջին պարբերությունն ընթերցելիս արդեն կարելի է պատկերացում կազմել Ալիշանի՝ դեպի Խորենացին տաժաժ խորը համակրանքի մասին: «Հայաստանի երկու հազար տարուան հիսսած ուսումնական պսակին ամենէն պայծառ ծաղիկն է, այն սակաւաւոր անձանց մէկն է աս վարդապետը, որ թէ՛ իրենց անարատ վարքովը, թէ՛ ազգին բարերար ըլլալով և թէ՛ օտարաց օգտակար, արժանապէս Մեծ կ'ըսուին երկրիս վրայ ալ, երկինքն ալ»²: Միայն մեկ նախադասությամբ Ալիշանը ամփոփում է Խորենացու մասին իր կարծիքը՝ հայ ազգի պարտքը համարելով ծանոթ լինել Խորենացու վարքին ու գործունեությանը, քանզի նա արժանապէս է համարվել «հայր եկեղեցւոյ և հայր դպրութեանց, սուրբ և մարգարէ, պատմաբան, հնախոյզ, գլուխ բանասիրաց, պերճախօս, քերական, քերդոդահայր, աշխարհագիր, թարգման, դպրապետ և այլն»³, իր այս ոճը համարելով պարզ, որը չի ներում գովեստի խոսքեր շոյալել այդքան գործեր կատարած մարդուն: «Մովսես Քերթոդահայր հայոց» հոդվածը, որն առաջին անգամ տպագրվել է «Բազմավեպ» պարբերականի 1849 թ. № 4-ում, Ալիշանը Մովսես Խորենացուն համեմատում է Մովսես մարգարեի հետ. «Մէկ Մովսէս մը, որ Հրէից Մովսէսին նման, իր ազգին ընդհանուր և ամենաարուեստ վարդապետն է, ինքն ըլլալով պատմահարց ակնադրիւր, ինքն բանաստեղծութեան վառիչ, ինքն ճարտասանութեան օրինակատու, ինքն աշխարհագրաց նախաշաւիդ, ինքն քերականաց առաջնորդ, ինքն թարգմանչաց գահագլուխ, ինքն եկեղեցական եղանակաց երաժշտապետ, ինքն բանասիրաց մեջ ամենահմուտ, ինքն մեր վարդապետաց վարդապետն, ինքն հնագէտ նաև մարգարէ, և այս ամէն անուններէ վեր յատուկ կոչմամբ ինքն Քերթոդահայր Հայոց»⁴:

² «Բազմավեպ», Վենետիկ, 1847, թ. 10, էջ 4:

³ Նույն տեղում:

⁴ «Բազմավեպ», Վենետիկ, 1849, թ. 4, էջ 3:

«Մովսէս Խորենացի և իր Հայոց Պատմութիւնը» հոդվածի շարունակության մեջ Ալիշանը ներկայացնում է Պատմահոր կենսագրության կարևորագույն դրվագները՝ ճանապարհորդություններով, արկածներով, գրկանքներով, կորուստներով ու ձեռքբերումներով լի: Հատվածաբար մեջբերումներ են արված նաև «Հայոց պատմություն» աշխատությունից, որտեղ Խորենացին իր կյանքի վերաբերյալ մանրամասներ է ներկայացրել: Ղևոնդ Ալիշանն ընդգծում է, որ Խորենացին առաջին անգամ «հայերեն լեզուն քերականական ու ճարտասանական կանոնաց վրայ առաւ, անոր համար ալ Քերդողահայր ըսվեցաւ»⁵: «Մովսէս Քերթողահայր հայոց» հոդվածում Ալիշանը ավելի խոր և հանգամանակից է բացատրում, թե ինչու է Մովսէս Խորենացին կոչվել քերթողահայր. միայն նրա համար չէ, որ «հին քերականութիւն գրեր է, կամ բացատրեր է միայն անոր համար չըկարծուիր, որ Քերթողահայր ըսուի, հապա ավելի բանաստեղծական կամ երգահան գրուածոց համար, և թե այս մտքով այս անուանս արժանատր է, վկայ ըլլան մեզի իր ծանօթ սքանչելի շարականներն, որոնց չափական շենքն ալ, իմաստն ալ, եղանակներն ալ՝ կը ցուցնեն, թէ շատ գերազանց ոգի և ճաշակ ունի եղեր մեր Խորենացին»⁶: Ալիշանը իր փաստարկները ավարտին հասցնելու համար վկայակոչում է «Հայոց պատմության» Գ գրքի վերջում տեղադրված «Ողբ»-ը՝ ցավով արձանագրելով, որ շատ երգեր ու չափական տաղեր էլ կորել են դարերի խորքում: Ալիշանը մեջբերում է Պատմահոր խոսքերը, ասված խորը կսկիծով, որոնք ուղղված էին Սահակ Պարթևին և Մեսրոպ Մաշտոցին. «Ո՛վ այսուհետև զմերս յարգեսցէ զուսումն, ո՛վ ուրախացի ընդ յառաջադիմութիւնս, մասամբ ինչ յաղթահարեալ. ո՛վ զմեզ սփոփեսցէ զովելով»⁷:

1848 թ. «Բազմավեպ» հանդեսի №16-ում «Նահապետ» ստորագրությամբ հրատարակվում է «Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ» բանաստեղծությունը, որտեղ, Խորենացու «Ողբ»-ի նմանությամբ Ալիշանը ցավում է հայ-

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում:

⁷ Մ. Խորենացի, Պատմութիւն հայոց, Վենետիկ, 1841, էջ 198:

րենիքի ճակատագրի համար: Բանաստեղծության մեջ հեղինակը կրկին անմասն չի մնում Պատմահորը հիշատակելուց, այն էլ մի քանի անգամ.

Այսօր քարշեմ ու դուրս բերեմ զիմ ցաւն հազար,
Թող 'ի Տարօն հասնին ձայներս, սարքըն պատտին,
Մեղրայ գետոյն ալիքն անոյշ լեղի կտրին,
Հետ Խորօնից քերթողահօր մեծ պատմագրին
Թող կիսատ շունչքս ողբակցելով գնան ոլորին...⁸

Ալիշանն իրեն ողբակից է հրավիրում Մովսէս Խորենացուն, որ գա, իր աչքով տեսնի Հայաստան աշխարհի տխուր ու ողբալի վիճակը.

Դու այլ զարթիր ու հետ արե 'կ մերըդ Մովսէս,
Որ ողբակից հրաւիրէիր ըզմարգարէս.
Տե 'ս, ա՛յս երկիրն է Հայկազանց ւ Արշակունեաց
Որոց փառօք լըցեր ըզգիրս քոց պատմութեանց.
Այս ա՛յն երկիրն է Հայկազանց և Արշակունյաց
Որոց փառօք լըցեր ըզգիրըս պատմութեանց,
Այս ա՛յն երկիրն է Տիգրանին և Արամայ,
Որ բռնէին ըզբռնաւորքըն զինչ տըղայ.
Այս ա՛յն երկիր մեծ Տրդատայ՝ քաջ Վարդանին,
Ում նախանձէր Պարսիկն, Հռոմն ու Ստրին.
Եվ ա՛յս երկիր Լուսաւորչին ու Ներսիսի.
Ա՛յս Սահակայ, Մեսրոպայ, քո՞ իսկ Մովսիսի...⁹

Բանաստեղծը սրտի մրմուռը, բողոքի ձայնը, ողջ հիասթափությունն ու զայրույթը մտերմաբար կիսում է Խորենացու հետ՝ բացականչելով.

Արե՛կ արե՛կ հայր իմ ողբոցըս հա՛յր Մովսէս,
Իմ սիրտն այլ չի՛ երթալ, ասա դու քաջ գիտես...¹⁰

«Մովսէս Քերթողահայր հայոց» հոդվածի վերջում Ալիշանը մեջբերում է մի հուզիչ պատմություն՝ Գյուլտ կաթողիկոսի և արդեն զա-

⁸ «Բազմավեպ», Վենետիկ, 1848, թ. 16, էջ 2:

⁹ Նույն տեղում, էջ 3:

¹⁰ Նույն տեղում, էջ 5:

ռամյալ Մովսես Խորենացու հանդիպումից: Պատմահայրը աստվածային ձայնով երգելով «Երբզեմզեմըք քեզ ը գերզս»՝ գերում է կաթողիկոսին՝ ստիպելով Օշականում հավաքված հոծ բազմությանը երկար ժամանակ հմայքից քարացած կանգնել: Այս դեպքից հետո Պատմահայրը ձեռնադրվում է Բագրևանդի արքեպիսկոպոս: Հենց իր քերթողական, բանաստեղծական արվեստի շնորհիվ է, որ նա կոչվեց Քերթողահայր: Այս սրտառուչ հուշագրությունը առաջին անգամ գրել և հրատարակել է հենց Ղևոնդ Ալիշանը:

«Մովսես Խորենացի և իր Հայոց Պատմութիւնը» հոդվածում Ալիշանը խոսում է նաև Մովսես Խորենացու մարդկային հատկանիշների մասին՝ նշելով, որ նա չէր մերժում ոչ մեկին՝ տեղեկություններ տրամադրելու, որևէ հարցով օգնելու հարցում, յուրաքանչյուր նյութ սիրով տրամադրելով բոլորին: Խորենացին մինչև խոր ծերություն հոգևոր և ուսումնական գործունեությամբ լուսավորում էր իր ժողովրդին:

Բացի ինքնուրույն գործեր ստեղծելը, Պատմահայրը թարգմանական գործունեությամբ էր զբաղվում: Նրա գրվածքների, թարգմանությունների մեծ մասը իշխանների կամ աշակերտների խնդրանքով են գրված: Ալիշանը ցավով է նշում այն փաստը, որ Խորենացու գործերը չեն ամփոփվել ընդհանուր գրքում, իսկ դրանցից շատերը դեռ հայտնաբերված չեն, չնայած նրան, որ նրա գործերը դարեր շարունակ եղել են հայ ժողովրդի պատմության միակ աղբյուրը. «Արժան է, որ Հայաստան նոր երախտագիտութեամբ մը նայի աս մարդուն վրայ, որ ճշմարտապէս իրեն հայր եղաւ, և ազատեց իրեն անունը և փառքը ժամանակին գրկանքէն, ծուռ կարծիքներու զենքերէն, և արևելեան աննշան ազգաց կարգէն»¹¹:

Շուրջ հազար չորս հարյուր տարի Մովսես Խորենացու երկերը գիտական ուշադրության չէին արժանանում: 1843 թ. Վենետիկում տպագրվում է «Մովսիսի Խորենացոյ մատենագրութիւնք» խորագրով ժողովածուն, որում զետեղված գործերը թվարկում է Ղևոնդ Ալիշանը՝ ցավով նշելով, որ դրանցից շատերը հակասությունների ալիք են բարձրացրել և ու-

¹¹ «Բազմավէպ», Վենետիկ, 1847, թ. 10, էջ 10:

րիշներին են վերագրվում: «Աս գրուածներս են, Պիտոյից գիրքը՝ որ իր Թեոդորոս աշակերտին համար գրեց, ճարտասանական գրուածներ և օրինակներ՝ Թեովն աղեքսանդրացի հռետորին հետևելով, շատ բան ալ քովէն շինած. կորսուած յոյն հեղինակներու վկայութիւններ ալ կբերէ. թե՛ պէտ գուրցուածքը և միտքը խրթին, բայց շատ սքանչելի և յստակ դարձուածքներ ունի: Քերականական գրուածքներու հատուածներ, որոնցմէ ոմանք ուրիշ Մովսիսի մը գրուածք կկարծուին»:¹² Թվարկելով Խորենացուն վերագրվող մյուս աշխատությունները ևս՝ Հռիփսիմյանների ճամփորդության մասին պատմությունը, նրանց մասին ճառը, Վարդավառի ճառը, Սուրբ Աստվածածնի ազգատոհմի պատմությունը, շարականներ, աղոթքներ և այլն, Ալիշանը հակադարձում է ֆրանսիացի հայագետ Սեն-Մարտենին, որը 19-րդ դարի սկզբին բազմաթիվ քննադատական հոդվածներ էր գրել Մովսես Խորենացու այս գործերի մասին՝ փորձելով ապացուցել, թե այդ գրվածքները Խորենացու ապրած ժամանակներից հետո են գրվել:

Ղևոնդ Ալիշանը բարձր գնահատական է տվել Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» աշխատությանը՝ այն անվանելով «անգին գանձ». «Անով 1400 տարուընէ՛ ի վեր Հայք իրենց ազգը և փառքը կը՝ ճանչնան. ան է բոլոր աշխարհիս դիմաց մեր հին ազնուականութեան վկայագիրը, որ ուրիշ ազգ մը չկրնար յափշտակել կամ ուրանալ. անով կրնայ Հայաստան պատմագրութեան մուսային իմացընել, թե կրնայ առանց առասպելաբանութեան հին պատմութիւն մը գրուիլ, անով Յունաց և Հռոմայեցոյ պատմիչները քանի մը տեղ սրբագրել և տեղ տեղ հնութե կամ ընդհանուր պատմութեան վրայ նոր լոյս ծագել, որ ուրիշ տեղէն անկարելի է առնելը»¹³:

Ալիշանն իր հոդվածում թվարկելով Խորենացու Պատմության աղբյուրները՝ մատնանշում է, որ այսքան խորը գիտելիքներով և ուսումնասիրությամբ տարված պատմիչը չէր գրի ոչ ճշմարտացի պատմություն: Կր-

¹² Նույն տեղում, էջ 6:

¹³ Նույն տեղում, էջ 7:

կին հիշելով մի քանի գիտնականների, որոնք կասկածներով են խոսել «Հայոց պատմության» ճշմարտացիության մասին, Ալիշանը մի քանի կետով հակառակն է պնդում՝ վերջում ընդգծելով, թե որն է այդ հակասությունների իրական պատճառը. «Խորենացոյն գլխաւոր պակսութիւնն է իրացընէ՝ ժամանակագրութիւն չընելը, որ այնպիսի գործքի մը խիստ հարկաւոր էր և առանց անոր շփոթութիւններ կը ծագին. ինքն որ այնպէս մտադրութեամբ քններ էր Կոնստանտնուպոլս, Ափրիկանոսը, Յովսէփոսը, Եւսեբիոսը, Աստուածաշունչը և Աստուածաշնչին վրայ գրած մեկնութիւնները և իր պատմութեան սկիզբը զանազան համեմատութիւններ կընէ, ինչու պատմութեան մէջ ալ չխառնեց՝ չգիտցուի. թերևս միտք ունէր գրելու, կամ թէ գրած ալ ըլլայ ժամանակագրական ցանկ մը բոլոր պատմութե ետեւն»¹⁴: Այս պակասության հետ մեկտեղ Ալիշանը նշում է այն հատկությունները, որոնք Խորենացու Պատմությունը ճշմարտացի են դարձնում՝ արևելյան անունների հիշատակումը, անկողմնակալ վերաբերմունքը, արդարության վերհանումը, ազգային և հին սովորությունների մասին տեղեկությունները՝ համեմատելով նրան Հոմերոսի, Հերոդոտոսի, Պլատոնի նման հանճարների հետ: «Արժան է, որ Հայաստան նոր երախտագիտութեամբ մը նայի աս մարդուն վրայ, որ ճշմարտապէս իրեն հայր եղաւ և ազատեց իրեն անունը և փառքը ժամանակին զրկանքէն, ծուր կարծիքներու զենքերէն և արևելեան աննշան ազգաց կարգէն»¹⁵:

Բացի սույն հոդվածի սկզբում նշված գործերը, որոնք Ղևոնդ Ալիշանը վերագրել է Մովսես Խորենացուն, իր մյուս բոլոր աշխատություններում և հոդվածներում ևս, որևէ փաստ, տեղեկություն հաղորդելիս պարտադիր ընդգծել է, որ իրեն մտահոգողը Պատմահայրն է, նրա օրինակով է ինքը ձեռնարկել այս կամ այս գործը, կամ էլ օգտվել է հենց նրա թողած ժառանգությունից:

«Շնորհալի եւ պարագայ իւր» աշխատության առաջաբանում պատմելով, թե ինչու՞ է գրում աշխատություն Ներսէս Շնորհալու մասին, Ալի-

¹⁴ Նույն տեղում, էջ 8:

¹⁵ Նույն տեղում:

շանը մեջքերում է Մովսես Խորենացու խոսքերը. «Եւ հօս ալ կը ստիպուիմք մեր բազմերախտ Պատմահօր, Խորենացոյ անմոռանալի իմաստն՝ անգամ մ'ալ կրկնել յունկն և՛ ի սիրտ հայասիրաց և հայատեցից, եթե գտուին. «Զի թէպէտ և եմք ածու փոքր, և թուով յոյժ ընդ փոքունս սահմանեալ, և զօրութեամբ տկար, և ընդ այլոց յովմ անգամ՝ նուաճեալ թագաւորութեամբ, սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ և՛ իմերում աշխարհիս, և արժանի գրոց յիշատակի»»¹⁶:

«Արշալոյս» գրքի հիմնական աղբյուրը, որը նվիրված է քրիստոնեության տարածմանը և որպէս պետական կրոն ընդունմանը, կրկին Մովսես Խորենացին է: Խոսելով Թադևոս Առաքյալի աշակերտների մասին, որոնք տարածում էին քրիստոնեությունը, Ալիշանը գրում է. «...գոր յիշէ Խորենացի, «Բազում «վկայեալս և ի մերում աշխարհիս¹⁷»: Նույն գրքում, հիշատակելով քրիստոնեության տարածումը, Արտաշէս թագավորի ժամանակներում ապրած Վրոյնի և Վնոյնի մասին խոսելիս, Ալիշանը կրկին հիշում է Պատմահօրը. «և անշուշտ առաջինն է մեր հին բանաստեղծն Վրոյր կոչուած առ Խորենացոյ¹⁸»: Խոսելով Ոսկեանց և Սուքիասանց լինել-չլինելու մասին՝ Ալիշանը մանրակրկիտ վերլուծությամբ կրկին հիշատակում է Խորենացուն. «...գոր ոչ միայն շատ Սրբոց նման Յայսմաւորք պատմեն, այլ Յայսմաւորաց աղբիւր եղած վկայաբանութիւնք ևս, որոց մին թուի Խորենացվոյ գրչէն ելած, որ իր Հայոց պատմութեան մեջ չի յիշեր այս Սուրբերս, և Թադևոսի և Սանդրխտոյ նշանավոր դէպքին հազիւ թե ակնարկէ..., անոր յիշած աղբիւրն է հրոչակաւորն Տատիանոս¹⁹»: Գրիգոր Լուսավորչի գործերի մասին խոսելիս Ալիշանը կրկին դիմում է Խորենացուն. «...արժան է կրկնել մեր մեծ պատմչին (Խորենացոյն), ծանրակշիռ տեսութեամբ խօսքը. որ՝ զԼուսաւորիչ նախակարգէ «միայն վկա-

¹⁶ Ղ. Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 9:

¹⁷ Ղ. Ալիշան, Արշալոյս, Վենետիկ, 1865, էջ 26:

¹⁸ Նույն տեղում, էջ 68:

¹⁹ Նույն տեղում, էջ 69:

յութեան «և առաքելութեանն վիճակաւ²⁰»: Գայանէ և Հոփսիսմէ կոյսերի և նրանց յոթանասունից ավելի ընկերների ու հոգևորականների երկրերի թափառելու պատմության մեջ Ալիշանը, որերորդ անգամ մեջբերելով Խորենացուն, նրան այս անգամ որակում է «բազմաքրքիր». «Այս այցելութիւնը կամ գալստեան դէպքը՝ մեր բազմաքրքիր Խորենացին գտած և գրած է առանձին, որ պէսպէս վերնագրի ի Ճառնստիրս, որպէս այս. «Յաղագս Հոփսիսմեանցն, ի ճշմարիտ պատմագրացն Յունաց գտեալ Մովսիսի Խորենացոյ»»²¹:

Իհարկէ, մեկ հոդվածի շրջանակում չենք կարող մեջբերել Ղևոնդ Ալիշանի բոլոր խոսքերը Մովսէս Խորենացու մասին: Ինչպէս վերևում արդէն նշել ենք, Ալիշանը ժլատություն չի ցուցաբերել Պատմահոր հասցեին գովեստի խոսքեր շոայլելու գործում՝ ամեն անգամ նրան հիշատակելիս մի նոր որակավորում տալով նրան:

«Բազմաքրքիր Խորենացի», «մեր մեծ պատմչին ծանրակշիռ տեսությամբ», «Բազմերախտ Պատմահոր անմոռանալի իմաստնությամբ», «Ամենախույզ Խորենացին», «Խորենացոյ ճիշտ հաշուով», «պատմահայր», «քերթողահայր», «հայր եկեղեցվո և հայր դպրությանց», «սուրբ և մարգարե», «պատմաբան», «հնախույզ», «գլուխ բանասիրաց», «պերճախոս», «քերական», «աշխարհագիր», «թարգմանիչ», «դպրապետ», «ամենաարվեստ վարդապետ», «պատմահարց ակնադրյոր», «բանաստեղծության վառիչ», «ճարտասանության օրինակատու», «աշխարհագրաց նախաշավիղ», «քերականաց առաջնորդ», «թարգմանչաց գահագլուխ», «եկեղեցական եղանակաց երաժշտապետ», «բանասիրաց մեջ ամենահմուտ», «մեր վարդապետաց վարդապետն», «հնագետ նաև մարգարե» և այլ այսպիսի որակումները չնչին տոկոսն են կազմում Ղևոնդ Ալիշանի՝ Մովսէս Խորենացի պատմիչի և մարդու մասին պատկերացումների:

²⁰ Նույն տեղում, էջ 105:

²¹ Նույն տեղում, էջ 112:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	4
ПРЕДИСЛОВИЕ	6
FOREWORD	8
<i>ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ</i>	
ՉԱՓԱԾՈ ՊԱՏՄԱԿԱՆ ՔԵՐԹՎԱԾՆԵՐԸ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ «ՀԱՅԱՊԱՏՈՒՄ» ՀԱՏՈՐՈՒՄ	10
<i>ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆ</i>	
ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԸ ԵՎ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՑԱՆ ՊՈԵԶԻԱՆ	25
<i>ԱՇՈՏ ԳԱԼՍՅԱՆ</i>	
ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ ԲՆՈՐԸ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԵՐՈՒՄ	39
<i>ԼԻԼԻԹ ՀՈՎՍԵՓՅԱՆ</i>	
ՍՅՈՒՆԻՔԻ ԾՂՈՒԿ ԳԱՎԱՌԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԴԵՐՆ ԸՍՏ ԱԼԻՇԱՆԻ «ՄԻՍԱԿԱՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ	48
<i>ՌՈՒԶԱՆ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ</i>	
Ղ.ԱԼԻՇԱՆԻ «ՀԱՅՈՑ ԵՐԳՔ ՌԱՄԿԱԿԱՆՔ» ԱՆԳԼԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ	65

ԳԱՅԱՆԵ ՄԱՐԴՅԱՆ

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԸ ՀԱՅ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԱՍՏՎԱԾՆԵՐԻ ԴԵՐԻ
ՄԵԿՆԱԲԱՆ77

ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԸ
«ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ»-Ի ԷԶԵՐՈՒՄ94

ԶԻՆԱԲԴԱ ԲԱԼԱՅԱՆ

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԸ ԵՎ ԱՐՑԱԽԸ..... 107

ՆՈՒՆԵ ՄԱՐՈՒՄՅԱՆ

ՎԱՐԴԳԵՍ ՄԱՅԱՐՅԱՆ

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ..... 121

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐԳՍՅԱՆ

ԱԼԻՇԱՆԸ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՄԱՍԻՆ 136

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԸ ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

(Հոդվածների ժողովածու՝ նվիրված Ղևոնդ Ալիշանի
ծննդյան 200-ամյա հոբելյանին)

Ստորագրված է տպագրության 11.05.2020:
Չափսը՝ 60x84 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ օֆսեթ: 9,25 տպ. մամուլ:

«ԳԵՎՈՐԳ - ԶՐԱՅՐ» ՍՊԸ



Հրատարակչություն
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ (011) - 52.79.74, 055-52-79-74
Էլ. փոստ lusakn@rambler.ru

